1098. 4 մ^3 օդում 15 ^{0}C-ում կա 39,936 գ ջրի գոլորշի: Որքա՞ն է օդի հարաբերական խոնավությունը, եթե 15 ^{0}C-ում ջրի հագեցած գոլորշու խտությունը 12,8 գ/մ^3 է:

1099. 2 մմ ներքին տրամագիծ ունեցող ուղղաձիգ ապակե խողովակից պոկվել են ջրի կաթիլներ: Քանի՞ կաթիլ է առաջացել, եթե արտահոսել է 2,355 գ ջուր: Ջրի մակերևութային լարվածության գործակիցը 0,075 Ն/մ է:

1100. 0,5 մմ տրամագիծ ունեցող մազական խողովակով հեղուկը բարձրացավ 11 մմ: Որքա՞ն է այդ հեղուկի խտությունը, եթե նրա մակերևութային լարվածության գործակիցը 0,022 Ն/մ է:

1101. Քանի՞ միլիմետր կբարձրանա ջուրն իրարից 0,2 մմ հեռավորությամբ գտնվող մեծ չափերով զուգահեռ թիթեղների միջև: Ջրի մակերևութային լարվածության գործակիցը 0,075 Ն/մ է, խտությունը՝ 1000 կգ/մ^3:

www.atc.am

8.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱԽՍԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1102. Վառարանը վառելուց հետո 166 մ^3 ծավալով, պատուհանը բաց չորանոցում ջերմաստիճանը փոխվեց 17 ^{0}C-ից մինչև 127 ^{0}C: Ճնշումը 100 կՊա է, օդի մոլային զանգվածը՝ 0,029 կգ/մոլ:

1) Որքա՞ն զանգվածով օդ դուրս եկավ չորանոցից:
2) Որքանո՞վ փոխվեց օդի ներքին էներգիան չորանոցում:

1103. Գլանում առանց շփման սահող մխոցի տակ գազն իզոբար տաքացնում են 27 ^{0}C-ից մինչև 127 ^{0}C ջերմաստիճանը: Գազի սկզբնական ծավալը 3 մ^3 է, իսկ ճնշումը՝ 10^3 Պա:

1) Որքա՞ն է գազի վերջնական ծավալը:
2) Որքա՞ն աշխատանք է կատարում գազն իզոբար ընդարձակվելիս:

1104. $2\cdot10^3$ Ջ/կգ·Կ տեսակարար ջերմունակություն ունեցող երկնաքարի արագությունը շարժման ընթացքում 300 մ/վ-ից նվազում է մինչև 100 մ/վ: Համարել, որ երկնաքարի կորցրած ամբողջ կինետիկ էներգիան ծախսվում է նրա տաքացման համար:

1) Որքանո՞վ է փոխվում երկնաքարի 0,1 կգ-ի ներքին էներգիան:
2) Քանի՞ աստիճանով կբարձրանա երկնաքարի ջերմաստիճանը:

1105. 45 մ բարձրությունից բաց թողնված 2 կգ զանգվածով գնդիկը, ետ թռչելով հատակին հարվածելուց հետո, հասնում է 15 մ բարձրության: Համարել, որ գնդիկի կորցրած մեխանիկական էներգիայի 40 % ծախսվել է գնդիկի տաքացման համար: Գնդիկի տեսակարար ջերմունակությունը 120 Ջ/կգ·Կ է:

1) Որքանո՞վ փոխվեց գնդիկի ներքին էներգիան:
2) Որքանո՞վ փոխվեց գնդիկի ջերմաստիճանը:

1106. Նույն զանգվածով երկու տարբեր հեղուկներից պատրաստված է խառնուրդ: Մինչև խառնելը հեղուկների ջերմաստիճանների հարաբերությունը 5:2 է (ըստ Ցելսիուսի), իսկ տեսակարար ջերմունակություններինը՝ 2:1:

1) Քանի՞ անգամ է խառնուրդի ջերմաստիճանը բարձր սառը հեղուկի ջերմաստիճանից (ըստ Ցելսիուսի):
2) Որքա՞ն է սառը հեղուկի ներքին էներգիայի փոփոխության մոդուլի հարաբերությունը տաք հեղուկի ներքին էներգիայի փոփոխությանը:

1107. 100 մ/վ արագությամբ թռչող 2 գ զանգվածով կապարե մանրագնդակը տախտակը ծակում անցնում է 60 մ/վ արագությամբ: Մանրագնդակի կորցրած մեխանիկական էներգիայի 62,5 %-ը

www.arc.am

ծախսվում է նրա ներքին էներգիայի աճի համար: Կապարի տեսակարար ջերմունակությունը 125 Ջ/կգ·Կ է:

1) Որքանո՞վ է փոխվում մանրագնդակի ներքին էներգիան տախտակը ծակելու ընթացքում:
2) Քանի՞ աստիճանով կտաքանա մանրագնդակը, եթե նրա վերջնական ջերմաստիճանը ցածր է հալման ջերմաստիճանից:

1108. **Անոթում, որտեղ կա 0 ^{0}C ջերմաստիճանի 5 կգ սառույց, ավելացնում են 80 ^{0}C-ի 2 կգ ջուր: Անոթի ջերմունակությունն անտեսել: Սառույցի հալման ջերմաստիճանը 0 ^{0}C է, հալման տեսակարար ջերմությունը՝ 336 կՋ/կգ, իսկ ջրի տեսակարար ջերմունակությունը՝ 4200 Ջ/կգ·Կ:**

1) Ի՞նչ ջերմաստիճան կհաստատվի անոթում (ըստ Կելկինի սանդղակի):
2) Ի՞նչ զանգվածով սառույց կմնա անոթում ջերմային հավասարակշռություն հաստատվելուց հետո:

1109. **0,3 կգ զանգվածով պողպատե անոթի մեջ անհրաժեշտ է հալել 0,1 կգ անագ: Անոթի և անագի սկզբնական ջերմաստիճանը 32 ^{0}C է: Պողպատի տեսակարար ջերմունակությունը 460 Ջ/կգ·Կ է, անագինը՝ 230 Ջ/կգ·Կ: Անագի հալման ջերմաստիճանը 232 ^{0}C է, իսկ հալման տեսակարար ջերմությունը՝ $59\cdot10^3$ Ջ/կգ:**

1) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ միայն անագը մինչև հալման ջերմաստիճանը տաքացնելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
2) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ անոթը տաքացնելու և անագն ամբողջությամբ հալելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:

1110. **1000 Ջ/կգ·Կ տեսակարար ջերմունակություն ունեցող 0,5 կգ զանգվածով գազը 10 Կ-ով տաքացնելիս նրա ներքին էներգիան աճեց 1000 Ջ-ով:**

1) Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել գազին:
2) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը:

1111. **Կատարելով որոշ թվով ամբողջական ցիկլեր՝ ջերմային շարժիչը ջեռուցչից ստանում է 20 կՋ ջերմաքանակ և դրա 75 %-ը տալիս սառնարանին:**

1) Ի՞նչ աշխատանք է կատարում շարժիչն այդ ընթացքում:
2) Որքա՞ն է շարժիչի ՕԳԳ-ն՝ արտահայտված տոկոսներով:

1112. **Իդեալական ջերմային մեքենան մեկ ցիկլի ընթացքում ջեռուցչից ստանում է 10^4 Ջ ջերմաքանակ, որից 7500 Ջ-ը հաղորդում է 300 Կ ջերմաստիճանի սառնարանին:**

www.atc.am

1) Որքա՞ն է մեքենայի ՕԳԳ-ն՝ արտահայտված տոկոսներով:
2) Որքա՞ն է ջեռուցչի ջերմաստիճանը (ըստ Կելվինի սանդղակի):

1113. Սնդիկի հագեցած գոլորշու խտությունը 22 ^{0}C ջերմաստիճանում 0,02 գ/մ^3 է: Սնդիկի մոլային զանգվածը 0,2 կգ/մոլ է: Գազային ունիվերսալ հաստատունը ընդունել 8,2 Ջ/մոլ·Կ:

1) Ի՞նչ ծավալ է զբաղեցնում սնդիկի հագեցած գոլորշու մեկ մոլն այդ պայմաններում: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:
2) Որքա՞ն է գոլորշու ճնշումն այդ ջերմաստիճանում: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1114. 15 ^{0}C ջերմաստիճանում ջրի հագեցած գոլորշու խտությունը 15 գ/մ^3 է: Ջրի մոլային զանգվածը $18\cdot10^{-3}$ կգ/մոլ է:

1) Ի՞նչ ծավալ է զբաղեցնում ջրային գոլորշու 10 մոլը նշված պայմաններում:
2) Ի՞նչ ճնշման դեպքում ջուրը կեռա 15 ^{0}C ջերմաստիճանում:

1115. Մետաղալարե շրջանակը, որի AB կողմի երկարությունը 3 սմ է, պատված է օճառաջրի թաղանթով (նկ. 24): Օճառաջրի մակերևութային լարվածության գործակիցը 0,04 Ն/մ է:

1) Ի՞նչ ուժով է ազդում օճառաջրի թաղանթը AB մետաղալարի վրա: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:
2) Որքանո՞վ կնվազի թաղանթի մակերևութային էներգիան հաղորդալարը 2 սմ-ով տեղափոխելիս: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:



Նկ. 24

1116. Մետաղալարից կախված է ինչ-որ բեռ: Մետաղալարը ծալում են երկտակ և նրանից կախում նույն բեռը:

1) Քանի՞ անգամ փոքրացավ մեխանիկական լարումը մետաղալարում:
2) Որքա՞ն է առաջին և երկրորդ դեպքերում բացարձակ երկարացումների հարաբերությունը:

www.at.am

8.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1117. 10 մոլ իդեալական գազն իզոբար ընդարձակման ժամանակ կատարում է 8300 Ջ աշխատանք: Գազի սկզբնական ծավալը 3 մ^3 է, իսկ ջերմաստիճանը՝ 300 Կ:

1) Որքա՞ն է գազի վերջնական ջերմաստիճանը:
2) Որքա՞ն է գազի վերջնական ծավալը:
3) Որքա՞ն է գազի ճնշումը:

1118. 2 կգ զանգվածով և 80 մ/վ արագությամբ շարժվող երկու գնդերի ճակատային բախման հետևանքով նրանց ջերմաստիճանը բարձրացավ 6,4 Կ-ով: Գնդերի տեսակարար ջերմունակությունը 200 Ջ/կգ·Կ է:

1) Բախման հետևանքով որքանո՞վ փոխվեց գնդերից յուրաքանչյուրի ներքին էներգիան:
2) Գնդերի սկզբնական մեխանիկական էներգիայի քանի՞ տոկոսը փոխակերպվեց ներքին էներգիայի:
3) Որքա՞նով կբարձրանար գնդերի ջերմաստիճանը, եթե նրանց մեխանիկական էներգիան ամբողջովին փոխարկվեր ներքին էներգիայի:

1119. Թեք հարթության գագաթից մինչև հիմքը սահող մարմնի ջերմաստիճանն աճել է 0,4 Կ-ով: Մարմնի ջերմունակությունը 900 Ջ/Կ է: Ընդունել, որ մեխանիկական էներգիայի միայն 20 %-ն է ծախսվել մարմնի տաքացման համար:

1) Որքանո՞վ է փոխվել մարմնի ներքին էներգիան:
2) Որքանո՞վ կբարձրանա մարմնի ջերմաստիճանը, եթե նրա լրիվ մեխանիկական էներգիան փոխարկվի ներքին էներգիայի:
3) Որքա՞ն է թեք հարթության բարձրությունը, եթե մարմնի զանգվածը 30 կգ է:

1120. 2 կգ զանգվածով 20 ^{0}C ջերմաստիճանի ջուրը 800 Վտ հզորությամբ էլեկտրական թեյնիկում 1200 վ-ի ընթացքում տաքացնում են մինչև եռման ջերմաստիճանը՝ 100 ^{0}C: Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է:

1) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ ջուրը մինչև եռման ջերմաստիճանը տաքացնելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:
2) Որքա՞ն թեյնիկի ՕԳԳ-ն՝ տոկոսներով:
3) Որքա՞ն ժամանակ կպահանջվեր ջուրը եռման ջերմաստիճանի հասցնելու համար, եթե թեյնիկի սպառած ողջ էլեկտրաէներգիան ծախսվեր ջրի տաքացման համար:

www.atc.am

1121. 10 ^{0}C ջերմաստիճան ունեցող յուղի մեջ մինչև 100 ^{0}C տաքացված մարմին իջեցնելուց հետո որոշ ժամանակ անց հաստատվեց 40 ^{0}C ընդհանուր ջերմաստիճան: Առաջին մարմինը չհանելով՝ նույն յուղի մեջ իջեցնում են 100 ^{0}C ջերմաստիճանի ևս մի այդպիսի մարմին:

1) Քանի՞ անգամ է յուղի ջերմունակությունը մեծ մարմնի ջերմունակությունից:
2) Որքա՞ն է յուղի վերջնական ջերմաստիճանը:
3) Առաջին մարմինն իջեցնելուց հետո յուղի ներքին էներգիայի փոփոխությունը քանի՞ անգամ է մեծ երկրորդ մարմինն իջեցնելուց հետո յուղի ներքին էներգիայի փոփոխությունից:

1122. 0,5 կգ զանգվածով ալյումինե թեյամանը, որի մեջ կար 10 ^{0}C ջերմաստիճանի 2 կգ ջուր, դրեցին գազայրիչի վրա, որի ՕԳԳ-ն 50% է: 2000 վ հետո ջուրը եռացել է, ըստ որում, 0,02 կգ ջուրը եռալով գոլորշիացել է: Ալյումինի տեսակարար ջերմունակությունը 880 Ջ/կգ·Կ է, ջրինը՝ 4200 Ջ/կգ·Կ, ջրի շոգեգոյացման տեսակարար ջերմությունը՝ $2{,}3\cdot10^6$ Ջ/կգ, իսկ եռման ջերմաստիճանը՝ 100 ^{0}C:

1) Որքա՞ն ջերմաքանակ պետք է հաղորդել ջրին, որպեսզի նրա ջերմաստիճանը դառնա եռման: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:
2) Որքա՞ն ջերմաքանակ է ծախսվում ջրի գոլորշիացման համար: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:
3) Որքա՞ն է գազայրիչի հզորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1123. Հալման ջերմաստիճանի 5 կգ զանգվածով հալված կապարը լցնում են 12 ^{0}C ջերմաստիճանի 10 կգ ջրի մեջ: Կապարի տեսակարար ջերմունակությունը 130 Ջ/կգ·Կ է, հալման ջերմաստիճանը՝ 327 ^{0}C, հալման տեսակարար ջերմությունը՝ $24{,}731\cdot10^3$ Ջ/կգ, իսկ ջրի տեսակարար ջերմունակությունը՝ 4200 Ջ/կգ·Կ:

1) Որքանո՞վ կածի ջրի ջերմաստիճանը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն ջերմաքանակ է տալիս կապարը մինչև ջերմային հավասարակշռություն ստեղծվելը: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
3) Կապարի պնդացման ընթացքում տված ջերմաքանակը որքանո՞վ է փոքր պնդանալուց հետո նրա տված ջերմաքանակից: Պատասխանը բազմապատկել 10^{-1}-ով:

www.atc.am

1124. **Միատոմ իդեալական գազի վիճակի փոփոխությունը պատկերված է P – V դիագրամի վրա (նկ. 25), որտեղ $P_0 = 0{,}1$ ՄՊա, $V_0 = 2$ լ:**



Նկ. 25

1) Ի՞նչ աշխատանք է կատարել գազն այդ պրոցեսի ընթացքում:
2) Որքա՞ն է գազի ներքին էներգիայի փոփոխությունը:
3) Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել գազին:

1125. **Իդեալական ջերմային մեքենայի ջեռուցչի ջերմաստիճանը 127 ^{0}C է, սառնարանինը՝ 27 ^{0}C: Մեքենան 1 վ-ում ջեռուցչից ստանում է 6 կՋ ջերմաքանակ:**

1) Որքա՞ն է մեքենայի ՕԳԳ-ն՝ տոկոսներով:
2) Ի՞նչ ջերմաքանակ է մեքենան տալիս սառնարանին 1 վ-ում:
3) Որքա՞ն է մեքենայի օգտակար հզորությունը:

1126. **30 մ^3 ծավալով սենյակում ջերմաստիճանը 20 ^{0}C է, իսկ հարաբերական խոնավությունը՝ 20 %: Որոշակի քանակով ջուր գոլորշիացնելուց հետո ջերմաստիճանը սենյակում չփոխվեց, իսկ հարաբերական խոնավությունը դարձավ 50 %: 20 ^{0}C ջերմաստիճանում ջրի հագեցած գոլորշու ճնշումն ընդունել 2431,9 Պա, ջրի մոլային զանգվածը՝ $18\cdot10^{-3}$ կգ/մոլ:**

1) Քանի՞ անգամ մեծացավ ջրի գոլորշու զանգվածը սենյակում: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Խնդրի պայմաններից ելնելով որոշել ջրի հագեցած գոլորշու խտությունը 20 ^{0}C-ում: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
3) Ի՞նչ զանգվածով ջուր է գոլորշիացել սենյակում: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1127. **Չոր օդը, որի ջերմաստիճանը –23 ^{0}C է, 10^5 Պա ճնշման տակ լցնում են 25 լ տարողությամբ փակ բալոնի մեջ: Բալոնի մեջ տեղադրում են 9 գ սառույց և տաքացնում մինչև 127 ^{0}C ջերմաստիճանը: Ջրի հագեցած գոլորշու ճնշումը 127 ^{0}C ջերմաստիճանում 250 կՊա է: Սառույցի ծավալը բալոնի ծավալի նկատմամբ անտեսել, ջրի մոլային զանգվածն ընդունել $18\cdot10^{-3}$ կգ/մոլ:**

1) Որքա՞ն է ջրի գոլորշու մասնական ճնշումը տաքացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^{-1}-ով:

www.arc.am

2) Ի՞նչ հարաբերական խոնավություն է հաստատվում բալոնում: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

3) Որքա՞ն է խոնավ օդի ճնշումը բալոնում: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:

1128. Հեղուկը, որի խտությունը 706,5 կգ/մ^3 է, իսկ մակերևութային լարվածության գործակիցը՝ 0,025 Ն/մ, 1,8 մմ ներքին տրամագիծ ունեցող ուղղածիգ խողովակից կաթում է չափաոնոթի մեջ:

1) Որքա՞ն է խողովակից պոկված կաթիլի զանգվածը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

2) Որքա՞ն է կաթիլներից յուրաքանչյուրի ծավալը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

3) Քանի՞ կաթիլ է պոկվել խողովակից, եթե չափաոնոթում հավաքվել է 1 սմ^3 ծավալով հեղուկ:

www.atc.am

8.5. ՉՈՐՍ ԿԱՐԾ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1129. 0,021 կգ զանգվածով ապակե բաժակի մեջ, որը պարունակում է 20 ^{0}C ջերմաստիճանի ջուր, լցնում են բաժակի զանգվածին հավասար զանգվածով 100 ^{0}C ջերմաստիճանի ջուր, որից հետո բաժակում ջրի ջերմաստիճանը դառնում է 40 ^{0}C: Ապակու տեսակարար ջերմունակությունը 800 Ջ/կգ·Կ է, իսկ ջրինը՝ 4200 Ջ/կգ·Կ:

1) Որքա՞ն է բաժակի ներքին էներգիայի փոփոխությունը:
2) Որքանո՞վ փոքրացավ բաժակի մեջ լցված 100 ^{0}C ջերմաստիճանի ջրի ներքին էներգիան:
3) Որքանո՞վ աճեց բաժակի ջրի ներքին էներգիան:
4) Որքա՞ն ջուր կար բաժակում: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1130. 100/83 մոլ քանակով միատոմ իդեալական գազն ավերջ դանդաղ անցում է կատարում a վիճակից b-ին: a վիճակում գազի ծավալը V_1 = 10 լ է, ճնշումը՝ $P_1 = 4\cdot10^5$ Պա, իսկ b վիճակում նրա ծավալը դառնում է $V_2 = 2$ լ, ճնշումը՝ $P_2 = 12\cdot10^5$ Պա (նկ. 26):



Նկ. 26

1) Որքա՞ն է գազի ծավալը նշված պրոցեսին համապատասխանող ամենաբարձր ջերմաստիճանում: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է գազի ճնշումը նշված պրոցեսին համապատասխանող ամենաբարձր ջերմաստիճանում: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
3) Որքա՞ն է նշված պրոցեսի ընթացքում գազի ամենաբարձր ջերմաստիճանը՝ ըստ Կելվինի:
4) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքի մոդուլը սկզբնական վիճակից մինչև ամենաբարձր ջերմաստիճանին համապատասխանող վիճակին հասնելիս:

1131. 2 մոլ իդեալական գազը կատարում է աշխատանք երկու իզոխորից և երկու իզոբարից բաղկացած փակ ցիկլով (նկ. 27): a վիճակում գազի ջերմաստիճանը T_1=400 Կ է, b-ում՝ T_2=800 Կ, c-ում՝ T_3=500 Կ:



Նկ. 27

1) Որքա՞ն աշխատանք է կատարում գազն իզոբար ընդարձակման ընթացքում:
2) Քանի՞ անգամ է աճում գազի ծավալը a վիճակից b-ին անցնելիս:
3) Որքա՞ն է գազի ջերմաստիճանը d վիճակում:
4) Որքա՞ն աշխատանք է կատարում գազը մեկ ցիկլի ընթացքում:

www.atc.am

III. ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱ

9. ԷԼԵԿՏՐԱՍՏԱՏԻԿԱ

9.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1132. Դրականորեն լիցքավորված A գնդիկը մոտեցնում են չլիցքավորված B մետաղե ձողին՝ առանց նրան հպելու: Ի՞նչ նշանի լիցքեր կկուտակվեն ձողի a և b ծայրերին:

1) a ծայրին՝ դրական, b ծայրին՝ բացասական:
2) a ծայրին՝ բացասական, b ծայրին՝ դրական:
3) Ձողի ծայրերին լիցքեր չեն կուտակվի:
4) Երկու ծայրերին էլ՝ դրական:



1133. Ո՞ր լիցքավորված գնդիկներն են իրար վանում:

1) Միայն A-ն և B-ն:
2) Միայն A-ն և C-ն:
3) Միայն B-ն և C-ն:
4) Բոլոր գնդիկներն էլ իրար վանում են:



1134. Ի՞նչ նշանի լիցք ունեն նկարում պատկերված a և b գնդիկները: Գնդիկների միջև փոխազդեցությունն անտեսել:

1) a-ն՝ դրական, b-ն՝ բացասական:
2) a-ն՝ բացասական, b-ն՝ դրական:
3) Երկուսն էլ դրական:
4) Երկուսն էլ բացասական:



1135. Իրար հպված A և B մետաղե գլանները տեղակայված են մեկուսիչ հենարանների վրա: Ի՞նչ նշանի լիցք կհայտնվի B գլանի վրա, եթե բացասական լիցքավորված C ձողը մոտեցնենք A գլանին՝ առանց նրան հպելու, և ապա հեռացնենք B գլանը:

1) Դրական:
2) Բացասական:
3) B գլանի վրա լիցք չի հայտնվի:
4) Կախված գլանների չափերից՝ հնարավոր է դրական կամ բացասական լիցք:



1136. Ատոմի ո՞ր մասնիկներն են օժտված տարրական լիցքով:

1) Էլեկտրոններն ու պրոտոնները:

www.atc.am

2) Էլեկտրոններն ու նեյտրոնները:
3) Միայն էլեկտրոնները:
4) Միայն պրոտոնները:

1137. Ինչպե՞ս է լիցքավորված մարմինը, եթե նրա մեջ էլեկտրոնների քիվը գերազանցում է պրոտոնների քիվը:

1) Դրական լիցքով:
2) Բացասական լիցքով:
3) Լիցքավորված չէ:
4) Հնարավոր է՝ լիցքավորված լինի ինչպես դրական, այնպես էլ բացասական լիցքով:

1138. Ո՞ր բանաձևով կարելի է որոշել մարմնի լիցքը, եթե նրա մեջ պրոտոնների քիվը N_p է, էլեկտրոնների քիվը՝ N_e, e-ն տարրական լիցքի մեծությունն է:

1) $q = (N_p - N_e)e$:
2) $q = (N_e - N_p)e$:
3) $q = N_e e$:
4) $q = N_p e$:

1139. Քանի՞ էլեկտրոն է պարունակում ջրածնի չեզոք ատոմը:

1) 1:
2) 2:
3) 4:
4) 0:

1140. Կփոխազդե՞ն արդյոք էլեկտրական լիցքերը Լուսնի վրա, որտեղ մթնոլորտը բացակայում է:

1) Այո, քանի որ, անկախ մթնոլորտի առկայությունից, լիցքերի շուրջը միշտ գոյություն ունի էլեկտրական դաշտ:
2) Ոչ, քանի որ լիցքերի փոխազդեցությունն իրականացվում է մթնոլորտի օգնությամբ:
3) Ոչ, քանի որ լիցքերը փոխազդում են միայն Երկրի վրա:
4) Հնարավոր չէ հարցին պատասխանել, քանի որ մինչ օրս նման փորձեր չեն կատարվել:

1141. Ի՞նչ մասնիկներ են անցնում մի մարմնի մակերևույթից մյուսին շփման միջոցով էլեկտրականացման ժամանակ:

1) Էլեկտրոններ:
2) Դրական իոններ:
3) Բացասական իոններ:
4) Պրոտոններ:

1142. Ի՞նչ լիցքեր են ձեռք բերում միմյանց հետ շփման հետևանքով էլեկտրականացած երկու մարմինները:

1) Նշանով տարբեր, մոդուլով՝ հավասար:

www.atc.am

2) Նույն նշանի, մոդուլով՝ տարբեր:
3) Լիցքերը նույնն են և՛ նշանով, և՛ մոդուլով:
4) Լիցքերը տարբեր են և՛ նշանով, և՛ մոդուլով:

1143. Միմյանց հետ շփման հետևանքով երկու մարմիններ էլեկտրականանում են: Համեմատեք այդ մարմինների լիցքերի մոդուլները, եթե մեկի ծավալը k անգամ մեծ է մյուսի ծավալից:

1) Երկուսի լիցքերի մոդուլները հավասար են:
2) Մեծ ծավալով մարմնի լիցքը k անգամ մեծ է փոքր ծավալով մարմնի լիցքի մոդուլից:
3) Մեծ ծավալով մարմնի լիցքը k անգամ փոքր է փոքր ծավալով մարմնի լիցքի մոդուլից:
4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:

1144. –e լիցք ունեցող ջրի կաթիլը, որտեղ e-ն տարրական լիցքն է, լույսի ազդեցությամբ կորցրեց մեկ էլեկտրոն: Որքա՞ն դարձավ կաթիլի լիցքը:

1) 0:
2) –2e:
3) 2e:
4) –e:

1145. + 4q և –2q լիցքերով միատեսակ մետաղե գնդերը հպեցին իրար և հետո հեռացրին իրարից: Ի՞նչ լիցք կունենա գնդերից յուրաքանչյուրը:

1) – 3q:
2) – q:
3) +q:
4) 2q:

1146. Ի՞նչ երևույթ է ուսումնասիրվում Կուլոնի փորձում:

1) Հոսանքակիր հաղորդչի հետ մագնիսական սլաքի փոխազդեցությունը:
2) Լիցքավորված մարմինների փոխազդեցությունը:
3) Զուգահեռ հոսանքների փոխազդեցությունը:
4) Հաղորդչի ներսում էլեկտրական դաշտի առկայությունը:

1147. Ո՞րն է նկատառության ճիշտ շարունակությունը:

Կուլոնը փորձերով հաստատեց, որ լիցքավորված գնդերի կենտրոնների միջև հեռավորությունը 2 անգամ մեծացնելիս նրանց փոխազդեցության ուժը՝

1) չի փոխվում:
2) փոքրանում է $\sqrt{2}$ անգամ:
3) փոքրանում է 2 անգամ:
4) փոքրանում է 4 անգամ:

1148. Ի՞նչ չափայնություն ունի ε_0 էլեկտրական հաստատունը:

1) $\frac{\text{Կլ}}{\text{Ն}\cdot\text{մ}^2}$:
3) $\frac{\text{Կլ}^2}{\text{Ն}\cdot\text{մ}^2}$:

www.atc.am

2) $\frac{Ն \cdot մ^2}{Կլ}$:

4) $\frac{Կլ^2}{Ն^2 \cdot մ}$:

1149. Որքա՞ն է իրարից 1 մ հեռավորությամբ մեկական կուլոն կետային անշարժ լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում:

1) $9 \cdot 10^8$ Ն:

2) $9 \cdot 10^9$ Ն:

3) 10^{-10} Ն:

4) $9 \cdot 10^5$ Ն:

1150. Ո՞ր գրաֆիկն է պատկերում երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի մոդուլի կախումը նրանց հեռավորությունից:



1) ա:

2) բ:

3) գ:

4) դ:

1151. Երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլն F է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնենք n անգամ:

1) $\frac{F}{n^2}$:

2) $\frac{F}{n}$:

3) nF:

4) n^2F:

1152. Ինչպե՞ս կփոխվի երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի մոդուլը, եթե նրանց միջև հեռավորությունը մեծացնենք n անգամ:

1) Կմեծանա n անգամ:

2) Կփոքրանա n անգամ:

3) Կմեծանա n^2 անգամ:

4) Փոքրանա n^2 անգամ:

1153. Ինչպե՞ս կփոխվի նույն լիցքով երկու գնդիկների փոխազդեցության ուժը, եթե, անփոփոխ պահելով դրանց միջև հեռավորությունը, մի գնդիկի լիցքի 2/3-ը հաղորդվի մյուս գնդիկին:

1) Կմեծանա 1,5 անգամ:

2) Կփոքրանա 1,5 անգամ:

3) Կմեծանա 1,8 անգամ:

4) Կփոքրանա 1,8 անգամ:

www.atc.am

1154. Երկու միատեսակ մետաղե գնդեր լիցքավորված են +Q և –3Q լիցքերով: Գնդերի միջև հեռավորությունը R է: Գնդերը հպեցին իրար և հեռացրեցին մինչև նախկին հեռավորությունը: Ինչպե՞ս կփոխվի փոխազդեցության ուժի ուղղությունը և մոդուլը:

1) Ուղղությունը չի փոխվի, մոդուլը կմեծանա 3 անգամ:
2) Ուղղությունը չի փոխվի, մոդուլը կփոքրանա 3 անգամ:
3) Ուղղությունը կփոխվի հակադիրի, մոդուլը կփոքրանա 3 անգամ:
4) Ուղղությունը կփոխվի հակադիրի, մոդուլը կմեծանա 3 անգամ:

1155. Որքա՞ն է q_0 կետային լիցքի վրա q կետային լիցքերի ազդող ուժերի համազորի մոդուլը:

1) $F = k\dfrac{q^2}{r^2}$:
2) $F = k\dfrac{|q||q_0|}{r^2}$:
3) $F = k\dfrac{2|q||q_0|}{r^2}$:
4) $F = 0$:



1156. Երկու կետային լիցքեր տեղադրված են A և B կետերում: Ինչպե՞ս կփոխվի նրանց փոխազդեցության ուժը, եթե մի լիցքը մնա A կետում, իսկ մյուսը B կետից տեղափոխվի C կետը:

1) Կփոքրանա 1,5 անգամ:
2) Կփոքրանա 2,25 անգամ:
3) Կմեծանա 2,25 անգամ:
4) Չի փոխվի:



1157. Նկարում պատկերված +4q և –q լիցքերն ամրացված են: Ինչպե՞ս կշարժվի +q լիցքը, եթե այն ազատ թողնենք:

1) Արագացումով կշարժվի դեպի ձախ:
2) Կմնա դադարի վիճակում:
3) Հավասարաչափ կշարժվի դեպի աջ:
4) Արագացումով կշարժվի դեպի աջ:



1158. Ինչպե՞ս է ուղղված քառակուսու կենտրոնում տեղադրված $+q_0$ դրական լիցքի վրա ազդող ուժերի համազորը:

1) →
2) ←
3) ↓
4) ↑



www.atc.am

1159. **Նկարում պատկերված $q_1 = q_2 = |q|$ լիցքերն ամրացված են A և B կետերում: Լիցքերը միացնող ուղղի ո՞ր տիրույթում՝ a, b և c, q_3 լիցքը կլինի հավասարակշռության մեջ:**

1) ա տիրույթում:
2) բ տիրույթում:
3) գ տիրույթում:
4) Ոչ մի տիրույթում:



1160. **Նկարում պատկերված $q_1 = |q|$ և $q_2 = 2|q|$ լիցքերն ամրացված են A և B կետերում: Ո՞ր տիրույթում q_3 լիցքը կլինի հավասարակշռության վիճակում:**

1) ա տիրույթում:
2) բ տիրույթում:
3) գ տիրույթում:
4) Բոլոր տիրույթներում:



1161. **Նկարում պատկերված են տարբեր համասեռ դիէլեկտրիկներում միևնույն երկու կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության F ուժի՝ նրանց r հեռավորությունից կախումն արտահայտող գրաֆիկները: Ո՞րն է միջավայրերի դիէլեկտրական թափանցելիությունների միջև ճիշտ առնչությունը:**



1) $\varepsilon_1 > \varepsilon_2 > \varepsilon_3$:
2) $\varepsilon_1 < \varepsilon_2 < \varepsilon_3$:
3) $\varepsilon_1 = \varepsilon_2 = \varepsilon_3$:
4) $\varepsilon_1 = \varepsilon_2 > \varepsilon_3$:

1162. **Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

Էլեկտրական դաշտ ստեղծում է՝

1) միայն անշարժ դրական լիցքը:
2) միայն անշարժ բացասական լիցքը:
3) միայն անշարժ լիցքը:
4) կամայական լիցք:

1163. **Ո՞րն է էլեկտրական դաշտի լարվածության ճիշտ սահմանումը:**

1) Էլեկտրական դաշտի լարվածություն կոչվում է այն վեկտորական մեծությունը, որը հավասար է դաշտի տվյալ կետում տեղադրված կետային լիցքի վրա ազդող ուժի և դաշտն ստեղծող լիցքի հարաբերությանը:

www.arc.am

2) Էլեկտրական դաշտի լարվածություն կոչվում է այն սկալյար մեծությունը, որը հավասար է դաշտի տվյալ կետում տեղադրված կետային լիցքի վրա ազդող ուժի մոդուլի և այդ լիցքի հարաբերությանը:
3) Էլեկտրական դաշտի լարվածություն կոչվում է այն վեկտորական մեծությունը, որը հավասար է դաշտի տվյալ կետում տեղադրված կետային լիցքի վրա ազդող ուժի և այդ լիցքի հարաբերությանը:
4) Բոլոր պատասխանները էլ ճիշտ են:

1164. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Էլեկտրական դաշտի լարվածությունը վեկտորական մեծություն է:
2) Էլեկտրական լիցքը սկալյար մեծություն է:
3) Լիցքի վրա ազդող էլեկտրական դաշտի ուժն ուղիղ համեմատական է լիցքի մեծությանը:
4) Կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտը համասեռ է:

1165. Ո՞ր բանաձևն է ճիշտ արտահայտում էլեկտրական դաշտի լարվածության ընդհանուր սահմանումը. ա) $\vec{E}=\frac{\vec{F}}{q}$, բ) $E=\frac{q}{4\pi\varepsilon_0 r^2}$:

1) Միայն ա-ն:
2) Միայն բ-ն:
3) ա-ն և բ-ն:
4) Ո՛չ ա-ն, ո՛չ բ-ն:

1166. Բացասական լիցքավորված մասնիկը տեղադրեցին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում: Ի՞նչ ուղղություն և բնույթ ունի մասնիկի շարժումը: Շփման և ծանրության ուժերն անտեսել:



1) Ձախ, ուղղագիծ հավասարաչափ:
2) Աջ, ուղղագիծ հավասարաչափ:
3) Ձախ, ուղղագիծ հավասարաչափ արագացող:
4) Աջ, ուղղագիծ հավասարաչափ արագացող:

1167. Նկարում պատկերված է ժամանակի ինչ-որ պահին էլեկտրոնի արագության ուղղությունը համասեռ էլեկտրաստատիկ դաշտում: Ինչպե՞ս է ուղղված էլեկտրոնի վրա դաշտի ազդող ուժը:



1) $\vec{E}$ -ի ուղղությամբ:
2) $\vec{E}$ -ին հակառակ ուղղությամբ:
3) $\vec{v}$ -ի ուղղությամբ:
4) $\vec{v}$ -ին հակառակ ուղղությամբ:

1168. Համասեռ էլեկտրաստատիկ դաշտում տեղադրված $q=3\cdot10^{-8}$ Կլ կետային դրական լիցքի վրա դաշտն ազդում է 6 Ն ուժով: Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը, և ինչպե՞ս է այն ուղղված:

www.atc.am

1) $2\cdot10^{8}$ Վ/մ, դեպի աջ:
2) $2\cdot10^{8}$ Վ/մ, դեպի ձախ:
3) $5\cdot10^{-9}$ Վ/մ, դեպի աջ:
4) $5\cdot10^{-9}$ Վ/մ, դեպի ձախ:



1169. Դադարի վիճակից ո՞ր ուղղությամբ և ինչպիսի՞ շարժում կկատարի դրական լիցքավորված մասնիկը համասեռ էլեկտրական դաշտում: Ծանրության և դիմադրության ուժերն անտեսել:

1) Դաշտի լարվածության ուղղությամբ, հավասարաչափ:
2) Դաշտի լարվածության ուղղությանը հակառակ, հավասարաչափ:
3) Դաշտի լարվածության ուղղությանը ուղղահայաց, ուղղագիծ հավասարաչափ արագացող:
4) Դաշտի լարվածության ուղղությամբ, ուղղագիծ հավասարաչափ արագացող:

1170. Ո՞ր դեպքում իրարից որոշակի հեռավորությամբ, մեծությամբ հավասար երկու կետային լիցքերի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը լիցքերը միացնող հատվածի միջնակետում կլինի ավելի մեծ, երբ դրանք նույնանո՞ւն են, թե՞ տարանուն:

1) Երբ նույնանուն են:
2) Երբ տարանուն են:
3) Երկու դեպքում էլ կլինի նույնը:
4) Տվյալները բավարար չեն հարցին միարժեք պատասխանելու համար:

1171. $\vec{E}$ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտը m զանգվածով և q լիցքով մասնիկին հաղորդում է a արագացում: Ի՞նչ արագացում կհաղորդի այդ դաշտը $2m$ զանգվածով և $8q$ լիցքով մասնիկին:

1) a:
2) $2a$:
3) $4a$:
4) $16a$:

1172. Ժամանակի սկզբնական պահին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում էլեկտրոնի արագությունը $\vec{v}_0$ է, ինչպես պատկերված է նկարում: Ո՞ր գրաֆիկն է ճիշտ արտահայտում էլեկտրոնի արագության պրոյեկցիայի կախումը ժամանակից:





www.etc.am

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1173. Ո՞ր գրաֆիկն է պատկերում կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլի կախումը լիցքից ունեցած հեռավորությունից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1174. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Ուժագծեր կոչվում են այն անընդհատ գծերը, որոնց կամայական կետում տարած շոշափողը համընկնում է այդ կետում դաշտի լարվածության վեկտորի հետ:
2) Էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերը փակ գծեր են:
3) Ուժագծերը չեն հատվում, նրանք միայն զուգամիտվում են լիցքի վրա:
4) Տարածության այն տիրույթներում, որտեղ ուժագծերն ավելի խիտ են պատկերվում, դաշտի լարվածությունն ավելի մեծ է:

1175. Ո՞րն է համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերի ճիշտ պատկերը:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1176. Համընկնո՞ւմ է արդյոք համասեռ էլեկտրաստատիկ դաշտում լիցքավորված մասնիկի շարժման հետագիծը դաշտի ուժագծի հետ:

1) Միշտ համընկնում է:
2) Միշտ չի համընկնում:
3) Համընկնում է, երբ մասնիկի սկզբնական արագությունը զրո է:
4) Համընկնում է, երբ մասնիկը շարժվում է կամայական սկզբնական արագությամբ:

www.arc.am

1177. **Կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլը լիցքից r հեռավորությամբ կետում E է: Որքա՞ն է դաշտի լարվածության մոդուլն այդ լիցքից $2r$ հեռավորությամբ կետում:**

1) $0{,}25E$:
2) $0{,}5E$:
3) $2E$:
4) $4E$:

1178. **Որտե՞ղ է համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունն ավելի մեծ՝ A, թե՞ B կետում:**



1) A կետում ավելի մեծ է, քան B կետում:
2) B կետում ավելի մեծ է, քան A կետում:
3) A և B կետերում հավասար են:
4) A և B կետերում դաշտի լարվածությունը զրո է:

1179. **Ո՞րն է էլեկտրական դաշտերի վերադրման սկզբունքի ճիշտ սահմանումը:**

1) Տարածության տվյալ կետում լիցքերի համակարգի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը հավասար է առանձին լիցքերի ստեղծած դաշտերի լարվածությունների մոդուլների գումարին:
2) Տարածության տվյալ կետում լիցքերի համակարգի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը հավասար է համակարգի մոդուլով ամենամեծ լիցքի ստեղծած դաշտի լարվածությանը:
3) Տարածության տվյալ կետում լիցքերի համակարգի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը հավասար է համակարգի մոդուլով ամենափոքր լիցքի ստեղծած դաշտի լարվածությանը:
4) Տարածության տվյալ կետում լիցքերի համակարգի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը հավասար է առանձին լիցքերի ստեղծած դաշտերի լարվածությունների վեկտորական գումարին:

1180. **Մեծությամբ հավասար տարաձուն կետային լիցքերն ամրացված են A և B կետերում: Ո՞ր համարով է նշված նրանց ստեղծած արդյունարար էլեկտրական դաշտի լարվածության վեկտորի ուղղությունը C կետում:**



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1181. **O կետում տեղադրված դրական q լիցքից r հեռավորությամբ A կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլը E է: Որքա՞ն կդառնա դաշտի լարվածության մոդուլը A կետում, եթե O կետից $2r$ հեռավորությամբ B կետում տեղադրենք $-q$ լիցք:**



1) $2E$:
2) E:
3) $\frac{E}{2}$:
4) 0:

www.etc.am

1182. Նկարում պատկերված $q_1 = |q|$ և $q_2 = 2|q|$ կետային լիցքերն ամրացված են A և B կետերում: Ո՞ր տիրույթում է գտնվում այն կետը, որտեղ էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը զրո է:

1) ա տիրույթում:
2) բ տիրույթում:
3) գ տիրույթում:
4) Բոլոր տիրույթներում:



1183. Նկարում պատկերված է $q_1 = 2|q|$ և $q_2 = -|q|$ անշարժ կետային լիցքերի դասավորությունը: Ո՞ր կետում արդյունարար դաշտի լարվածության մոդուլը կլինի նվազագույնը:

1) A կետում:
2) B կետում:
3) C կետում:
4) Բոլոր կետերում նույնն է:



1184. Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված $q_1 = q_2 = |q|$ անշարժ կետային լիցքերի արդյունարար դաշտի լարվածության վեկտորը լիցքերից հավասարահեռ A կետում:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1185. Երեք միատեսակ լիցքեր տեղաբաշխված են հավասարասրում ուղղանկյուն եռանկյան գագաթներում: Ի՞նչ անկյուն է կազմում դրանց արդյունարար էլեկտրական դաշտի լարվածության վեկտորը ներքնաձիգի հետ նրա O միջնակետում:

1) 0^0:
2) 30^0:
3) 45^0:
4) 90^0:



1186. Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը քառակուսու O կենտրոնում, եթե յուրաքանչյուր գագաթում տեղադրված կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը քառակուսու կենտրոնում ունի E արժեքը:

1) $2E$:
2) $4E$:
3) $4{,}23E$:
4) 0:



1187. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Հաղորդիչներ են կոչվում այն նյութերը, որոնց մեջ կան ազատ լիցքակիրներ:
2) Միայն ազատ լիցքակիրների հավասարակշռության դեպքում է հաղորդչի ներսում էլեկտրաստատիկ դաշտը բացակայում:

www.atc.am

3) Հաղորդչի մակերևույթի կամայական կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածության վեկտորն ուղղահայաց է մակերևույթին:
4) Հաղորդչին հաղորդված լիցքը հավասարաչափ է բաշխվում հաղորդչի մակերևույթին:

1188. Էլեկտրաչեզոք մետաղե մարմինը տեղավորել են էլեկտրաստատիկ դաշտում, հետո բաժանել A և B մասերի: Ի՞նչ լիցքեր ունեն այդ մարմինները բաժանելուց հետո:



1) A-ն դրական, B-ն բացասական:
2) A-ն չեզոք, B-ն բացասական:
3) A-ն դրական, B-ն չեզոք:
4) A-ն բացասական, B-ն դրական:

1189. Ո՞ր կետի մոտակայքում է լիցքավորված հաղորդչի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունն ավելի մեծ:



1) A կետի:
2) B կետի:
3) C կետի:
4) Բոլոր կետերի շրջակայքում դաշտի լարվածությունն ունի նույն արժեքը:

1190. Ինչպե՞ս է ուղղված էլեկտրաստատիկ դաշտի լարվածության վեկտորը դրական լիցքավորված հաղորդչի մակերևույթի որևէ կետում:

1) Ուղղահայաց է մակերևույթին և ուղղված է դեպի հաղորդչի ներսը:
2) Ուղղահայաց է մակերևույթին և ուղղված է հաղորդչից դեպի դուրս:
3) Ուղղված է մակերևույթին տարված շոշափողով:
4) Զրո է:

1191. R շառավղով սնամեջ մետաղե գնդին հաղորդել են q լիցք: Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը գնդի կենտրոնում:

1) 0:
2) $k\frac{|q|}{R^2}$:
3) $k\frac{|q|}{R}$:
4) $k\frac{q^2}{R^2}$:

1192. Ո՞ր գրաֆիկն է ճիշտ պատկերում R շառավղով լիցքավորված մետաղե գնդի էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլի կախումը գնդի կենտրոնից ունեցած հեռավորությունից:



www.atc.am

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1193. Առանձնացված չլիցքավորված մետաղե գնդոլորտի մեջ մտցվում է լիցքավորված գնդիկ, որը չի հպվում գնդոլորտի պատերին: Որո՞նք են գնդի ներսում և դրսում էլեկտրական դաշտի E_1 և E_2 լարվածությունների ճիշտ արժեքները:

1) $E_1 = E_2 = 0$: 3) $E_1 \neq 0,\ E_2 = 0$:
2) $E_1 = 0,\ E_2 \neq 0$: 4) $E_1 \neq 0,\ E_2 \neq 0$:

1194. Ո՞ր պնդումն է սխալ:

1) Դիէլեկտրիկներ են կոչվում այն նյութերը, որոնց մեջ չկան ազատ լիցքակիրներ:
2) Բևեռային դիէլեկտրիկների մոլեկուլում դրական և բացասական լիցքերի բաշխման կենտրոնները շեղված են միմյանցից:
3) Նույն լիցքի ստեղծած էլեկտրական դաշտի լարվածությունը դիէլեկտրիկում ավելի մեծ է, քան վակուումում:
4) Էլեկտրական դաշտի լարվածությունը դիէլեկտրիկի ներսում փոքրանում է ε դիէլեկտրիկական թափանցելիություն անգամ:

1195. Իրար հպված a և b էլեկտրաչեզոք դիէլեկտրիկները տեղադրում են դրական կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտում և հեռացնում իրարից: Ինչպիսի՞ լիցք կունենան a և b դիէլեկտրիկները:



1) Երկուսն էլ կմնան էլեկտրաչեզոք: 3) b-ն՝ դրական, a-ն՝ բացասական:
2) a-ն՝ դրական, b-ն՝ բացասական: 4) Երկուսն էլ՝ բացասական:

1196. Նկարում նշված են երկու տարբեր միջավայրերում տեղադրված նույն կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունները՝ լիցքից նույն հեռավորությամբ կետերում: Ո՞ր միջավայրի դիէլեկտրական թափանցելիությունն է ավելի մեծ:



1) I միջավայրի:
2) II միջավայրի:
3) Հավասար են:
4) Պատասխանը կախված է լիցքի մեծությունից:

1197. E_0 լարվածությամբ արտաքին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում դիէլեկտրիկի կապված լիցքերի դաշտի լարվածությունը E_1 է: Որքա՞ն է դիէլեկտրիկի ε դիէլեկտրական թափանցելիությունը:

www.aic.am

1) $\varepsilon = \frac{E_1}{E_0}$:

2) $\varepsilon = \frac{E_0 - E_1}{E_0}$:

3) $\varepsilon = \frac{E_0}{E_0 - E_1}$:

4) $\varepsilon = \frac{E_0}{E_1}$:

1198. Դրական կետային լիցքը համասեռ էլեկտրաստատիկ դաշտի A կետից տեղափոխվում է B կետ: Ի՞նչ նշան ունի դաշտի աշխատանքը:



1) Դրական:
2) Բացասական:
3) Աշխատանքը հավասար զրո է:
4) Աշխատանքի նշանը կախված է AB հեռավորությունից:

1199. Նկարում պատկերված համասեռ էլեկտրաստատիկ դաշտում կետային դրական լիցքը A կետից B կետ տեղափոխում են երեք տարբեր հետագծերով: Ո՞ր դեպքում է դաշտի կատարած աշխատանքն ավելի մեծ:



1) a:
2) b:
3) c:
4) Բոլոր հետագծերով տեղափոխվելիս կատարվում է նույն աշխատանքը:

1200. Նկարում պատկերված E լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում q կետային լիցքը A կետից ուժագծերին ուղղահայաց ուղղությամբ տեղափոխվում է նրանից d հեռավորությամբ B կետը: Որքա՞ն է դաշտի կատարած աշխատանքը:



1) qE:
2) qEd:
3) 0:
4) qd:

1201. Ինչպե՞ս են փոխվում դրական լիցքավորված մասնիկի կինետիկ և պոտենցիալ էներգիաները, երբ այն ազատ շարժվում է կետային դրական լիցքի դաշտում՝ ուժագծի ուղղությամբ:

1) Կինետիկ էներգիան աճում է, պոտենցիալ էներգիան՝ նվազում:
2) Պոտենցիալ էներգիան աճում է, կինետիկ էներգիան՝ նվազում:
3) Կինետիկ և պոտենցիալ էներգիաներն աճում են:
4) Կինետիկ և պոտենցիալ էներգիաները նվազում են:

www.atc.am

1202. Ո՞րն է լարման միավորը՝ արտահայտված ՄՀ-ի հիմնական միավորներով:

1) Ջ/ Կլ:
2) կգ մ^2 / (Ա վ^3):
3) կգ մ^2 / (վ^2 Կլ):
4) կգմ/(վ^{2}Կլ):

1203. Ինչպե՞ս կփոխվեն $q_0 > 0$ կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունն ու պոտենցիալը A կետում, եթե B կետում տեղադրենք դրական՝ $q < q_0$ լիցքով կետային լիցք:



1) Պոտենցիալը կաճի, լարվածությունը կնվազի:
2) Պոտենցիալը կնվազի, լարվածությունը կաճի:
3) Երկուսն էլ կաճեն:
4) Երկուսն էլ կնվազեն:

1204. Երկու տարբեր չափերով հաղորդիչ գնդերը լիցքավորում են և իրար միացնում հաղորդալարով: Լիցքերը վերաբաշխվելուց հետո ո՞ր գնդի պոտենցիալը կլինի ավելի մեծ:

1) Մեծ գնդինը:
2) Երկու գնդերի պոտենցիալները կլինեն հավասար:
3) Փոքր գնդինը:
4) Պատասխանը կախված է միացումից առաջ գնդերի ունեցած լիցքերից:

1205. Ինչպե՞ս է կոչվում էլեկտրական դաշտում երկու կետերի միջև լիցքի տեղափոխման վրա դաշտի կատարած աշխատանքի և այդ լիցքի մեծության հարաբերությունը:

1) Էլեկտական դաշտի պոտենցիալ:
2) Էլեկտրական դաշտի լարվածություն:
3) Լարում այդ կետերի միջև:
4) Էլեկտրաունակություն:

1206. Ի՞նչ միավորով է չափվում լարումը միավորների ՄՀ-ում:

1) 1 կուլոն:
2) 1 ամպեր:
3) 1 վոլտ:
4) 1 ֆարադ:

1207. Համասեռ էլեկտրական դաշտի ո՞ր կետի պոտենցիալն է ամենամեծը:



1) A:
2) B:
3) C:
4) Բոլոր կետերն ունեն միևնույն պոտենցալը:

www.atc.am

1208. Համեմատել նկարում պատկերված էլեկտրաստատիկ դաշտերում A և B, C և D կետերի պոտենցիալները:

1) $\varphi_A = \varphi_B$, $\varphi_C = \varphi_D$:

2) $\varphi_A > \varphi_B$, $\varphi_C < \varphi_D$:

3) $\varphi_A < \varphi_B$, $\varphi_C > \varphi_D$:

4) $\varphi_A > \varphi_B$, $\varphi_C > \varphi_D$:



1209. Ո՞րն է համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածության E մոդուլի և իրարից Δd հեռավորությամբ երկու կետերի φ_1 և φ_2 պոտենցիալների միջև ճիշտ կապը:

1) $E\Delta d = \varphi_1 - \varphi_2$:

2) $E\Delta d = \varphi_2 - \varphi_1$:

3) $E = \Delta d(\varphi_1 - \varphi_2)$:

4) $E = \Delta d(\varphi_2 - \varphi_1)$:



1210. q կետային լիցքը շարժվում է q_0 անշարժ կետային լիցքի էլեկտրական դաշտում a կողմով հավասարակողմ եռանկյան պարագծի երկայնքով: q_0 լիցքը դրված է եռանկյան կենտրոնում: Որքա՞ն է q լիցքի տեղափոխման ժամանակ էլեկտրական դաշտի կատարած աշխատանքը մեկ ցիկլի ընթացքում:

1) $\dfrac{qq_0}{4\pi\varepsilon_0 a}$:

2) $\dfrac{3qq_0}{2\pi\varepsilon_0 a}$:

3) $\dfrac{\sqrt{3}qq_0}{8\pi\varepsilon_0 a}$:

4) 0:



1211. Նկարում կետագծերով պատկերված են q_0 կետային լիցքի համապոտենցիալ մակերևույթներ: q լիցքը նշված ո՞ր հետագծով տեղափոխելիս դաշտի կատարած աշխատանքը կլինի ամենամեծը:

1) ab:

2) ac:

3) ad:

4) Բոլոր հետագծերով տեղափոխելիս դաշտը կատարում է նույն աշխատանքը:



1212. Որքա՞ն է արգելակող լարումը, որի ազդեցությամբ v_0 սկզբնական արագությամբ շարժվող էլեկտրոնը կանգ է առնում: Էլեկտրոնի զանգվածը m է, իսկ լիցքը՝ e:

www.etc.am

1) $\frac{2mv_0^2}{|e|}$:

2) $\frac{mv_0^2}{2}$:

3) $\frac{mv_0^2}{2|e|}$:

4) $\sqrt{2m|e|v_0}$:

1213. Երկու հաղորդիչներից մեկն ունի մոդուլով փոքր լիցք, բայց մեծ պոտենցիալ մյուսի նկատմամբ: Ի՞նչ տեղի կունենա, եթե նրանք հաղորդալարով միացնենք իրար:

1) Մեծ լիցք կրող հաղորդչից լիցքերը կտեղափոխվեն դեպի փոքր լիցքով հաղորդիչ, մինչև լիցքերը կհավասարվեն:
2) Փոքր լիցք կրող հաղորդչից լիցքերը կտեղափոխվեն դեպի մեծ լիցքով հաղորդիչ, մինչև պոտենցիալները կհավասարվեն:
3) Փոքր պոտենցիալ ունեցող հաղորդչի ամբողջ լիցքը կհոսի դեպի մեծ պոտենցիալ ունեցող հաղորդիչը:
4) Մեծ պոտենցիալ ունեցող հաղորդչի ամբողջ լիցքը կհոսի դեպի փոքր պոտենցիալ ունեցող հաղորդիչը:

1214. Ո՞ր մեծությունից *կախված չէ* հաղորդչի էլեկտրաունակությունը:

1) Տեսակարար դիմադրությունից:
2) Ծավալից:
3) Միջավայրի դիէլեկտրական թափանցելիությունից:
4) Գծային չափերից:

1215. Ի՞նչ միավորով է չափվում հաղորդչի էլեկտրաունակությունը միավորների ՄՀ-ում:

1) 1 Վ:
2) 1 Վտ:
3) 1 Ֆ:
4) 1 Վ/Կլ:

1216. Երկու հաղորդիչներ ունեն նույն ձևը և չափերը: Հաղորդիչներից մեկը՝ A-ն, սնամեջ է, մյուսը՝ B-ն, հոծ: Հաղորդիչներին հաղորդվում է միատեսակ լիցք: Ո՞րն է հաղորդիչների պոտենցիալների միջև ճիշտ հարաբերակցությունը:

1) $\varphi_A > \varphi_B$:
2) $\varphi_A < \varphi_B$:
3) $\varphi_A = \varphi_B$:
4) Տվյալները բավարար չեն հարցին միարժեք պատասխանելու համար:

1217. Ինչպե՞ս կփոխվի կոնդենսատորի էլեկտրաունակությունը, եթե նրա լիցքը մեծացնենք n անգամ:

www.atc.am

1) Կմեծանա n անգամ:
2) Կփոքրանա n անգամ:
3) Չի փոխվի:
4) Կմեծանա n^2 անգամ:

1218. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հարթ կոնդենսատորի էլեկտրաունակության կախումը նրա շրջադիրների միջև հեռավորությունից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1219. C էլեկտրաունակությամբ կոնդենսատորի շրջադիրների միջև լարումը U է: Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը:

1) CU:
2) $\frac{CU^2}{2}$:
3) $\frac{U}{C}$:
4) $\frac{C}{U}$:

1220. Ո՞րն է հարթ կոնդենսատորի էլեկտրաունակության ճիշտ բանաձևը:

1) $C=\frac{\varepsilon S}{d}$:
2) $C=\frac{\varepsilon\varepsilon_0 S}{d}$:
3) $C=\frac{\varepsilon\varepsilon_0 d}{S}$:
4) $C=\frac{\varepsilon_0 d}{S}$:

1221. Ո՞ր օդային կոնդենսատորի էլեկտրաունակությունն է ամենամեծը:



1) C_1 կոնդենսատորինը:
2) C_2 կոնդենսատորինը:
3) C_3 կոնդենսատորինը:
4) Բոլոր կոնդենսատորների էլեկտրաունակությունները հավասար են:

1222. Հարթ օդային կոնդենսատորի շրջադիրներին q լիցք հաղորդելիս լարումը շրջադիրների միջև U է: Քանի՞ անգամ կփոխվի կոնդենսատորի ունակությունը, եթե լիցքաթափման պատճառով կոնդենսատորի վրա մնա սկզբնական լիցքի կեսը:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Չի փոխվի:
4) Կփոքրանա 4 անգամ:

1223. Ինչպե՞ս կփոխվի հարթ օդային կոնդենսատորի էլեկտրաունակությունը, եթե նրա թիթեղներն ամբողջությամբ խորասուզենք $\varepsilon=2$ դիէլեկտրական թափանցելիությամբ հեղուկի մեջ:

1) Կմեծանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:

www.atc.am

2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կփոքրանա 4 անգամ:

1224. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ կոնդենսատորի լիցքը, եթե նրա շրջադիրների միջև հեռավորությունը մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ: 3) Կմնա նույնը:
2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կմեծանա 4 անգամ:

1225. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ կոնդենսատորի թիթեղների միջև լարումը, եթե շրջադիրների հեռավորությունը մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ: 3) Կմնա նույնը:
2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կմեծանա 4 անգամ:

1226. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրից անջատված հարթ կոնդենսատորի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը շրջադիրների միջև, եթե նրա թիթեղների հեռավորությունը մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ: 3) Կմնա նույնը:
2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կմեծանա 4 անգամ:

1227. C էլեկտրաունակությամբ հարթ օդային կոնդենսատորը լիցքավորում են մինչև U լարում: Ի՞նչ քանակությամբ լիցք կանցնի հոսանքի աղբյուրին, եթե, չանջատելով հոսանքի աղբյուրից, կոնդենսատորի շրջադիրների միջև հեռավորությունը մեծացնենք k անգամ:

1) kCU: 3) $\frac{k-1}{k}CU$:
2) $(k-1)CU$: 4) 0:

1228. Լիցքավորված և հոսանքի աղբյուրից անջատված հարթ օդային կոնդենսատորի շրջադիրների հեռավորությունը մեծացրին երկու անգամ: Ինչպե՞ս փոխվեց շրջադիրների փոխազդեցության ուժը:

1) Մեծացավ երկու անգամ: 3) Փոքրացավ չորս անգամ:
2) Փոքրացավ երկու անգամ: 4) Մնաց նույնը:

1229. Ո՞րն է լիցքավորված կոնդենսատորի էներգիայի սխալ արտահայտությունը (C-ն կոնդենսատորի էլեկտրաունակությունն է, U-ն՝ լարումը, q-ն՝ լիցքը):

1) $\frac{CU}{2}$: 3) $\frac{q^2}{2C}$:

www.arc.am

2) $\frac{CU^2}{2}$: 4) $\frac{qU}{2}$:

1230. Ինչպե՞ս կփոխվի կոնդենսատորի էներգիան, եթե նրա լիցքը մեծացնենք 2 անգամ:

1) Կփոքրանա 2 անգամ: 3) Կփոքրանա 4 անգամ:
2) Կմեծանա 2 անգամ: 4) Կմեծանա 4 անգամ:

1231. Ո՞ր գրաֆիկն է ճիշտ արտահայտում հարթ կոնդենսատորի էներգիայի կախվածությունը լիցքից, երբ կոնդենսատորի ունակությունը հաստատուն է:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1232. Լիցքավորված և աղբյուրից անջատված հարթ կոնդենսատորն օժտված է W էներգիայով: Ի՞նչ աշխատանք պետք է կատարել կոնդենսատորի միջից ε դիէլեկտրական թափանցելիությամբ դիէլեկտրիկը հեռացնելու համար:

1) $(\varepsilon+1)W$: 3) $\frac{W}{\varepsilon}$:
2) $(\varepsilon-1)W$: 4) εW:

1233. Հարթ կոնդենսատորի շրջաղիրների միջև դաշտի լարվածությունը E է, իսկ կոնդենսատորի լիցքը՝ q: Ի՞նչ ուժով է ազդում շրջաղիրներից մեկը մյուսի վրա:

1) $F = qE$: 3) $F = q\frac{E}{2}$:
2) $F = 0$: 4) $F = k\frac{q^2}{d^2}$ (d -ն թիթեղների միջև հեռավորությունն է):

1234. Նկարում պատկերված է լիցքավորված հարթ կոնդենսատոր: Ո՞ր կետերում էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը կարելի է ընդունել զրո:



1) A և B կետերում: 3) A և C կետերում:
2) B և C կետերում: 4) Նշված բոլոր կետերում:

www.ato.am

9.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1235. Միևնույն չափի երկու մետաղե գնդիկներ ունեն 12 նԿլ և 18 նԿլ լիցքեր: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը, եթե նրանք հպենք իրար և նորից հեռացնենք: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1236. 8 նԿլ, -3 նԿլ և 10 նԿլ լիցքեր ունեցող երեք միատեսակ մետաղե գնդիկներ հպեցին իրար և հեռացրին: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը հեռացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1237. Իրար հավասար երկու բացասական կետային լիցքերի հեռավորությունը 48 սմ է: Քանի՞ հավելուրդային էլեկտրոն ունի յուրաքանչյուր կետային լիցքը, եթե նրանք վակուումում փոխազդում են 10^{-3} Ն ուժով: Պատասխանը բազմապատկել 10^{-11}-ով:

1238. 40 մկԿլ և 100 մկԿլ կետային լիցքերը միմյանցից հեռու են 20 սմ: Որքա՞ն կլինի մի լիցքի կողմից մյուսի վրա ազդող ուժի փոփոխության մոդուլը, եթե առաջին լիցքի նշանը փոխվի:

1239. Քանի՞ անգամ կփոքրանա մոդուլով հավասար տարաձուն լիցքերով լիցքավորված երկու գնդիկների ձգողության ուժը, եթե, չփոխելով նրանց հեռավորությունը, մեկի լիցքի կեսը տեղափոխվի մյուսի վրա:

1240. Երկու կետային լիցքերի փոխազդեցության ուժը 12 Ն է: Որքա՞ն կլինի էլեկտրական փոխազդեցության ուժը, եթե մի լիցքը մեծացվի 2 անգամ, մյուսը՝ փոքրացվի 3 անգամ, իսկ լիցքերի միջև հեռավորությունը փոքրացվի 2 անգամ:

1241. Վակուումում երկու կետային լիցքերի միջև հեռավորությունը փոքրացնում են $\sqrt{2}$ անգամ: Ինչպիսի՞ դիէլեկտրական թափանցելիությամբ հեղուկի մեջ պետք է տեղադրել այդ լիցքերը, որպեսզի նրանց փոխազդեցության ուժի մեծությունը մնա անփոփոխ:

1242. $6\cdot10^{-5}$ Կլ լիցք ունեցող մետաղե գնդիկը հպում են նույնպիսի չլիցքավորված գնդիկի և այնուհետև միմյանցից հեռացնում մինչև 0,3 մ: Ի՞նչ ուժով են գնդիկները միմյանց վանում:

1243. Վակուումում q_1 և q_2 երկու կետային լիցքերի հեռավորությունը միմյանցից R է: Եթե նրանց միջև հեռավորությունը փոքրանում է

www.ato.am

$\Delta R = 0,5$ մ-ով, ապա փոխազդեցության F ուժը մեծանում է 4 անգամ: Որքա՞ն էր լիցքերի միջև R հեռավորությունը:

1244. Երկու միատեսակ կետային լիցքեր $\varepsilon = 2,5$ դիէլեկտրական թափանցելիությամբ հեղուկում իրարից 6 սմ հեռավորության վրա, փոխազդում են 0,4 մՆ ուժով: Որքա՞ն է յուրաքանչյուր լիցքի մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1245. Էլեկտրական դաշտի ինչ-որ կետում $2 \cdot 10^{-6}$ Կլ կետային լիցքի վրա դաշտն ազդում է 0,015 Ն ուժով: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունն այդ կետում:

1246. Ուղղաձիգ դեպի վեր ուղղված 300 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում տեղադրված է $2 \cdot 10^{-12}$ կգ զանգված և 10^{-13} Կլ լիցք ունեցող փոշեհատիկ: Ի՞նչ արագացումով է այն շարժվում ուղղաձիգ դեպի վեր:

1247. Կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը լիցքից 20 սմ հեռավորության վրա 100 Ն/Կլ է: Որքա՞ն է դաշտի լարվածությունն այդ լիցքից 40 սմ հեռավորության դեպքում:

1248. Որքա՞ն է կետային լիցքի մոդուլը, եթե այն հեղուկ դիէլեկտրիկում նրանցից 100 մ հեռավորության վրա ստեղծում է 100 Ն/Կլ լարվածությամբ էլեկտրաստատիկ դաշտ: Հեղուկի դիէլեկտրական թափանցելիությունը 9 է: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1249. 1 մ տրամագծով մետաղյա գնդին հաղորդեցին $5 \cdot 10^{-7}$ Կլ լիցք: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը գնդի կենտրոնից 0,2 մ հեռավորության վրա:

1250. 2 մ կողմով հավասարակողմ եռանկյան երկու գագաթներում տեղադրված են յուրաքանչյուրը $4 \cdot 10^{-8}$ Կլ կետային լիցքեր: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը եռանկյան երրորդ գագաթում:

1251. $2 \cdot 10^{-9}$ Կլ և $-2 \cdot 10^{-9}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 2 մ է: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը լիցքերը միացնող ուղղի միջնակետում:

1252. Նույնանուն q և $9q$ կետային լիցքերի միջև հեռավորությունը 8 սմ է: Առաջին լիցքից ի՞նչ հեռավորության վրա այդ լիցքերի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը կլինի զրո: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

www.atc.am

1253. 0,04 մ շառավիղ ունեցող գնդին հաղորդեցին $3,2\cdot10^{-9}$ Կլ լիցք: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունն այն կետում, որը գնդի մակերևույթից հեռացված է գնդի շառավղի չափով:

1254. $4\cdot10^{3}$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում տեղադրում են $27\cdot10^{-10}$ Կլ կետային լիցք (նկ. 28): Որքա՞ն է արդյունարար դաշտի լարվածության մոդուլը ուժագծերի ուղղությամբ լիցքից 0,09 մ հեռավորությամբ A կետում:



Նկ. 28

1255. $4\cdot10^{3}$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում տեղադրում են $27\cdot10^{-10}$ Կլ կետային լիցք (նկ. 29): Որքա՞ն է արդյունարար դաշտի լարվածության մոդուլը ուժագծերին ուղղահայաց ուղղությամբ լիցքից 0,09 մ հեռավորությամբ A կետում:



Նկ. 29

1256. 16 նԿլ լիցք ունեցող մետաղե գնդի մակերևույթից 25 սմ հեռավորության վրա դաշտի լարվածությունը 900 Վ/մ է: Որքա՞ն է գնդի տրամագիծը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1257. Հեղուկ դիէլեկտրիկում 4 նԿլ կետային լիցքից 3 սմ հեռավորության վրա դաշտի լարվածությունը $2\cdot10^{3}$ Վ/մ է: Որքա՞ն է դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:

1258. $6\cdot10^{7}$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում $7\cdot10^{-6}$ Կլ լիցքն ուժագծերի ուղղությամբ տեղափոխվում է 10 սմ: Որքա՞ն աշխատանք է կատարում դաշտն այդ դեպքում:

1259. Երկու լիցքավորված զուգահեռ թիթեղների միջև ստեղծված համասեռ էլեկտրական դաշտի լարվածությունը 10 կՎ/մ է, թիթեղների միջև հեռավորությունը՝ 5 սմ: Որքա՞ն է լարումը թիթեղների միջև:

1260. Սթնոլորտում պարպում առաջացնող էլեկտրաստատիկ դաշտի նվազագույն լարվածությունը $6\cdot10^{6}$ Վ/մ է: Երկրի և ամպի միջև $1,2\cdot10^{9}$ Վ լարման դեպքում որքա՞ն պետք է լինի ամպի առավելագույն հեռավորությունը Երկրի մակերևույթից, որպեսզի տեղի ունենա պարպում: Դաշտը համարել համասեռ:

www.atc.am

1261. Մետաղյա գնդի պոտենցիալը 180 Վ է: Ի՞նչ նվազագույն արագություն պետք է հաղորդել էլեկտրոնին գնդի մակերևույթից անսահմանություն տեղափոխելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1262. Ի՞նչ աշխատանք կկատարի էլեկտրական դաշտը $8\cdot10^{-2}$ Կլ լիցքը 92 Վ պոտենցիալ ունեցող կետից -8 Վ պոտենցիալ ունեցող կետ տեղափոխելիս:

1263. Կետային լիցքը 6 Վ պոտենցիալների տարբերությամբ կետերի միջև տեղափոխելիս էլեկտրաստատիկ դաշտը կատարում է 18 Ջ աշխատանք: Որքա՞ն է լիցքի մեծությունը:

1264. Երկու զուգահեռ թիթեղների միջև հեռավորությունը $2\cdot10^{-2}$ մ է: Նրանց միջև դաշտի լարվածությունը $3\cdot10^{4}$ Վ/մ է: Որքա՞ն է թիթեղների պոտենցիալների տարբերությունը:

1265. $8\cdot10^{6}$ մ/վ արագությամբ թռչող էլեկտրոնը թափանցում է էլեկտրական դաշտ և լարվածության գծերի ուղղությամբ շարժվելով երկու կետերի միջև՝ լրիվ կորցնում է իր արագությունը: Որքա՞ն է այդ կետերի պոտենցիալների տարբերությունը:

1266. Որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրական դաշտը $2\cdot10^{-5}$ Կլ լիցքը 2200 Վ պոտենցիալ ունեցող կետից 200 Վ պոտենցիալ ունեցող կետ տեղափոխելիս: Պատասխանը բազմապատկել 10^{2}-ով:

1267. Կոնդենսատորի շրջաղիրի մակերեսը 500 սմ^2 է: Օդում ի՞նչ հեռավորություն պետք է ունենան շրջաղիրները 44,25 պՖ ունակություն ստանալու համար: Պատասխանը բազմապատկել 10^{2}-ով:

1268. Կոնդենսատորը բաղկացած է 20 սմ տրամագծով երկու շրջանային թիթեղներից, որոնք բաժանված են 1 մմ հաստությամբ պարաֆինի շերտով: Որքա՞ն է այդ կոնդենսատորի ունակությունը: Պարաֆինի դիէլեկտրական թափանցելիությունը 2 է, ընդունել $\pi=3$: Պատասխանը բազմապատկել 10^{12}-ով:

1269. Հարթ օդային կոնդենսատորի ունակությունը $2\cdot10^{-10}$ Ֆ է: Շրջաղիրների միջև դիէլեկտրիկ մտցնելուց հետո կոնդեսատորը մինչև 1 Վ պոտենցիալների տարբերության լիցքավորելու համար նրան հաղորդում են $8\cdot10^{-10}$ Կլ լիցք: Որքա՞ն է դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:

www.atc.am

1270. Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը, եթե նրա շրջադիրների միջև լարումը 100 Վ է, իսկ նրա մեջ կուտակված էլեկտրական էներգիան՝ 2 Ջ: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1271. Հաստատուն լարման աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի շրջադիրների միջև դաշտի լարվածությունը 200 Վ/մ է: Որքա՞ն կդառնա դաշտի լարվածությունը, եթե շրջադիրների հեռավորությունը մեծացվի 2 անգամ:

1272. Ի՞նչ ուժով են միմյանց ձգում հարթ կոնդենսատորի թիթեղները, եթե նրա դաշտի լարվածությունը 2000 Վ/մ է, իսկ լիցքը՝ $4 \cdot 10^{-2}$ Կլ:

1273. Առաջին կոնդենսատորի ունակությունը 9 անգամ մեծ է երկրորդի ունակությունից: Քանի՞ անգամ է երկրորդ կոնդենսատորի լարումը մեծ առաջինի լարումից, եթե նրանց էներգիաները հավասար են:

1274. Քանի՞ անգամ կմեծանա կոնդենսատորի էներգիան նրա լարումը 4 անգամ մեծացնելու դեպքում:

1275. Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի հաղորդչում, որով լիցքաթափվում է մինչև 400 Վ լարում լիցքավորված 50 մկՖ ունակությամբ կոնդենսատորը:

1276. Որոշել կերոսինի մեջ ընկղմված հարթ կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիայի խտությունը: Շրջադիրների միջև դաշտի լարվածությունը $5 \cdot 10^6$ Ն/Կլ է: Կերոսինի դիէլեկտրական թափանցելիությունը 2 է: Ընդունել էլեկտրական հաստատունը՝ $\varepsilon_0 = 8,84 \cdot 10^{-12}$ Ֆ/մ:

www.atc.am

9.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1277. q կետային լիցքի ստեղծած դաշտի լարվածությունը A կետում 36 Ն/Կլ է, իսկ B կետում՝ 9 Ն/Կլ (նկ. 30):

1) Քանի՞ անգամ է կետային լիցքից մինչև B կետ եղած հեռավորությունը մեծ կետային լիցքից մինչև A կետ ունեցած հեռավորությունից:
2) Որքա՞ն է դաշտի լարվածությունն այդ կետերի C միջնակետում:



Նկ. 30

1278. Դրական 10^{-8} Կլ լիցքով անշարժ գնդիկի շուրջը շրջանագծային հետագծով հավասարաչափ պտտվում է բացասական լիցքավորված մեկ այլ գնդիկ: Շրջանագծի շառավիղը 3 սմ է, իսկ մեկ պտույտը կատարվում է 2π վ-ում: Ծանրության ուժն անտեսել:

1) Որքա՞ն է պտտվող լիցքի արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է պտտվող գնդիկի լիցքի մոդուլի և զանգվածի հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

1279. Ուղղանկյուն եռանկյան ուղիղ անկյան գագաթում գտնվող q կետային լիցքի ստեղծած դաշտի լարվածությունը A և B կետերում համապատասխանաբար 0,4 կՆ/Կլ և 0,1 կՆ/Կլ է (նկ. 31):

1) Քանի՞ անգամ է OB էջը մեծ OA էջից:
2) Որքա՞ն է դաշտի լարվածությունը C կետում: OC-ն ուղղահայաց է AB-ին:



Նկ. 31

1280. Համասեռ էլեկտրական դաշտում տեղադրում են միմյանց կիպ հպված երկու դիէլեկտրական թիթեղներ այնպես, որ դաշտի ուժագծերն ուղղահայաց են թիթեղներին: Առաջին թիթեղում, որի դիէլեկտրական թափանցելիությունը 7 է, էլեկտրական դաշտի լարվածությունը 60 Վ/մ է:

1) Որքա՞ն է դաշտի լարվածությունը թիթեղներից դուրս:
2) Որքա՞ն է դաշտի լարվածությունը երկրորդ թիթեղում, եթե նրա դիէլեկտրական թափանցելիությունը 6 է:

1281. 1 մ շառավղով դրականապես հավասարաչափ լիցքավորված գնդոլորտի ստեղծած դաշտի լարվածությունը մակերևույթից 2 մ հեռավորության վրա 100 Վ/մ է:

www.atc.am

1) Որքա՞ն է գնդոլորտի լիցքը: Պատասխանը բազմապատկեք 10^7-ով:
2) Որքա՞ն է դաշտի լարվածությունը գնդոլորտի մակերևույթին:

1282. $3\cdot10^{-4}$ կգ զանգվածով A գնդիկը կախված է բարակ մետաքսյա թելից (նկ. 32): Գնդիկի լիցքը -10^{-8} Կլ է: Այդ գնդիկից r հեռավորությամբ տեղադրում են $+6\cdot10^{-8}$ Կլ լիցքով B գնդիկը:



Նկ. 32

1) r-ի ի՞նչ արժեքի դեպքում թելի լարման ուժը կլինի 3 անգամ ավելի մեծ, քան B գնդիկի բացակայության դեպքում էր: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Թելի լարման ուժը 3 անգամ մեծանալու դեպքում որքա՞ն պետք է լինի B գնդիկի առավելագույն զանգվածը, որպեսզի նրա ճնշման ուժը հենարանի վրա բացակայի: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1283. 9 նԿլ և –4 նԿլ կետային լիցքերի միջև հեռավորությունը 100 սմ է:

1) Որքա՞ն է դաշտի լարվածությունը նրանց միացնող ուղղի միջնակետում:
2) Նրանց միացնող ուղղի վրա մոդուլով փոքր լիցքից ի՞նչ հեռավորության վրա դաշտի լարվածությունը կլինի զրո:

1284. 1,8 կգ զանգվածով և 1800 կգ/մ^3 խտությամբ լիցքավորված գնդիկը կախված է 900 կգ/մ^3 խտությամբ հեղուկ դիէլեկտրիկում: Դիէլեկտրիկում առկա է ուղղաձիգ վեր ուղղված 45 կՆ/Կլ լարվածությամբ էլեկտրական դաշտ:

1) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող ծանրության ուժի և արքիմեդյան ուժի տարբերության մոդուլը:
2) Որքա՞ն է գնդիկի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1285. $6\cdot10^{-9}$ Կլ կետային լիցքը տեղափոխվել է $5\cdot10^5$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում: Տեղափոխության վեկտորը, որի մոդուլը 0,2 մ է, դաշտի լարվածության ուղղության հետ կազմում է 60° անկյուն:

1) Որքա՞ն է դաշտի կատարած աշխատանքը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:
2) Որքա՞ն է սկզբնական և վերջնական կետերի պոտենցիալների տարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-4}-ով:

1286. Հավասարաչափ լիցքավորված AB ճողը O կետում ստեղծում է 500 Վ/մ լարվածությամբ և 1000 Վ պոտենցիալով էլեկտրական դաշտ (նկ. 33): O կետից նույն հեռավորությամբ AOB հարթության մեջ

www.atc.am

տեղադրում են նմանատիպ ձող՝ նույն լիցքով: AB և A_1B_1 ձողերը փոխուղղահայաց են, իսկ O-ն այդ ձողերի միջնուղղահայացների հատման կետն է:



Նկ. 33

1) Որքա՞ն կլինի դաշտի լարվածությունն O կետում:
2) Որքա՞ն կլինի դաշտի պոտենցիալն O կետում:

1287. Էլեկտրական դաշտի ազդեցությամբ էլեկտրոնը 120 Վ պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվում է 300 Վ պոտենցիալ ունեցող կետ: Էլեկտրոնի սկզբնական արագությունը զրո է:

1) Որքա՞ն է էլեկտրոնի պոտենցիալ էներգիայի փոփոխության մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^{19}-ով:
2) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը տեղափոխության վերջում: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1288. $2\cdot10^7$ մ/վ արագությամբ շարժվող α մասնիկը մտնում է համասեռ էլեկտրական դաշտ՝ շարժվելով ուժագծերի ուղղությանը հակառակ: α մասնիկի զանգվածը $6{,}4\cdot10^{-27}$ կգ է, իսկ լիցքը՝ $3{,}2\cdot10^{-19}$ Կլ:

1) Ի՞նչ պոտենցիալների տարբերություն կանցնի α մասնիկը մինչև կանգ առնելը: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:
2) Որքա՞ն պետք է լինի էլեկտրական դաշտի լարվածությունը, որպեսզի α մասնիկը կանգ առնի՝ անցնելով 2 մ ճանապարհ: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

www.atc.am

9.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1289. 1 գ և 4 գ զանգվածներով երկու նյութական կետեր, որոնք համապատասխանաբար կրում են $4\cdot10^{-8}$ Կլ և $8\cdot10^{-8}$ Կլ լիցքեր, ուղղագիծ շարժվում են 200 Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում: Ամբողջ շարժման ընթացքում նրանց միջև հեռավորությունը չի փոխվում: Ծանրության ուժն անտեսել:

1) Որքա՞ն է այդ լիցքերի շարժման արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:
2) Որքա՞ն է այդ լիցքերի կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
3) Որքա՞ն է այդ լիցքերի միջև հեռավորությունը:

1290. $l = 10$ սմ երկարությամբ թելից կախված է m = 0,54 գ զանգվածով գնդիկ: Կախման կետից l և թելից $l/2$ հեռավորությամբ մեկուսիչ ձողով ամրացված է երկրորդ գնդիկը (նկ. 34): Գնդիկներին միևնույն նշանի և մեծության լիցքեր հաղորդելիս թելը շեղվում է $\alpha = 30^0$-ով: Ընդունել՝ $\sqrt{3} = 1{,}8$:



Նկ. 34

1) Որքա՞ն է գնդերի կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:
2) Որքա՞ն է գնդերից յուրաքանչյուրի լիցքի մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:
3) Որքա՞ն է թելի լարման ուժը շեղված դիրքում: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:

1291. m=3 գ զանգվածներով և $q=5\cdot10^{-7}$Կլ լիցքերով երկու գնդիկներ միացված են $l = 10$ սմ և $2l$ երկարությամբ երկու մեկուսիչ թելերով (նկ. 35): Երկար թելի O կենտրոնից ձգելով՝ համակարգը բարձրացնում են ուղղաձիգ դեպի վեր ուղղված $a = 10$ մ/վ^2 արագացմամբ:



Նկ. 35

1) Որքա՞ն է երկար թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է գնդիկների էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

www.atc.am

3) Որքա՞ն է կարճ թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1292. 10^{-5} Կլ լիցք կրող 1 գ զանգվածով գնդիկն ընկնում է հորիզոնական ուղղված 10^3 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում: Գնդիկի սկզբնական արագությունը զրո է: Օդի դիմադրությունն անտեսել:

1) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող համազոր ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է գնդիկի շարժման ուղղության կազմած անկյունն ուղղաձիգի հետ:
3) Որքա՞ն է գնդիկի շարժման արագացումը:

1293. Երեք գնդիկներից կազմված համակարգը, որոնցից երկուսը երրորդի հետ կապված են l=3 սմ երկարությամբ մեկուսիչ թելերով, շարժվում է C գնդիկի վրա կիրառված F ուժի ազդեցությամբ (նկ. 36): Երեք գնդիկներից յուրաքանչյուրի զանգվածը 10 գ է: A և B գնդիկները լիցքավորված են նույնն նշանի $q = 10^{-7}$ Կլ լիցքով, իսկ C գնդիկը լիցքավորված չէ: Թելերի կազմած անկյունը 60^0 է: Ծանրության ուժն անտեսել:



Նկ. 36

1) Որքա՞ն է թելերի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է գնդիկների արագացումը:
3) Որքա՞ն է F ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1294. Տարածության մեջ վերադրվել են $4\cdot10^2$ Վ/մ հորիզոնական և $3\cdot10^2$ Վ/մ ուղղաձիգ ուղղված լարվածություններով համասեռ էլեկտրական դաշտեր: Արդյունարար դաշտի ուժագծերի ուղղությամբ դաշտ է մտնում էլեկտրոնը: Դաշտում շարժվելիս էլեկտրոնի արագությունը 2,7 մմ ճանապարհին փոխվում է 2 անգամ:

1) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը ճանապարհի վերջում: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
2) Որքա՞ն ժամանակում է էլեկտրոնն անցել այդ ճանապարհը: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:
3) Որքա՞ն է դաշտի կողմից էլեկտրոնի վրա ազդող ուժի կատարած աշխատանքի մոդուլն այդ ընթացքում: Պատասխանը բազմապատկել 10^{21}-ով:

www.atc.am

1295. Էլեկտրոնը $3\cdot10^6$ մ/վ արագությամբ մտնում է $2{,}25\cdot10^3$ Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտ՝ նրա ուժագծերին զուգահեռ: Էլեկտրոնի ծանրության ուժն անտեսել:

1) Ի՞նչ հեռավորություն կանցնի էլեկտրոնը մինչև կանգ առնելը: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:
2) Ի՞նչ արագացմամբ կշարժվի էլեկտրոնը: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:
3) Որքա՞ն ժամանակ անց էլեկտրոնը կանգ կառնի: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:

1296. 2 պֆ էլեկտրաունակությամբ հաղորդիչ գունդը լիցքավորված է մինչև 400 Վ պոտենցիալը:

1) Որքա՞ն է այդ գնդի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^{10}- ով:
2) Որքա՞ն լիցք կմնա այդ գնդի վրա, եթե այն հաղորդալարով միացվի նրանից շատ մեծ հեռավորությամբ 3 անգամ մեծ էլեկտրաունակությամբ չլիցքավորված հաղորդիչ գնդին: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:
3) Որքա՞ն կդառնա գնդերի պոտենցիալը միացնելուց հետո:

1297. Վակուումում հորիզոնական տեղադրված թիթեղների մեջտեղում կախված է սնդիկի լիցքավորված կաթիլը: Թիթեղների միջև հեռավորությունը 10^{-2} մ է, իսկ պոտենցիալների տարբերությունը՝ 1000 Վ: Պոտենցիալների տարբերությունն ակնթարթորեն ընկնում է մինչև 996 Վ:

1) Որքանո՞վ է փոքրանում թիթեղների միջև էլեկտրական դաշտի լարվածությունը:
2) Ի՞նչ արագացմամբ կշարժվի կաթիլը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն ժամանակում կաթիլը կհասնի ներքևի թիթեղին: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1298. 2 պֆ էլեկտրաունակությամբ լիցքավորված հաղորդիչ գնդի կենտրոնից 0,3 մ հեռավորությամբ կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը 200 Վ/մ:

1) Որքա՞ն է գնդի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:
2) Որքա՞ն է գնդի պոտենցիալը:
3) Որքա՞ն աշխատանք պետք է կատարել 10^{-9} Կլ կետային լիցքը գնդից անվերջ հեռու կետից մինչև գնդի մակերևույթը տեղափոխելու համար: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

www.atc.am

1299. 1 նԿլ լիցքն անսահմանությունից մինչև լիցքավորված մետաղե գնդի մակերևույթը տեղափոխելու համար անհրաժեշտ է կատարել 0,7 մկՋ աշխատանք: Գնդի շառավիղը 0,07 մ է:

1) Որքա՞ն է գնդի պոտենցիալը:
2) Որքա՞ն է գնդի լիցքը, եթե նրա էլեկտրաունակությունը 1 պՖ է: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:
3) Որքա՞ն է գնդի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը նրա կենտրոնից 0,3 մ հեռավորության վրա:

1300. Էլեկտրոնն առանց սկզբնական արագության շարժվում է կաթոդից անոդ: Նրանց միջև հեռավորությունը $3\cdot10^{-3}$ մ է, իսկ լարումը՝ 1600 Վ: Կաթոդի և անոդի միջև էլեկտրական դաշտը համարել համասեռ: Էլեկտրոնի լիցքի հարաբերությունը զանգվածին $1{,}8\cdot10^{11}$ Կլ/կգ է: Ծանրության ուժն անտեսել:

1) Ի՞նչ արագացմամբ կշարժվի էլեկտրոնը: Պատասխանը բազմապատկել 10^{-15}-ով:
2) Ի՞նչ արագությամբ էլեկտրոնը կհասնի անոդին: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:
3) Որքա՞ն ժամանակում էլեկտրոնը կհասնի անոդին: Պատասխանը բազմապատկել 10^{11}-ով:

1301. Հարթ կոնդենսատորի ուղղածիգ թիթեղների միջև մեկուսիչ թելից կախված է $4\cdot10^{-3}$ կգ զանգվածով և $2\cdot10^{-9}$ Կլ լիցքով գնդիկ: Կոնդենսատորի թիթեղները լիցքավորելիս թելն ուղղածիգի նկատմամբ շեղվում է 45^0 անկյունով: Կոնդենսատորի շրջադիրների մակերեսը $3\cdot10^{-2}$ մ^2 է:

1) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է կոնդենսատորի շրջադիրների միջև էլեկտրական դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-7}- ով:
3) Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1302. Միևնույն լիցքով լիցքավորված և իրարից մեծ հեռավորությամբ տեղադրված հաղորդիչների պոտենցիալները 30 Վ և 60 Վ են:

1) Առաջին հաղորդիչի ունակությունը քանի՞ անգամ է մեծ երկրորդ հաղորդիչի ունակությունից:
2) Միացնելուց հետո առաջին հաղորդչի լիցքը քանի՞ անգամ է մեծ երկրորդ հաղորդչի լիցքից:
3) Որքա՞ն կլինի այդ հաղորդիչների պոտենցիալը, երբ նրանց միացնեն հաղորդալարով: Հաղորդալարի ունակությունն անտեսել:

www.atc.am

1303. 4 գ զանգվածով և $q = 2\cdot10^{-7}$ Կլ լիցքով գնդիկը կախված է $l = 0{,}2$ մ երկարությամբ թելից և պտտվում է հորիզոնական հարթության մեջ այնպես, որ թելն ուղղածիգի հետ կազմում է $\alpha = 60^{o}$ անկյուն (նկ. 37): Թելի կախման կետում տեղադրված է $q = 2\cdot10^{-7}$ Կլ լիցքով անշարժ գնդիկ:



Նկ. 37

1) Որքա՞ն է գնդիկների կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
3) Որքա՞ն է գնդիկի արագացումը:
4) Որքա՞ն է գնդիկի պտտման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1304. Էլեկտրոնը $4\cdot10^6$ մ/վ արագությամբ մտնում է 2000 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտ: Էլեկտրոնի սկզբնական արագությունը հորիզոնական է, իսկ դաշտի լարվածությունը՝ ուղղածիգ: Դաշտում էլեկտրոնը հորիզոնական ուղղությամբ անցնում է 8 սմ: Էլեկտրոնի լիցքի մոդուլի հարաբերությունը զանգվածին $1{,}75\cdot10^{11}$ Կլ/կգ է: Ծանրության ուժն անտեսել:

1) Որքա՞ն է էլեկտրոնի արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^{-13}-ով:
2) Ուղղածիգ ուղղությամբ որքա՞ն կիջնի էլեկտրոնն անցած ճանապարհի վերջում: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը ճանապարհի վերջում: Ընդունել՝ $\sqrt{65} = 8$: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:
4) Որքա՞ն է հորիզոնական ուղղության հետ էլեկտրոնի արագության կազմած անկյան կոսինուսը ճանապարհի վերջում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1305. Թելից ամրացված և կերոսինի մեջ սուզված 15,6 մգ զանգվածով A պողպատե գնդիկի լիցքը $7\cdot10^{-9}$ Կլ է: Գնդիկին ներքևից մոտեցնում են $9\cdot10^{-9}$ մ^3 ծավալով և $-2\cdot10^{-9}$ Կլ լիցքով B պողպատե փոշեհատիկն այնքան, որ այն հավասարակշռվում է (նկ. 38): Կերոսինի



Նկ. 38

www.atc.am

խտությունը 800 կգ/մ^3 է, պողպատինը՝ 7800 կգ/մ^3, կերոսինի դիէլեկտրական թափանցելիությունը՝ 2:

1) Որքա՞ն է փոշեհատիկի վրա ազդող արքիմեդյան ուժը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:
2) Գնդիկի կենտրոնից ի՞նչ հեռավորության վրա է գտնվում փոշեհատիկը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է փոշեհատիկի և գնդիկի էլեկտրական ձգողության ուժը: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:
4) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:

1306. Էլեկտրոնը 10^5 մ/վ արագությամբ մտնում է համասեռ էլեկտրական դաշտ և, շարժվելով դաշտի ուժագծերին հակառակ, 1,1 մ ճանապարհն անցնում է 10^{-6} վ-ում:

1) Որքա՞ն է էլեկտրոնի արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^{-12}-ով:
2) Որքա՞ն է դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունն անցած ճանապարհի վերջում: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
4) Ի՞նչ աշխատանք է կատարում դաշտն այդ ճանապարհի վրա: Պատասխանը բազմապատկել 10^{20}-ով:

1307. Երեք միատեսակ 2 մկԿլ լիցքեր դասավորված են $2\sqrt{2}$ մ շառավղով շրջանագծի վրա միմյանցից հավասար հեռավորությամբ:

1) Որքա՞ն է երկու լիցքի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը շրջանագծի O կենտրոնում:
2) Որքա՞ն է երեք լիցքի ստեղծած արդյունարար դաշտի լարվածությունը շրջանագծի O կենտրոնում:
3) Որքա՞ն է յուրաքանչյուր լիցքի ստեղծած դաշտի լարվածությունը շրջանագծի հարթությանն ուղղահայաց և նրա կենտրոնով անցնող առանցքի վրա նրա կենտրոնից 1 մ հեռավորությամբ A կետում:
4) Որքա՞ն է արդյունարար դաշտի լարվածությունը նշված A կետում:

1308. Մինչև 100 կՎ պոտենցիալը լիցքավորված 5 պՖ էլեկտրաունակությամբ գունդը հաղորդալարով միացնում են նրանից շատ հեռու գտնվող 15 պՖ էլեկտրաունակությամբ չլիցքավորված գնդին:

1) Որքա՞ն էր առաջին գնդի լիցքը մինչև միացնելը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

www.atc.am

2) Որքա՞ն է առաջին գնդի լիցքը միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:
3) Որքա՞ն է երկրորդ գնդի լիցքը միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:
4) Որքա՞ն է գնդերի պոտենցիալը միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:

1309. Հարթ օդային կոնդենսատորի շրջադիրների միջև տեղադրվում են դիէլեկտրիկների $d_1 = 1$ մմ և $d_2 = 2$ մմ հաստությամբ երկու շերտեր, որոնք լցնում են շրջադիրների միջև եղած ամբողջ տարածությունը (նկ. 39): Այդ շերտերի դիէլեկտրական թափանցելիությունները համապատասխանաբար՝ $\varepsilon_1 = 3$ և $\varepsilon_2 = 4$ են, իսկ թիթեղի մակերեսը 20 սմ^2 է:



Նկ. 39

1) Որքա՞ն է կոնդենսատորի ε_1 թափանցելիությամբ մասի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:
2) Որքա՞ն է կոնդենսատորի ε_2 թափանցելիությամբ մասի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:
3) Որքա՞ն է ընդհանուր կոնդենսատորի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{14}-ով:
4) Դիէլեկտրիկով կոնդենսատորի ունակությունը քանի՞ անգամ է մեծ օդային կոնդենսատորի (առանց դիէլեկտրիկի) ունակությունից: Պատասխանը բազմապատկել 10-ով:

www.atc.am

10. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔ: ՕՀՄԻ ՕՐԵՆՔԸ ՇՂԹԱՅԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐ: ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԶՈՒԳԱՀԵՌ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ

10.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1310. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Էլեկտրական հոսանքը՝

1) լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժումն է:
2) լիցքավորված մասնիկների քաոսային շարժումն է:
3) ատոմների և մոլեկուլների ուղղորդված շարժումն է:
4) ատոմների և մոլեկուլների քաոսային շարժումն է:

1311. Ո՞րն է նախադասության *սխալ* շարունակությունը:
Հաղորդչի ծայրերին լարման բացակայության դեպքում՝

1) հաղորդչում առկա ազատ էլեկտրոնները կատարում են անկանոն, քաոսային շարժում:
2) հաղորդչի լայնական հատույթով անցած գումարային լիցքը զրո է:
3) հաղորդչում լիցքի մակրոսկոպական տեղափոխություն չի կատարվում:
4) հաղորդչում առկա ազատ լիցքակիրները կատարում են ուղղագիծ հավասարաչափ շարժում:

1312. Ո՞ր մասնիկների ուղղորդված շարժման ժամանակ հոսանք չի առաջանում:

1) α -մասնիկների:
2) Էլեկտրոնների:
3) Պրոտոնների:
4) Ֆոտոնների:

1313. Ո՞ր դեպքում միջավայրում կառաջանա էլեկտրական հոսանք:

1) Եթե միջավայրում առկա են ազատ լիցքակիրներ:
2) Եթե միջավայրում առկա են էլեկտրոններ:
3) Եթե միջավայրում առկա են ազատ լիցքակիրներ և էլեկտրական դաշտ:
4) Եթե միջավայրում առկա է էլեկտրական դաշտ:

1314. Ո՞ր արագությունը նկատի ունեն, երբ խոսում են հաղորդչում էլեկտրական հոսանքի տարածման արագության մասին:

1) Լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժման միջին արագությունը:
2) Լիցքավորված մասնիկների ջերմային շարժման միջին արագությունը:
3) Էլեկտրամագնիսական դաշտի տարածման արագությունը:
4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

www.atc.am

1315. Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրական հոսանքը միավորների Մ Հ-ում:

1) 1 Ա:
2) 1 Վ:
3) 1 Օմ:
4) 1 Վտ:

1316. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը հաղորդչում, եթե ազատ լիցքակիրների ուղղորդված շարժման միջին արագությունը մեծանա 2 անգամ:

1) Չի փոխվի:
2) Կմեծանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրանա 2 անգամ:

1317. Որտե՞ղ է էլեկտրոնների ուղղորդված շարժման միջին արագությունն ավելի մեծ՝ լուսարձակող էլեկտրական լամպի բարակ թելիկո՞ւմ, թե՞ լամպը սնող հաստ հաղորդալարերում:

1) Լամպի բարակ թելիկում:
2) Լամպը սնող հաստ հաղորդալարում:
3) Ե՛վ բարակ թելիկում, և՛ հաստ հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման միջին արագությունները նույնն են:
4) 1-3 բոլոր պատասխանները ճիշտ են:

1318. Նկարում պատկերված է հաղորդչի լայնական հատույթով անցնող լիցքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է հաղորդչով անցնող հոսանքի ուժը:



1) 8 Ա:
2) 4 Ա:
3) 2 Ա:
4) 0,5 Ա:

1319. Պետք է չափել հոսանքի ուժն էլեկտրական լամպի շղթայում: Չափման թույլատրելի սխալը չպետք է մեծ լինի 0,03 Ա-ից: Ո՞ր ամպերաչափն է նպատակահարմար ընտրել:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1320. Հոսանքի ուժն ինչպե՞ս է կախված մետաղե հաղորդչի ծայրերին կիրառված լարումից:

1) Ուղիղ համեմատական է լարմանը:
2) Հակադարձ համեմատական է լարմանը:

www.atc.am

3) Կախված չէ լարումից:
4) Միշտ հաստատուն է:

1321. R **դիմադրությամբ հաղորդալարով** Δt **ժամանակում անցնում է** Δq **լիցք: Որքա՞ն է հաղորդչի ծայրերին կիրառված լարումը: Հոսանքը հաստատուն է:**

1) $\frac{\Delta q}{\Delta t}R$:
2) $\frac{R}{\Delta q}\Delta t$:
3) $R\left(\frac{\Delta q}{\Delta t}\right)^2$:
4) $R\left(\frac{\Delta t}{\Delta q}\right)^2$:

1322. Ո՞ր բանաձևն է ճիշտ արտահայտում հաղորդչի դիմադրության կախումը նրա l **երկարությունից և լայնական հատույթի** S **մակերեսից:**

1) $R=\rho\frac{l}{S}$:
2) $R=\rho\frac{S}{l}$:
3) $R=\frac{S}{\rho l}$:
4) $R=\frac{l}{\rho S}$:

1323. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաղորդչի դիմադրության կախումը նրա լայնական հատույթի տրամագծից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1324. Ո՞րն է դիմադրության չափայնությունը՝ ՄՀ-ի հիմնական միավորներով:

1) $\text{կգ մ}^2\,\text{Ա}^{-2}\,\text{վ}^{-2}$:
2) $\text{կգ մ}^2\,\text{Ա}^{-1}\,\text{վ}^{-3}$:
3) $\text{կգ մ}^2\,\text{Ա}^{-2}\,\text{վ}^{-3}$:
4) $\text{կգ մ}^2\,\text{Ա}^{-1}\,\text{վ}^{-2}$:

1325. Ո՞ր պնդումն է ***սխալ****:**

1) Դիմադրությունը հաղորդչի էլեկտրական հատկությունները բնութագրող մեծություններից է:
2) Դիմադրությունն ազատ լիցքակիրների ուղղորդված շարժմանը հաղորդչի դիմադրության քանակական չափն է:
3) Դիմադրությունը կախված է հաղորդչի երկրաչափական չափերից, այն նյութի տեսակից, որից պատրաստված է հաղորդիչը և ջերմաստիճանից:
4) Բոլոր պատասխանները սխալ են:

www.atc.am

1326. Ինչի՞ց է կախված տեսակարար դիմադրությունը:

1) Հոսանքի ուժից:
2) Լարումից:
3) Նյութի տեսակից և ջերմաստիճանից:
4) Հաղորդչի չափերից, նյութի տեսակից և ջերմաստիճանից:

1327. Ո՞ր գործոնից *կախված չէ* հաղորդչի տեսակարար դիմադրությունը:

1) Նյութի տեսակից:
2) Հաղորդչի լայնական հատույթի մակերեսից:
3) Ջերմաստիճանից:
4) Նյութի վիճակից:

1328. Հաստատուն հոսանքի դեպքում հաղորդիչներից ո՞րն է ավելի մեծ դիմադրությամբ օժտված՝ պղնձե հոծ ձո՞ղը, թե՞ նույն արտաքին տրամագիծն ունեցող պղնձե խողովակը: Երկուսի երկարությունները էլ նույն են:

1) Հավասար են:
2) Ձողի դիմադրությունն ավելի մեծ է:
3) Խողովակի դիմադրությունն ավելի մեծ է:
4) Հնարավոր չէ հարցին միարժեք պատասխանել:

1329. Նկարում պատկերված հաղորդալարերը պատրաստված են նույն նյութից: Ո՞ր զույգը հնարավորություն կտա փորձով հայտնաբերվել դիմադրության կախումը հաղորդչի երկարությունից:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1330. Ո՞ր բանաձևն է ճիշտ արտահայտում մետաղե հաղորդչի դիմադրության կախումը t ջերմաստիճանից (R_0-ն հաղորդչի դիմադրությունն է 0^0C-ում, α-ն՝ դիմադրության ջերմաստիճանային գործակիցը):

1) $R = R_0 \alpha t$:
2) $R = R_0(1 - \alpha t)$:
3) $R = R_0(1 + \alpha t)$:
4) $R = \dfrac{R_0}{1 + \alpha t}$:

1331. Էլեկտրական լամպի՝ նիկելից պատրաստված թելիկի վոլտամպերային բնութագիծն ուսումնասիրելիս պարզվեց, որ մեծ հոսանքների

www.atc.am

դեպքում նկատվում է շեղում Օհմի օրենքից: Դա բացատրելու համար առաջ քաշվեց երկու վարկած՝

ա. նիկելը մետաղ չէ,

բ. նիկելի դիմադրությունը տաքացման հետևանքով աճում է:

Ո՞ր վարկածն է ճիշտ բացատրում տվյալ երևույթը:

1) ա-ն: 3) ո՛չ ա-ն, ո՛չ բ-ն:

2) բ-ն: 4) և՛ ա-ն, և՛ բ-ն:

1332. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Ամպերաչափի դիմադրությունը պետք է շատ փոքր լինի այն տեղամասի դիմադրությունից, որին միացված է:

2) Ամպերաչափը միացնում են շղթայի տեղամասին հաջորդաբար:

3) Ամպերաչափը միացնում են շղթայի տեղամասին զուգահեռ:

4) Ամպերաչափը նախատեսված է հոսանք չափելու համար:

1333. Որքա՞ն է նկարում պատկերված վոլտաչափի ցուցմունքը:



1) 1,1 ± 0,1 Վ: 3) 1,1 ± 0,5 Վ:

2) 1,2 ± 0,1 Վ: 4) 1,2 ± 0,05 Վ:

1334. Ինչպե՞ս կփոխվի հաղորդչով անցնող հաստատուն հոսանքի ուժը, եթե լարումը նրա ծայրերին փոքրացնեն 2 անգամ, իսկ հաղորդչի լայնական հատույթի մակերեսը մեծացնեն 2 անգամ:

1) Չի փոխվի: 3) Կմեծանա 2 անգամ:

2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կմեծանա 4 անգամ:

1335. Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում, եթե իդեալական վոլտաչափը ցույց է տալիս U լարում:

1) $\frac{U}{R_1+R_2}$: 3) $\frac{U^2}{R_1+R_2}$:

2) $\frac{U(R_1+R_2)}{R_1R_2}$: 4) $U(R_1+R_2)$:



1336. Ի՞նչ լարում է ցույց տալիս նկարում պատկերված իդեալական վոլտաչափը:

1) $\frac{U_0R_2}{R_1}$: 3) $\frac{U_0R_2}{R_1+R_2}$:

2) $\frac{U_0R_1}{R_2}$: 4) $\frac{U_0R_1}{R_1+R_2}$:



www.atc.am

1337. Նկարում պատկերված շղթայում R դիմադրությունում հոսանքի ուժը I_0 է: Որքա՞ն է հոսանքի ուժը $2R$ դիմադրությունում:



1) $\frac{I_0}{2}$:
2) $\frac{I_0}{3}$:
3) I_0:
4) $2I_0$:

1338. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված լարումը, եթե R դիմադրությունով անցնում է I_0 հոսանք:



1) $3I_0R$:
2) I_0R:
3) $\frac{I_0R}{3}$:
4) $\frac{2I_0R}{3}$:

1339. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի A և B կետերի պոտենցիալների տարբերությունը:



1) $\frac{U_0}{12}$:
2) $\frac{5U_0}{12}$:
3) $5U_0$:
4) $12U_0$:

1340. Հաղորդալարի ծայրերին կիրառված լարումը և հաղորդալարի երկարությունը մեծացվել է 2 անգամ, իսկ լայնական հատույթի մակերեսը փոքրացվել է 2 անգամ: Ինչպե՞ս կփոխվի հաղորդալարում հոսանքի ուժը:

1) Չի փոխվի:
2) Կփոքրանա 8 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրանա 2 անգամ:

1341. Ո՞րն է մետաղե հաղորդչի վոլտամպերային բնութագիծը:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

www.atc.am

1342. Նկարում պատկերված են նույն չափերով երկու հաղորդիչներում հոսանքի ուժի՝ լարումից կախումն արտահայտող գրաֆիկները: Այդ հաղորդիչների տեսակարար դիմադրությունների միջև բերված ո՞ր հարաբերակցությունն է ճիշտ:



1) $\rho_1 > \rho_2$:
2) $\rho_1 < \rho_2$:
3) $\rho_1 = \rho_2$:
4) Բոլոր պատասխանները հնարավոր են:

1343. Չափումների տվյալներով աշակերտը կառուցեց էլեկտրական լամպում հոսանքի ուժի՝ կիրառված լարումից կախումն արտահայտող գրաֆիկը: Գրաֆիկից ի՞նչ հետևություն կարելի է անել լամպի դիմադրության մասին:



1) Դիմադրությունը ժամանակի ընթացքում աճում է:
2) Դիմադրությունը ժամանակի ընթացքում նվազում է:
3) Դիմադրությունը մնում է հաստատուն:
4) Դիմադրությունը սկզբում աճում է, հետո՝ նվազում:

1344. Ո՞ր շղթայով է անցնում հաստատուն հոսանք:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1345. Ո՞ր մեծության արժեքն է նույնը հաջորդաբար միացված բոլոր հաղորդիչների համար:

1) Լարման:
2) Դիմադրության:
3) Հոսանքի ուժի:
4) Թվարկված բոլոր մեծությունների արժեքները նույնն են:

1346. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը:



1) 2 Օմ:
2) 2,4 Օմ:
3) 10 Օմ:
4) 24 Օմ:

www.atc.am

1347. Ո՞ր շղթաներում են լամպերը միացված հաջորդաբար:



1) ա և դ շղթաներում:
2) միայն բ շղթայում:
3) բ և գ շղթաներում:
4) ա, բ և գ շղթաներում:

1348. Փոփոխական լայնական հատույթի մակերեսով հաղորդալարը միացված է հաստատուն հոսանքի աղբյուրին: Նո՞ւյնն է արդյոք հոսանքի ուժը հաղորդալարի տարբեր տեղամասերում:

1) Բոլոր տեղամասերում նույնն է:
2) Հաստ տեղամասում ավելի մեծ է:
3) Հաստ տեղամասում ավելի փոքր է:
4) Պատասխանը կախված է նյութի տեսակից:

1349. Ո՞ր մեծության արժեքն է նույնը զուգահեռ միացված բոլոր հաղորդիչների համար:

1) Լարման:
2) Դիմադրության:
3) Հոսանքի ուժի:
4) Անջատված ջերմաքանակի:

1350. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը:



1) 3,2 Օմ:
2) 12 Օմ:
3) 20 Օմ:
4) 64 Օմ:

1351. Որքա՞ն է R_1, R_2 և R_3 դիմադրություններ ունեցող երեք հաղորդիչների զուգահեռ միացման ընդհանուր դիմադրությունը:

1) $R = R_1 + R_2 + R_3$:
2) $R = \frac{1}{R_1} + \frac{1}{R_2} + \frac{1}{R_3}$:
3) $R = \frac{R_1 R_2 R_3}{R_1 + R_2 + R_3}$:
4) $R = \frac{R_1 R_2 R_3}{R_1 R_2 + R_2 R_3 + R_1 R_3}$:

1352. Էլեկտրական շղթայում ո՞ր լամպերն են զուգահեռ միացված:



1) Միայն բ և գ լամպերը:
2) Միայն ա և դ լամպերը:
3) ա, բ և գ լամպերը:
4) Զուգահեռ միացված լամպեր չկան:

www.atc.am

1353. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) 2 Օմ: 3) 18 Օմ:
2) 3 Օմ: 4) 216 Օմ:

1354. Հնարավո՞ր է արդյոք տոնածառի լուսավորման համար առանց տրանսֆորմատորի օգտագործել 5 Վ-ի համար նախատեսված լամպեր, եթե ցանցի լարումը 220 Վ է:

1) Հնարավոր չէ:
2) Հնարավոր է, եթե ցանցին միաժամանակ հաջորդաբար միացվի նույնատիպ 44 լամպ:
3) Հնարավոր է, եթե ցանցին միաժամանակ զուգահեռաբար միացվի նույնատիպ 44 լամպ:
4) Հնարավոր է, եթե ցանցին միաժամանակ զուգահեռաբար միացվի նույնատիպ 22 լամպ:

1355. R դիմադրությամբ մալուխը կազմված է r դիմադրությամբ n հատ պղնձե լարերից: Ո՞րն է R և r դիմադրությունների միջև ճիշտ առնչությունը:

1) $R = nr$: 3) $R = r$:
2) $r = nR$: 4) $Rr = n$:

1356. Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) $\frac{1}{R} = \frac{1}{R_1} + \frac{1}{R_2} + \frac{1}{R_3}$: 3) $R = R_1 + \frac{R_2 R_3}{R_2 + R_3}$:

2) $R = \frac{R_3(R_1+R_2)}{R_1 + R_2 + R_3}$: 4) $R = \frac{R_1 R_2 R_3}{R_1 + R_2 + R_3}$:

1357. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) 6 R: 3) 3 R:
2) 4 R: 4) R/4:

1358. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) 4 R: 3) R:
2) 3 R/2: 4) 4 R/3:

www.atc.am

1359. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) 1 Օմ: 3) 4 Օմ:
2) 2 Օմ: 4) 8 Օմ:

1360. Միևնույն R դիմադրությունն ունեցող հաղորդիչներից հավաքել են նկարում պատկերված չորս շղթա: Ո՞ր շղթայի ընդհանուր դիմադրությունն է $2R/3$:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1361. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:



1) $4R$: 3) $\frac{3R}{2}$:
2) R: 4) $\frac{5R}{3}$:

1362. Ո՞ր շղթայում է ամպերաչափն առավել ճիշտ չափում հոսանքի ուժը R դիմադրությունում:



1) ա: 3) բ:
2) գ: 4) դ:

1363. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի համասեռ պարույրի a և b կետերի միջև լարումը, եթե $MK = 10$ սմ, $NK = 30$ սմ:



1) 30 Վ: 3) 90 Վ:
2) 60 Վ: 4) 120Վ:

1364. Նկարում պատկերված շղթայում A_1 ամպերաչափի ցուցմունքը 1 Ա է: Որքա՞ն է A_2 ամպերաչափի ցուցմունքը, եթե



www.atc.am

$R_1 = R_2 = R_3$: Ամպերաչափերի դիմադրություններն անտեսել:

1) 1 Ա: 3) 2 Ա:

2) 1,5 Ա: 4) 3 Ա:

1365. Նկարում պատկերված շղթայում R_3 դիմադրությունով անցնում է I_3 հոսանք: Որքա՞ն է հոսանքը R_1 դիմադրությունում:



1) $\frac{R_3}{R_2} I_3$: 3) I_3:

2) $\frac{I_3(R_2 + R_3)}{R_2}$: 4) $2I_3$:

1366. Ինչպե՞ս կփոխվի համասեռ հաղորդիչ ձողի դիմադրությունը, եթե այն բաժանենք 3 հավասար մասի և միացնենք իրար զուգահեռ:

1) Չի փոխվի: 3) Կմեծանա 3 անգամ:

2) Կփոքրանա 9 անգամ: 4) Կփոքրանա 3 անգամ:

1367. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը: Միացնող հաղորդալարերի դիմադրությունն անտեսել:



1) $2R$: 3) $\frac{R}{2}$:

2) R: 4) 0:

1368. Ինչպե՞ս կփոխվի նույն դիմադրություններից կազմված շղթայի ընդհանուր դիմադրությունը, եթե նրա A և B կետերը միացնենք հաղորդալարով, որի դիմադրությունը կարելի է անտեսել:



1) Կփոքրանա 1,5 անգամ: 3) Կփոքրանա 2 անգամ:

2) Կմեծանա 1,5 անգամ: 4) Չի փոխվի:

1369. Նկարում պատկերված շղթայի տեղամասը կազմված է յուրաքանչյուրը R դիմադրությամբ երեք հաղորդիչներից: Որքա՞ն է շղթայի տեղամասի լրիվ դիմադրությունը, երբ բանալին փակ է:



www.atc.am

1) $R/2$:
2) R:
3) $2R$:
4) $3R$:

1370. Երեք՝ r, $2r$, $3r$ դիմադրություններ միացված են հաջորդաբար: Դրանցից ո՞րը պետք է հեռացնել շղթայից, որպեսզի շղթայի ընդհանուր դիմադրությունը փոքրանա 1,5 անգամ:

1) Առաջին դիմադրությունը:
2) Երկրորդ դիմադրությունը:
3) Երրորդ դիմադրությունը:
4) Առաջին և երկրորդ դիմադրությունները:

1371. Ո՞րն է հաստատուն հոսանքի աշխատանքի հաշվարկման *սխալ* բանաձևը:

1) $A = I^2Rt$:
2) $A = IUt$:
3) $A = \frac{U}{R}t$:
4) $A = \frac{U^2}{R}t$:

1372. Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրաէներգիայի ծախսը բնակարաններում:

1) Ամպերով:
2) Կիլովատտ · ժամով:
3) Վոլտով:
4) Վատտով:

1373. 1 կՎտ · ժ էներգիան արտահայտել ջոուլներով:

1) 1 կՎտ · ժ = 1000 Ջ:
2) 1 կՎտ · ժ = 3600 Ջ:
3) 1 կՎտ · ժ = 360 000 Ջ:
4) 1 կՎտ · ժ = 3 600 000 Ջ:

1374. Որքա՞ն է պարույրում անջատված հզորությունը, եթե նրա դիմադրությունը 100 Օմ է, իսկ հոսանքի ուժը՝ 0,2 Ա:

1) 4 Վտ:
2) 20 Վտ:
3) 500 Վտ:
4) 2000 Վտ:

1375. Ինչպե՞ս կփոխվի էլեկտրական սալիկի հզորությունը, եթե նրա պարույրը կարճացվի:

1) Կաճի:
2) Կնվազի:
3) Չի փոխվի:
4) Բոլոր պատասխանները հնարավոր են:

1376. Որքա՞ն է հաջորդաբար միացված R_1 և R_2 դիմադրությունների վրա անջատված ընդհանուր հզորությունը, եթե շղթայի ծայրերին կիրառված լարումը U է:

www.atc.am

1) $\frac{U^2}{R_1+R_2}$: 3) $\frac{U^2(R_1+R_2)}{R_1R_2}$:

2) $U^2(R_1+R_2)$: 4) $U^2\frac{R_1R_2}{R_1+R_2}$:

1377. Ո՞րն է շղթայի AB տեղամասում անջատված լրիվ հզորության բանաձևը:

1) $\frac{IR_1R_2}{R_1+R_2}$: 3) $\frac{I^2(R_1+R_2)}{R_1R_2}$:

2) $I^2(R_1+R_2)$: 4) $I^2\frac{R_1R_2}{R_1+R_2}$:



1378. Նկարում պատկերված R_1 և R_2 $(R_2=3R_1)$ դիմադրություններով սպառիչները միացված են միմյանց զուգահեռ: Ո՞ր սպառիչում և քանի՞ անգամ ավելի մեծ հզորություն է անջատվում:



1) R_1-ում, 3 անգամ:

2) R_2-ում, 3 անգամ:

3) R_1-ում, 9 անգամ:

4) R_2-ում, 9 անգամ:

1379. Նկարում պատկերված շղթայում $R_1>R_2>R_3$: Ինչպիսի՞ն է դիմադրությունների վրա անջատված հզորությունների հարաբերակցությունը շղթայով հոսանք անցնելիս:



1) $P_1>P_2>P_3$: 3) $P_3>P_1>P_2$:

2) $P_1<P_2<P_3$: 4) $P_2>P_3>P_1$:

1380. Ինչպե՞ս է փոխվում հզորությունը շղթայի տեղամասում, երբ լարումն այդ տեղամասում մեծացնում են 3 անգամ:

1) Մեծանում է 3 անգամ: 3) Մեծանում է 9 անգամ:

2) Փոքրանում է 3 անգամ: 4) Փոքրանում է 9 անգամ:

1381. Որքա՞ն է նկարում պատկերված լամպերի ծախսած հզորությունների հարաբերությունը:



1) $\frac{P_1}{P_2}=\frac{1}{3}$: 3) $\frac{P_1}{P_2}=1$:

www.atc.am

2) $\frac{P_1}{P_2}=3$: 4) $\frac{P_1}{P_2}=9$:

1382. Ո՞ր բանաձևով է արտահայտվում Ջոուլ-Լենցի օրենքը:

1) $Q=I^2Rt$: 3) $Q=\lambda m$:

2) $Q=mc(t_2-t_1)$: 4) $Q=rm$:

1383. Ի՞նչ ջերմաքանակ կանջատվի իրար զուգահեռ միացված երեք $R_1=R_2=R_3=R$ հավասար դիմադրություններով շղթայի տեղամասում Δt ժամանակամիջոցում, եթե շղթայի ծայրերին կիրառված լարումը U է:

1) $\frac{3U^2}{R}\Delta t$: 3) $\frac{U^2}{R}\Delta t$:

2) $\frac{U^2}{3R}\Delta t$: 4) $\frac{3U^2}{R\Delta t}$:

1384. Նկարում պատկերված է երեք միատեսակ R դիմադրություններից կազմված շղթա, որի չճյուղավորված մասում հոսանքի ուժը I է: Որքա՞ն է շղթայի ճյուղավորված մասի R դիմադրության վրա անջատված ջերմաքանակի հարաբերությունը չճյուղավորված մասի R դիմադրության վրա անջատված ջերմաքանակին:



1) $\frac{1}{4}$: 3) 2:

2) $\frac{1}{2}$: 4) 4:

1385. Ինչպե՞ս կփոխվի միավոր ժամանակում հաղորդչում անջատված ջերմաքանակը, եթե, անփոփոխ պահելով լարումը, նրա դիմադրությունը մեծացնենք 3 անգամ:

1) Կմեծանա 3 անգամ: 3) Կմեծանա 9 անգամ:

2) Կփոքրանա 3 անգամ: 4) Կփոքրանա 9 անգամ:

1386. Նկարում պատկերված է հաղորդչի վոլտամպերային բնութագիծը: Որքա՞ն է այդ հաղորդչում 10 վ-ում անջատված ջերմաքանակը, եթե նրա մեջ հոսանքի ուժը 0,5 Ա է:



1) 100 Ω: 3) 10 Ω:

2) 25 Ω: 4) 5 Ω:

www.atc.am

1387. Ինչպե՞ս կփոխվի շղթայում պատկերված լամպերի պայծառությունը, եթե K բանալին փակենք:



1) Երկուսինն էլ կնվազի:
2) Երկուսինն էլ կաճի:
3) α_1-ը կմարի, α_2-ինը կաճի:
4) α_1-ինը կաճի, α_2-ինը կնվազի:

1388. Հաստատուն լարման աղբյուրին միացված հաղորդալարի ջերմաստիճանը որոշակի արժեքի հասնելուց հետո լարի մի կեսի ջերմաստիճանը օդի հոսքի միջոցով իջեցվեց: Ինչպե՞ս փոխվեց մյուս կեսի ջերմաստիճանը:

1) Մեծացավ:
2) Փոքրացավ:
3) Մնաց անփոփախ:
4) Տվյալները բավարար չեն հարցին միարժեք պատասխանելու համար:

1389. Ի՞նչ չափայնություն ունի էլեկտրաշարժ ուժը՝ արտահայտված ՄՀ-ի հիմնական միավորներով:

1) Ա վ:
2) կգ մ^2 Ա$^{-1}$ վ$^{-3}$:
3) կգ մ^2 Ա$^{-2}$ վ$^{-4}$:
4) կգ մ^2 Ա$^{-2}$ վ$^{-3}$:

1390. Ո՞ր բանաձևով է որոշվում Օհմի օրենքը լրիվ շղթայի համար:

1) $I = \frac{q}{t}$:
2) $\varepsilon = \frac{A}{q}$:
3) $I = \frac{U}{R}$:
4) $I = \frac{\varepsilon}{R + r}$:

1391. Ո՞ր ուղղությունն է համապատասխանում հոսանքի աղբյուրի ներսում բացասական լիցքի վրա ազդող կողմնակի ուժի ուղղությանը:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1392. Նկարում պատկերված շղթայում արտաքին դիմադրությունը հավասար է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությանը: Որքա՞ն է լարման անկումը հոսանքի աղբյուրի սեղմակներում:



1) 2ε:
2) ε:
3) $\frac{\varepsilon}{2}$:
4) 0:

www.atc.am

1393. **Ո՞րն է նկարում պատկերված շղթայում իդեալական վոլտաչափի ցուցմունքը:**



1) $U=\dfrac{\varepsilon R}{R+r}$:
2) $U=\dfrac{\varepsilon r}{R+r}$:
3) $U=\dfrac{\varepsilon}{R+r}$:
4) $U=\varepsilon$:

1394. **ε ԷլՇՈւ և r ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված է R դիմադրությամբ ռեոստատ: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում շղթայում I հոսանքի ուժի կախումը R դիմադրությունից:**



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1395. **Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում r ներքին դիմադրությամբ հաստատուն հոսանքի աղբյուրով շղթայի ՕԳԳ-ի կախմանը արտաքին տեղամասի R դիմադրությունից:**



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1396. **Շղթան կազմված է Ε ԷլՇՈւ և r ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրից և R արտաքին դիմադրությունից: Ինչպե՞ս կփոխվի լարման անկումն արտաքին դիմադրության վրա, եթե արտաքին և ներքին դիմադրությունները մեծացնենք 2 անգամ:**

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կմեծանա 4 անգամ:
3) Կփոքրանա 2 անգամ:
4) Չի փոխվի:

1397. **Ε ԷլՇՈւ և r ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված է R արտաքին դիմադրություն: Ի՞նչ է արտահայտում $\varepsilon^2 R/(R+r)^2$ մեծությունը:**

1) Հոսանքի ուժը շղթայում:
2) Շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունը:
3) Շղթայում անջատված լրիվ հզորությունը:
4) Լարումը հոսանքի աղբյուրի սեղմակներում:

www.atc.am

1398. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում փակ շղթայում հաստատուն հոսանքի աղբյուրի սեղմակներում լարման կախումն արտաքին դիմադրությունից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1399. Ե՞րբ է հաստատուն հոսանքի աղբյուր պարունակող փակ շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունն ընդունում իր առավելագույն արժեքը: Արտաքին տեղամասի դիմադրությունը R է, հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը՝ r:

1) $r \le R$:
2) $R = 2r$:
3) $R = r$:
4) $r << R$:

1400. Ո՞ր վոլտաչափի ցուցմունքն է շղթայում ամենամեծը:



1) V_1:
2) V_2:
3) V_3:
4) Բոլոր վոլտաչափերի ցուցմունքները նույնն են:

1401. Ի՞նչ է էլեկտրական հոսանքը մետաղներում:

1) Ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժում:
2) Ազատ էլեկտրոնների ջերմային շարժում:
3) Դրական իոնների ուղղորդված շարժում:
4) Էլեկտրոնների և դրական իոնների ուղղորդված շարժում:

1402. Ո՞րն է մետաղում ազատ էլեկտրոնների ուղղորդված և ջերմային շարժումների v և v_T միջին արագությունների միջև ճիշտ առնչությունը սենյակային ջերմաստիճանում:

1) $v >> v_T$:
2) $v << v_T$:
3) $v \approx v_T$:
4) $v \ge v_T$:

1403. Ինչո՞վ է պայմանավորված մետաղի էլեկտրական դիմադրությունը:

www.atc.am

1) Բյուրեղային ցանցի հանգույցներում տատանվող իոնների հետ ուղղորդված շարժում կատարող էլեկտրոնների բախումներով:
2) Մետաղի ծայրերին կիրառված լարումով:
3) Էլեկտրական դաշտի՝ էլեկտրոնների վրա ազդող ուժով:
4) Ազատ լիցքակիրների առկայությամբ:

1404. Ինչպե՞ս է փոխվում մետաղի տեսակարար դիմադրությունը ջերմաստիճանը բարձրացնելիս:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Պատասխանը կախված է ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայից:

1405. Ի՞նչ տիպի հաղորդականությամբ է օժտված մաքուր կիսահաղորդիչը:

1) Հիմնականում էլեկտրոնային:
2) Հիմնականում խոռոչային:
3) Էլեկտրոնային և խոռոչային:
4) Իոնային:

1406. Ինչպե՞ս է փոխվում կիսահաղորդչի սեփական հաղորդականությունը ջերմաստիճանը բարձրացնելիս:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Մնում է նույնը:
4) Կմեծանա կամ կփոքրանա:

1407. Ինչպե՞ս է փոխվում կիսահաղորդչի հաղորդականությունը այն լուսավորելիս:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Մնում է նույնը:
4) Կմեծանա կամ կփոքրանա:

1408. Քառարժեք գերմանիումին առաջին անգամ խառնեցին եռարժեք ինդիում, իսկ երկրորդ անգամ՝ հնգարժեք ֆոսֆոր: Հիմնականում ի՞նչ տիպի հաղորդականություն կունենա կիսահաղորդիչն առաջին և երկրորդ դեպքերում:

1) Առաջին դեպքում՝ խոռոչային, երկրորդ դեպքում՝ էլեկտրոնային:
2) Առաջին դեպքում՝ էլեկտրոնային, երկրորդ դեպքում՝ խոռոչային:
3) Երկու դեպքում էլ՝ խոռոչային:
4) Երկու դեպքում էլ՝ էլեկտրոնային:

1409. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Դոնորային խառնուկները՝

1) մեծացնում են ազատ էլեկտրոնների թիվը:
2) մեծացնում են խոռոչների թիվը:
3) կիսահաղորդչին հաղորդում են դրական լիցք:
4) կիսահաղորդչին հաղորդում են բացասական լիցք:

www.atc.am

1410. Նկարում պատկերված է կիսահաղորդչում հոսանքի ուժի՝ կիրառված լարումից կախումն արտահայտող գրաֆիկը: Ինչպե՞ս է փոխվում կիսահաղորդչի դիմադրությունը հոսանքի ուժը մեծացնելիս:



1) Չի փոխվում:
2) Աճում է:
3) Նվազում է:
4) Զրո է:

1411. Մետաղից և կիսահաղորդչից պատրաստված դիմադրատարերը շղայում միացված են հաջորդաբար և նրանց նկատմամբ կիրառված է այնպիսի լարում, որ վոլտաչափերի ցուցմունքները հավասար են: Ինչպե՞ս կփոխվեն վոլտաչափերի ցուցմունքները, եթե ցանցի լարումը մեծացնենք:



1) V_1–ի ցուցմունքը մեծ կլինի V_2–ի ցուցմունքից:
2) V_1–ի ցուցմունքը փոքր կլինի V_2–ի ցուցմունքից:
3) Երկու վոլտաչափերի ցուցմունքները կշարունակեն մնալ նույնը:
4) Երկու վոլտաչափերի ցուցմունքներն էլ կաճեն նույն չափով:

1412. Նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված է սինուսի օրենքով փոխվող լարում: Ժամանակից կախված ինչպե՞ս է փոխվում հոսանքն R սպառիչում:





1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1413. Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Բոլոր հեղուկներն էլեկտրական հոսանքի հաղորդիչներ են:
2) Բոլոր հեղուկներն էլեկտրական հոսանքի անհաղորդիչներ են:
3) Հեղուկներն անվանում են նաև էլեկտրոլիտներ:

www.atc.am

4) Աղերի, թթուների, հիմքերի ջրային լուծույթները և աղերի հալույթները, որոնք օժտված են էլեկտրահաղորդականությամբ, կոչվում են էլեկտրոլիտներ:

1414. Ո՞ր երևույթն է կոչվում էլեկտրոլիտային դիսոցում:

1) Էլեկտրոլիտում միայն մի նշանի իոնների առաջացման երևույթը:
2) Էլեկտրոլիտում իոնների քաոսային շարժման երևույթը:
3) Էլեկտրոլիտում լուծված նյութի մոլեկուլների տրոհման հետևանքով իոնների առաջացման երևույթը:
4) Էլեկտրոլիտում էլեկտրոդների վրա նյութի անջատման երևույթը:

1415. Ինչպե՞ս է փոխվում էլեկտրոլիտի հաղորդականությունը ջերմաստիճանը բարձրացնելիս:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Կմեծանա կամ կփոքրանա:

1416. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Ֆարադեյի օրենքը էլեկտրոլիզի համար կապ է հաստատում՝

1) էլեկտրոլիտով անցնող հոսանքի և կիրառված լարման միջև:
2) էլեկտրոդի վրա անջատված նյութի զանգվածի և էլեկտրոլիտով անցած լիցքի միջև:
3) դիսոցված մոլեկուլների կոնցենտրացիայի և կիրառված լարման միջև:
4) էլեկտրոդի վրա անջատված նյութի զանգվածի և միավորված իոնների կոնցենտրացիայի միջև:

1417. Որքա՞ն է նյութի էլեկտրաքիմիական համարժեքը, եթե էլեկտրոլիտով I հոսանք անցնելիս Δt ժամանակում էլեկտրոդի վրա անջատվում է այդ նյութի m զանգված:

1) $\frac{m}{I\Delta t}$:
2) $\frac{I\Delta t}{m}$:
3) $\frac{I}{m\Delta t}$:
4) $\frac{m\Delta t}{I}$:

1418. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Ֆարադեյի հաստատունը (F) թվապես հավասար է՝

1) նյութի M մոլային զանգվածի և նրա ատոմների n արժեքականության M/n հարաբերությանը:
2) էլեկտրոլիտով անցնող այն լիցքին, որի դեպքում էլեկտրոդի վրա անջատվում է M/n-ին թվապես հավասար զանգվածով նյութ:

www.atc.am

3) էլեկտրոդի վրա անջատված նյութի m զանգվածի և էլեկտրոլիտի լուծույթով անցած q լիցքի m / q հարաբերությանը:
4) նյութի M մոլային զանգվածի և նրա ատոմների n արժեքականության Mn արտադրյալին:

1419. Ո՞րն է էլեկտրաքիմիական համարժեքի չափայնությունը ՄՀ-ի հիմնական միավորների համակարգում:

1) կգ/Ա: 3) Կլ/Ա:
2) կգ/վԱ: 4) Կլ/կգ:



1420. Ո՞ր էլեկտրոդի վրա կանջատվի պղինձ:

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1421. Երեք միատեսակ էլեկտրոդներից ո՞րի վրա ավելի շատ պղինձ կանջատվի:



1) ա էլեկտրոդի:
2) բ էլեկտրոդի:
3) գ էլեկտրոդի:
4) Երեք էլեկտրոդի վրա էլ կանջատվի հավասար քանակությամբ:

1422. Ո՞ր մեծությունն են անվանում Ֆարադեյի հաստատուն:

1) Էլեկտրոնի լիցքի և Ավոգադրոյի հաստատունի արտադրյալը:
2) Էլեկտրոնի լիցքի և էլեկտրաքիմիական համարժեքի արտադրյալը:
3) Էլեկտրոնի լիցքի և Բոլցմանի հաստատունի արտադրյալը:
4) Քիմիական համարժեքի և Ավոգադրոյի հաստատունի արտադրյալը:

1423. Էլեկտրոլիզի ժամանակ 4 վ ընթացքում դրական իոնները դեպի կաթոդ են տեղափոխում 2 Կլ դրական լիցք, բացասական իոներն էլ դեպի անոդ են տեղափոխում նույն մեծության բացասական լիցք: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

1) 0: 3) 1 Ա:
2) 0,5 Ա: 4) 2 Ա:

1424. Ի՞նչ մասնիկներով է պայմանավորված էլեկտրական հոսանքը գազերում:

1) Միայն էլեկտրոններով:
2) Միայն բացասական իոններով:

www.atcan

3) Էլեկտրոններով, բացասական և դրական իոններով:
4) Միայն բացասական և դրական իոններով:

1425. Գազապարպումային խողովակում էլեկտրոնի ազատ վազքի երկարությունը l է: Ի՞նչ կինետիկ էներգիա ձեռք կբերի էլեկտրոնն այդ ընթացքում, եթե կիրառված էլեկտրական դաշտի լարվածությունը E է:

1) eE :
2) eEl :
3) eE/l :
4) eEl^2 :

1426. Ինչպե՞ս է փոխվում թույլ իոնացված պլազմայի էլեկտրահաղորդականությունը ջերմաստիճանը բարձրացնելիս:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Մնում է նույնը:
4) Կմեծանա կամ կփոքրանա:

1427. Նկարում պատկերված է գազային պարպման վոլտամպերային բնութագիծը: Գրաֆիկի ո՞ր հատվածն է համապատասխանում ոչ ինքնուրույն պարպմանը:

1) b-d տեղամասը:
2) a-c տեղամասը:
3) c-d տեղամասը:
4) a-d տեղամասը:



www.atc.am

10.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1428. Էլեկտրական ջեռոցով 0,5 րոպեում անցնում է 120 Կլ լիցք: Որքա՞ն է հոսանքի ուժը ջեռոցում:

1429. Հաղորդչով 30 ր-ում անցնում է 1800 Կլ լիցք: Որքա՞ն ժամանակում հաղորդչով կանցնի 600 Կլ լիցք, եթե հոսանքը հաստատուն է:

1430. Լամպում հոսանքի ուժը 0,32 Ա է: Քանի՞ էլեկտրոն կանցնի լամպի թելիկով 0,1վ-ում: Պատասխանը բազմապատկել 10^{-17}-ով:

1431. 5 մմ^2 հատույթի մակերեսով հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունը $25\cdot10^{-5}$ մ/վ է: Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդալարում, եթե էլեկտրոնների կոնցենտրացիան $5\cdot10^{28}$ մ$^{-3}$ է:

1432. Որքա՞ն է հոսանքի ուժը էլեկտրասալիկի պարույրում, եթե այն միացված է 220 Վ լարման ցանցին, իսկ պարույրի դիմադրությունը 44 Օմ է:

1433. Քանի՞ անգամ կմեծանա հոսանքի ուժը հաղորդչում, եթե նրան տրվող լարումը մեծացվի 2 անգամ, իսկ դիմադրությունը փոքրանա 3 անգամ:

1434. Որքա՞ն պետք է լինի 1 մմ^2 լայնական հատույթի մակերեսով կոնստանտանի հաղորդալարի երկարությունը, որպեսզի 10 Վ լարման դեպքում նրա մեջ հոսանքի ուժը լինի 200 մԱ: Կոնստանտանի տեսակարար դիմադրությունը $5\cdot10^{-8}$ Օմ·մ է:

1435. Հաղորդալարը ունի 10 Օմ դիմադրություն: Որքա՞ն կլինի նույն նյութից պատրաստված 3 անգամ երկար և 3 անգամ փոքր տրամագծով հաղորդալարի դիմադրությունը:

1436. Դյուրահալ ապահովիչը նախատեսված է 10 Ա հոսանքի ուժի համար: Այդ ապահովիչը 220 Վ լարման ցանցում օգտագործելիս որքա՞ն պետք է լինի բոլոր սպառիչների ընդհանուր նվազագույն դիմադրությունը:

1437. Որքա՞ն է լարումը 216 կմ երկարությամբ և 12 մմ^2 լայնական հատույթի մակերեսով երկաթե հեռախոսագծի ծայրերին, եթե գծում հոսանքի ուժը 10 մԱ է: Երկաթի տեսակարար դիմադրությունը $10\cdot10^{-8}$ Օմ·մ է:

1438. Ցելսիուսի սանդղակով ո՞ր ջերմաստիճանում արծաթե հաղորդալարի դիմադրությունը երկու անգամ մեծ կլինի, քան $0\ ^0C$-ում: Արծաթի դիմադրության ջերմաստիճանային գործակիցը 0,004 աստ$^{-1}$ է:

www.atc.am

1439. Նույն նյութից պատրաստված L_1 և L_2 ($L_1 = 2L_2$) երկարություններով երկու հաղորդալարեր ունեն նույն զանգվածը: Որքա՞ն է առաջին հաղորդալարի դիմադրության հարաբերությունը երկրորդի դիմադրությանը:

1440. 100 Վ լարմամբ շղթային միացված է էլեկտրալամպը: Երբ էլեկտրալամպին հաջորդաբար միացրին ռեոստատը, շղթայում հոսանքի ուժը 10 Ա-ից նվազեց մինչև 4 Ա: Որքա՞ն է ռեոստատի դիմադրությունը:

1441. 40-րդ նկարում պատկերված շղթայում վոլտաչափերի ցուցմունքներն են $U_1 = 24$ Վ, $U_2 = 18$ Վ, իսկ $R_1 = 3$ Օմ: Որքա՞ն է R_2 դիմադրությունը:



Նկ. 40

1442. Երկու լամպեր, յուրաքանչյուրը 110 Օմ դիմադրությամբ հաջորդաբար միացված են 220 Վ լարման ցանցին: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

1443. 220 Վ լարման ցանցին հաջորդաբար միացրին 20 Օմ և 30 Օմ դիմադրություններով երկու լամպեր: Որքա՞ն է լարումը առաջին լամպի սեղմակներին:

1444. Լամպը և դիմադրատարրը իրար հաջորդաբար միացրել են լարման ցանցին: Լամպի դիմադրությունը 20 Օմ է, իսկ դիմադրատարրինը՝ 0,48 կՕմ: Որքա՞ն է լարումը լամպի վրա, եթե դիմադրատարրին տրված է 120 Վ լարում:

1445. Ռեոստատը պատրաստված է 40 մ երկարությամբ և 0,5 մմ^2 լայնական հատույթի մակերեսով նիկելինի հաղորդալարից: Ռեոստատի սեղմակներին լարումը 96 Վ է: Նիկելինի տեսակարար դիմադրությունը $4 \cdot 10^{-7}$ Օմ·մ է: Որքա՞ն է ռեոստատով անցնող հոսանքի ուժը:

1446. 120 Վ լարման ցանցին իրար զուգահեռ միացված են 200 Օմ և 300 Օմ դիմադրություններով երկու լամպեր (նկ. 41): Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայի ընդհանուր տեղամասում:



Նկ. 41

1447. 4 Օմ և 6 Օմ դիմադրություններով երկու հաղորդիչներ միացված են զուգահեռ: Որքա՞ն է հոսանքի ուժն առաջին հաղորդիչում, եթե երկրորդում այն 2 Ա է:

www.etc.am

1448. 20 Օմ դիմադրությամբ համասեռ հաղորդչի կտորը բաժանեցին երկու հավասար մասերի և միացրին իրար զուգահեռ: Որքա՞ն է կլինի այդ կեսերի միացումից ստացված ընդհանուր դիմադրությունը:

1449. 4 Օմ, 6 Օմ և 12 Օմ դիմադրություններով երեք լամպեր միացված են զուգահեռ: Որքա՞ն է լամպերի ընդհանուր դիմադրությունը:

1450. Որքա՞ն է 42-րդ նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը, եթե $R_1 = 2,4$ Օմ, $R_2 = 8$ Օմ, $R_3 = 2$ Օմ:



Նկ. 42

1451. Զուգահեռ միացված 30 Օմ, 30 Օմ, 60 Օմ դիմադրություններով երեք լամպեր միացված են հաստատուն լարման ցանցին: Շղթայի ընդհանուր տեղամասում հոսանքի ուժը 2 Ա է: Որքա՞ն է ցանցի լարումը:

1452. Երկու սպառիչ հաստատուն լարման ցանցին միացվում են նախ՝ հաջորդաբար, ապա՝ զուգահեռ: Երկրորդ դեպքում շղթայում հոսանքի ուժը 6,25 անգամ ավելի մեծ է, քան առաջին դեպքում: Որքա՞ն է մեծ և փոքր դիմադրությունների հարաբերությունը:

1453. Որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրական հոսանքը հովհարիչի էլեկտրաշարժիչում 30 վ-ում, եթե 220 Վ լարման դեպքում հոսանքի ուժը շարժիչում 0,1 Ա է:

1454. Որքա՞ն էլեկտրաէներգիա է ծախսում 20 վ-ում ավտոմեքենայի էլեկտրալամպը, եթե այն հաշվարկված է 12 Վ լարման և 3,5 Ա հոսանքի ուժի համար:

1455. Որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրական հոսանքը 10 րոպեում, եթե հաղորդչի դիմադրությունը 6 Օմ է, լարումը՝ 6 Վ:

1456. Ի՞նչ դիմադրությամբ է օժտված 220 Վ-ի համար նախատեսված 40 Վտ հզորությամբ լամպը:

1457. Էլեկտրասալիկը նախատեսված է 220 Վ լարման և 3 Ա հոսանքի ուժի համար: Որքա՞ն է հոսանքի հզորությունը էլեկտրասալիկում:

1458. Որքա՞ն ջեմաքաանակ կանջատվի 0,5 ժամում 100 Օմ դիմադրությամբ հաղորդչում 100 մԱ հոսանքի ուժի դեպքում:

1459. Բնակարանում կա 60 Վտ և 40 Վտ հզորություններով երկու լամպ, և էլեկտրաջեռուցիչ 800 Վտ հզորությամբ: Յուրաքանչյուր լամպն օրական միացվում է 5 ժամ, իսկ էլեկտրաջեռուցիչը՝ 2 ժամ: Քանի՞ դրամ

www.ato.am

պետք է վճարել մեկ շաբաթվա (7 օր) էլեկտրաէներգիայի ծախսի համար, եթե 1 կՎտ·ժ-ն արժե 30 դրամ:

1460. 12 Վ ԷլՇՈւ և 1 Օմ ներքին դիմադրությամբ հոսանքի աղբյուրին միացված է 5 Օմ դիմադրությամբ լամպ: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

1461. Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն, եթե կողմնակի ուժերը հոսանքի աղբյուրում 10 Կլ լիցքը մի բևեռից մյուսը տեղափոխելիս կատարում են 20 Ջ աշխատանք:

1462. Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի 40 րոպեում էլեկտրական սալիկին հոսանք մատուցող պղնձե հաղորդալարում, որի երկարությունը 3 մ է, իսկ լայնական հատույթի մակերեսը՝ 1,5 մմ^2: Սալիկի պարույրում հոսանքի ուժը 5 Ա է: Պղնձի տեսակարար դիմադրությունը $1,7\cdot10^{-8}$ Օմ·մ է:

1463. Շղթայի 3 Օմ դիմադրությամբ արտաքին տեղամասում լարման անկումը 4,5 Վ է: Որքա՞ն է շղթային միացված հաստատուն հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն, եթե հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը 1 Օմ է:

1464. Փակ շղթայի արտաքին տեղամասում լարման անկումը 2,4 Վ է: Շղթայում հաստատուն հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն 3 Վ է, իսկ ներքին դիմադրությունը՝ 0,5 Օմ: Որքա՞ն է շղթայի արտաքին տեղամասի դիմադրությունը:

1465. Որոշել լարման անկումը R_1 դիմադրությամբ դիմադրատարրում, եթե հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն 4,5 Վ է, ներքին դիմադրությունը՝ 0,5 Օմ, $R_1 = 3$ Օմ, $R_2 = 1$ Օմ (նկ. 43):



Նկ. 43

1466. Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն, եթե արտաքին շղթայի 1,5 Օմ դիմադրության դեպքում նրա միջով անցնում է 0,8 Ա հոսանք, իսկ արտաքին շղթայի 3,25 Օմ դիմադրության դեպքում՝ 0,4 Ա հոսանք: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1467. 4 Օմ դիմադրությամբ սպառիչը միացվում է 0,5 Օմ ներքին դիմադրություն և 9 Վ ԷլՇՈւ ունեցող հոսանքի աղբյուրին: Որքա՞ն ջերմաքանակ է անջատվում սպառիչում 10 վ-ում:

1468. 1,5 Օմ ներքին դիմադրությամբ հոսանքի աղբյուրին 7,5 Օմ դիմադրությամբ սպառիչ միացնելիս հոսանքի աղբյուրի սեղմակների վրա լարումը 15 Վ է: Ի՞նչ լրիվ հզորություն է զարգացնում աղբյուրը:

www.atc.am

1469. Գեներատորն ունի 0,6 Օմ ներքին դիմադրություն: Այն 6 Օմ արտաքին դիմադրությամբ փակելիս նրա սեղմակներին լարումը լինում 120 Վ է: Որքա՞ն է գեներատորի ԷլՇՈւ-ն:

1470. Կարճ միացման դեպքում հոսանքի աղբյուրով անցնում է 1,5 Ա հոսանք: Եթե հոսանքի աղբյուրը փակենք 4 Օմ դիմադրությամբ հաղորդչով, ապա արտաքին շղթայում հոսանքի հզորությունը կլինի 1 Վտ: Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն:

1471. Ծծմբաթթվային ցինկի լուծույթով անցել է $5\cdot10^4$ Կլ լիցք: Որքա՞ն ցինկ անջատվեց: Ցինկի էլեկտրաքիմիական համարժեքը $3,4\cdot10^{-7}$ կգ/Կլ է: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1472. Քանի՞ ամպեր հոսանքով է ընթացել պղնձի սուլֆատի ջրային լուծույթի էլեկտրոլիզը, եթե 50 րոպեում կաթոդի վրա անջատվել է $59,292\cdot10^{-3}$ կգ պղինձ: Պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը $3,294\cdot10^{-7}$ կգ/Կլ է:

1473. Որքա՞ն պղինձ է անջատվում կաթոդի վրա պղնձարջասպի լուծույթից100 վ-ի ընթացքում, եթե հոսանքի ուժը լուծույթում 2 Ա է: Պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը $33\cdot10^{-8}$ կգ/Կլ է: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1474. Երբ էլեկտրոլիտով անցնում է $1,93\cdot10^5$ Կլ լիցք, կաթոդի վրա անջատվում է 1 մոլ մետաղ: Որքա՞ն է այդ մետաղի արժեքականությունը: Ֆարադեյի հաստատունը 96500 Կլ/մոլ է:

1475. Աղաթթվի (HCl) լուծույթի էլեկտրոլիզի ժամանակ կաթոդի վրա անջատվում է 1գ ջրածին: Որքա՞ն քլոր կանջատվի անոդի վրա այդ նույն ժամանակամիջոցում: Ջրածնի էլեկտրաքիմիական համարժեքը 0,01045 կգ/Կլ է, քլորինը՝ 0,3762 կգ/Կլ: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

www.atc.am

10.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1476. 1000 մկՖ ունակությամբ կոնդենսատորը 0,5 վ-ում լիցքավորել են մինչև 2000 Վ լարումը:

1) Որքա՞ն է կոնդենսատորի շրջադիրի լիցքը:
2) Որքա՞ն է հոսանքի ուժի միջին արժեքը լիցքավորման ընթացքում:

1477. 20 Օմ դիմադրությամբ հաղորդալարի երկարությունը ձգելով մեծացնում են 4 անգամ:

1) Քանի՞ անգամ կփոքրանա կտրվածքի մակերեսը:
2) Որքա՞ն դարձավ հաղորդալարի դիմադրությունը ձգելուց հետո:

1478. 2 մմ^2 կտրվածքի մակերեսով ալյումինե հաղորդալարում էլեկտրական դաշտի լարվածությունը 1,4 Վ/մ է: Ալյումինի տեսակարար դիմադրությունը $2{,}8\cdot10^{-8}$ Օմ·մ է:

1) Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդալարում:
2) Որքա՞ն լիցք կանցնի հաղորդալարի լայնական կտրվածքով 10 վ-ում:

1479. 400 մ երկարությամբ ալյումինե հաղորդալարի ծայրերին 270 Վ լարում կիրառելիս նրա միջով անցնում է 15 Ա հոսանք: Ալյումինի խտությունը $2{,}7\cdot10^3$ կգ/մ^3 է, տեսակարար դիմադրությունը՝ $2{,}7\cdot10^{-8}$ Օմ·մ:

1) Որքա՞ն է հաղորդալարի կտրվածքի մակերեսը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Որքա՞ն է հաղորդալարի զանգվածը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1480. 120 Վ լարման ցանցին միացված է երկու դիմադրություն: Նրանց հաջորդական միացման դեպքում հոսանքի ուժը 3 Ա է, իսկ զուգահեռ միացման դեպքում ընդհանուր հոսանքի ուժը 16 Ա է:

1) Որքա՞ն է փոքր դիմադրությունը:
2) Որքա՞ն է մեծ դիմադրությունը:

1481. Էլեկտրական մալուխը կազմված է պողպատե 5 լարից, որոնցից յուրաքանչյուրի կտրվածքի մակերեսը՝ 0,6 մմ^2 է, և 2 պղնձե հաղորդալարերից՝ 0,85 մմ^2 կտրվածքի մակերեսով: Պողպատի տեսակարար դիմադրությունը $12\cdot10^{-8}$ Օմ·մ է, իսկ պղնձինը՝ $1{,}7\cdot10^{-8}$ Օմ·մ:

1) Որքա՞ն է մալուխի յուրաքանչյուր 1 կմ երկարության դիմադրությունը:
2) Յուրաքանչյուր 1 կմ-ին որքա՞ն լարում պետք է կիրառել մալուխում 0,25 Ա հոսանք ստանալու համար:

www.aic.am

1482. Ջեռուցիչ սարքը նախատեսված է 120 Վ լարման և 2 Ա հոսանքի համար:

1) Որքա՞ն է ջեռուցիչի դիմադրությունը:
2) Սարքին հաջորդաբար ի՞նչ դիմադրություն պետք է միացնել, որպեսզի հնարավոր լինի այն միացնել 220 Վ լարման ցանցին:

1483. 10 Օմ դիմադրություն ունեցող հաղորդչի ծայրերին կիրառված է 12 Վ լարում:

1) Որքա՞ն լիցք կանցնի հաղորդչով 20 վ-ում:
2) Որքա՞ն աշխատանք կկատարի էլեկտրական հոսանքն այդ ընթացքում:

1484. Էլեկտրական շղթայում հաջորդաբար միացված են պղնձե և պողպատե հաղորդալարեր: Պղնձե լարի երկարությունը 10 անգամ մեծ է պողպատե լարի երկարությունից, իսկ կտրվածքի մակերեսը 4 անգամ փոքր է: Պղնձի տեսակարար դիմադրությունը $1{,}8 \cdot 10^{-8}$ Օմ·մ է, իսկ պողպատինը՝ $12 \cdot 10^{-8}$ Օմ·մ:

1) Որքա՞ն է պղնձե և պողպատե լարերի վրա լարման անկումների հարաբերությունը:
2) Որքա՞ն է պղնձե և պողպատե լարերի վրա հզորությունների հարաբերությունը:

1485. Շղթայի հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն 38 Վ է, ներքին դիմադրությունը՝ 1,5 Օմ, իսկ արտաքին դիմադրությունը՝ 17,5 Օմ:

1) Որքա՞ն է հոսանքը շղթայում:
2) Որքա՞ն է լարման անկումն արտաքին դիմադրության վրա:

1486. Արտաքին շղթայի 1 Օմ դիմադրության դեպքում աղբյուրի սեղմակներում լարումը 1,5 Վ է, իսկ 2 Օմ դեպքում՝ 2 Վ:

1) Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը:
2) Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն:

1487. Էլեկտրոլիզի միջոցով ալյումինում ստանալու համար օգտագործել են գուռ, որն աշխատել է 5 Վ լարումով և 40 կԱ հոսանքի ուժով: Ալյումինումի էլեկտրաքիմիական համարժեքը $93 \cdot 10^{-9}$ կգ/Կլ է:

1) Որքա՞ն ժամանակ կպահանջվի 1116 կգ ալյումինում ստանալու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
2) Որքա՞ն կլինի էներգիայի ծախսը: Պատասխանը բազմապատկել 10^{-10}-ով:

www.etc.am

10.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1488. Հինգ միատեսակ դիմադրություններ, յուրաքանչյուրը՝ 3 Օմ, միացված են իրար (նկ. 44): Շղթայի A և B կետերի միջև լարումը 12 Վ է:

1) Որքա՞ն է a և b կետերի պոտենցիալների տարբերությունը:
2) Որքա՞ն է AB տեղամասի ընդհանուր դիմադրությունը:
3) Որքա՞ն է հոսանքի ուժը r_2 դիմադրությունում:



Նկ. 44

1489. $R_1 = 8$ կՕմ և $R_2 = 1$ կՕմ դիմադրություններով հաղորդիչներ միացված են հաջորդաբար (նկ. 45): Շղթայում միացված ամպերաչափը ցույց է տալիս 3 մԱ:

1) Որքա՞ն է A և C կետերի միջև լարման անկումը:
2) Որքա՞ն է A և B կետերի միջև լարման անկումը:
3) Որքա՞ն է B և C կետերի միջև լարման անկումը:



Նկ. 45

1490. Էլեկտրասալիկը կազմված է 3 միատեսակ r դիմադրությամբ առանձին պարույրներից: Եթե այդ պարույրները միացվում են զուգահեռ, ապա թեյնիկում ջուրը եռում է 6 րոպեում: Կորուստներն անտեսել:

1) Որքա՞ն ժամանակում կեռա նույն թեյնիկով ջուրը, եթե այդ պարույրները միացվեն հաջորդաբար:
2) Որքա՞ն ժամանակում կեռա նույն թեյնիկով ջուրը, եթե այդ պարույրները միացվեն 46-րդ (ա) նկարում ցույց տրված ձևով:
3) Որքա՞ն ժամանակում կեռա նույն թեյնիկով ջուրը, եթե այդ պարույրները միացվեն 46-րդ (բ) նկարում ցույց տրված ձևով:



ա բ

Նկ. 46

www.atc.am

1491. 45 Վ ԷլՇՈւ և 1,5 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրի սեղմակներին միացված է 10,5 մ երկարությամբ և 0,2 մմ^2 կտրվածքի մակերեսով նիկելինե հաղորդալար: Նիկելինի տեսակարար դիմադրությունը $0,4 \cdot 10^{-6}$ Օմ·մ է:

1) Որքա՞ն է հաղորդալարի դիմադրությունը:
2) Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդալարում:
3) Որքա՞ն է լարումը հոսանքի աղբյուրի սեղմակներում:

1492. Յուրաքանչյուրը 80 Օմ դիմադրությամբ երկու պարույրներից կազմված էլեկտրասալիկը նախատեսված է 200 Վ լարման համար:

1) Որքա՞ն է էլեկտրասալիկի հզորությունը 1 պարույրը միացնելիս:
2) Որքա՞ն է էլեկտրասալիկի հզորությունը 2 պարույրները հաջորդաբար միացնելիս:
3) Որքա՞ն է էլեկտրասալիկի հզորությունը 2 պարույրները զուգահեռ միացնելիս:

www.atc.am

10.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1493. 47-րդ նկարում պատկերված շղթային տրվել է 90 Վ լարում: բ լամպի դիմադրությունը հավասար է ա լամպի դիմադրությանը, իսկ գ լամպի դիմադրությունը 4 անգամ մեծ է ա լամպի դիմադրությունից: Շղթայի չճյուղավորված մասում հոսանքի ուժը 0,5 Ա է:



Նկ. 47

1) Որքա՞ն է ա և բ լամպերից յուրաքանչյուրի դիմադրությունը:
2) Որքա՞ն է լարման անկումը բ և գ լամպերի վրա:
3) Որքա՞ն է բ լամպով անցնող հոսանքը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն է գ լամպով անցնող հոսանքը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1494. Լամպը 30 Վ ԷլՇՈւ և 2 Օմ ներքին դիմադրություն ունեցող աղբյուրին միացնելիս աղբյուրի սեղմակներում լարումը 28 Վ է:

1) Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:
2) Որքա՞ն է 5 ր-ում կողմնակի ուժերի կատարած աշխատանքը: Պատասխանը բազմապատկել 10^{-3}-ով:
3) Որքա՞ն է 5 ր-ում հոսանքի կատարած աշխատանքը շղթայի արտաքին տեղամասում: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
4) Որքա՞ն է 5 ր-ում հոսանքի կատարած աշխատանքը շղթայի ներքին տեղամասում: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:

1495. 8 Օմ դիմադրություն ունեցող ռեոստատի յուրաքանչյուր կեսին զուգահեռ միացնում են վոլտաչափ, որոնց դիմադրությունները համապատասխանաբար 6 Օմ և 4 Օմ են: Ռեոստատի ծայրերին տրվում է 176 Վ լարում:

1) Որքա՞ն է ռեոստատի առաջին կեսի ընդհանուր դիմադրությունը (վոլտաչափի հետ միասին): Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է ռեոստատի երկրորդ կեսի ընդհանուր դիմադրությունը (վոլտաչափի հետ միասին):
3) Որքա՞ն է առաջին վոլտաչափի ցուցմունքը:
4) Որքա՞ն է երկրորդ վոլտաչափի ցուցմունքը:

www.atc.am

11. ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏ: ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԱԼԻՔՆԵՐ

11.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1496. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Մագնիսական դաշտ կարելի է ստանալ՝

1) միայն հաստատուն մագնիսի միջոցով:
2) միայն շարժվող լիցքի միջոցով:
3) միայն փոփոխական էլեկտրական դաշտի միջոցով:
4) վերը նշված բոլոր եղանակներով:

1497. Ո՞ր դեպքում է շարժվող լիցքավորված մասնիկի շուրջ առաջանում մագնիսական դաշտ:

1) Միայն այն դեպքում, երբ մասնիկը շարժվում է արագացումով:
2) Միայն այն դեպքում, երբ մասնիկը շարժվում է հավասարաչափ:
3) Մասնիկի կամայական շարժման դեպքում:
4) Ոչ մի դեպքում:

1498. Ո՞րն է նախադասության *սխալ* շարունակությունը:
Մագնիսական դաշտն ազդում է՝

1) հոսանքակիր հաղորդչի վրա:
2) հաստատուն մագնիսի վրա:
3) շարժվող լիցքի վրա:
4) անշարժ լիցքի վրա:

1499. Ո՞ր երևույթն է ուսումնասիրվում Էրստեդի փորձով:

1) Մագնիսական սլաքի վարքը հոսանքակիր հաղորդչի մոտակայքում:
2) Լիցքավորված մարմինների փոխազդեցությունը:
3) Հոսանքակիր զուգահեռ հաղորդիչների փոխազդեցությունը:
4) Հաղորդչի ներսում էլեկտրաստատիկ դաշտի բաշխվածությունը:

1500. Ո՞ր բանաձևով կարելի է որոշել մագնիսական ինդուկցիայի վեկտորի մոդուլը:

1) $B = \frac{F_m}{IL}$:
2) $B = \frac{F_m L}{I}$:
3) $B = \frac{IL}{F_m}$:
4) $B = F_m IL$:

www.atc.am

1501. Ո՞րն է մագնիսական դաշտի ինդուկցիայի չափայնությունը ՄՀ-ի հիմնական միավորների համակարգում:

1) $կգ Ա^{-1} վ^{-2}$:
2) $կգ մ Ա^{-2} վ^{-3}$:
3) $կգ մ^2 Ա վ^{-2}$:
4) $կգ մ^2 Ա^{-2} վ^{-1}$:

1502. Ինչպե՞ս են փոխազդում երկու զուգահեռ հոսանքակիր հաղորդիչները, երբ նրանցով անցնող հոսանքներն ունեն նույն ուղղությունը:

1) Փոխազդեցության ուժը զրո է:
2) Հաղորդիչները ձգում են իրար:
3) Հաղորդիչները վանում են իրար:
4) Կախված հոսանքի մեծությունից՝ հաղորդիչները կձգեն կամ կվանեն իրար:

1503. Ի՞նչ պետք է անել հոսանքակիր կոճի մագնիսական բևեռները փոխելու համար:

1) Կոճի մեջ պետք է մտցնել մետաղե միջուկ:
2) Փոխել հոսանքի ուղղությունը:
3) Փոքրացնել հոսանքի ուժը:
4) Մեծացնել հոսանքի ուժը:

1504. Նկարում պատկերված են մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերը տարածության որևէ տիրույթում: Ո՞ր կետում է ինդուկցիայի վեկտորի մոդուլն ավելի փոքր:



1) ա:
2) բ:
3) գ:
4) Ամենուր նույնն է:

1505. Ինչպե՞ս է ուղղված նկարում պատկերված հոսանքակիր հաղորդչի ստեղծած մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը C կետում:



1) Գծագրի հարթության մեջ դեպի վերև:
2) Գծագրի հարթության մեջ դեպի ներքև:
3) Գծագրի հարթությանն ուղղահայաց, դեպի դիտողը:
4) Գծագրի հարթությանն ուղղահայաց, դեպի գծագիրը:

1506. Ինչպե՞ս է ուղղված նկարում պատկերված երկու անվերջ երկար, ուղիղ, իրար զուգահեռ հոսանքակիր հաղորդալարերի արդյունարար մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը հաղորդալարերից հավասարահեռ A կետում:



www.atc.am

1) Ուղղված է դեպի վերև:
2) Զրո է:
3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:
4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը:

1507. Չորս ուղիղ, իրար զուգահեռ հաղորդալարերում հոսանքներն ուղղված են դիտողից դեպի նկարը (ցույց է տրված⊗ նշանով) և անցնում են քառակուսու գագաթներով, որի հարթությունն ուղղահայաց է հաղորդալարերին: Յուրաքանչյուր հոսանքի մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլն A կետում B է: Որքա՞ն է արդյունարար դաշտի ինդուկցիայի մոդուլն A կետում: Հաղորդալարերում հոսանքի ուժը նույնն է:



1) $4B$:
2) $2\sqrt{2}B$:
3) $4\sqrt{2}B$:
4) 0:

1508. Ո՞ր բանաձևով կարելի է որոշել համասեռ մագնիսական դաշտում ուղիղ հոսանքակիր լարի վրա ազդող Ամպերի ուժի մոդուլը:

1) $F = IB\Delta l \sin\alpha$:
2) $F = B\Delta l \sin\alpha$:
3) $F = vB\Delta l \sin\alpha$:
4) $F = vB \sin\alpha$:

1509. Ինչպե՞ս կփոխվի ուղիղ հոսանքակիր հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժի մոդուլը, եթե մագնիսական ինդուկցիայի մոդուլը մեծացնենք երեք անգամ, իսկ հոսանքի ուժը փոքրացնենք երեք անգամ:

1) Կմեծանա 9 անգամ:
2) Կփոքրանա 9 անգամ:
3) Կմեծանա 3 անգամ:
4) Կմնա նույնը:

1510. Հոսանքակիր ուղիղ հաղորդչի և համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի կազմած անկյունը 90^0-ից փոքրացրին մինչև 30^0: Ինչպե՞ս փոխվեց հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը:

1) Չփոխվեց:
2) Նվազեց մինչև զրո արժեքը:
3) Փոքրացավ 2 անգամ:
4) Մեծացավ 2 անգամ:

1511. Ո՞ր դեպքում է մագնիսական դաշտում ուղիղ հոսանքակիր հաղորդչի տեղամասի վրա ազդող Ամպերի ուժը զրո:

1) Երբ ինդուկցիայի վեկտորի և հաղորդչի տեղամասի կազմած անկյունը բութ է:
2) Երբ ինդուկցիայի վեկտորի և հաղորդչի տեղամասի կազմած անկյունը 180^0 է:

www.atc.am

3) Երբ ինդուկցիայի վեկտորի և հաղորդչի տեղամասի կազմած անկյունը 90^0 է:

4) Մագնիսական դաշտում գտնվող հոսանքակիր հաղորդչի վրա ազդող ուժը միշտ զրոյից տարբեր է:

1512. Նկարում պատկերված է հոսանքակիր հաղորդչի լայնական հատույթը համասեռ մագնիսական դաշտում: ⊙ նշանը ցույց է տալիս, որ հոսանքի ուղղությունն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ո՞րն է Ամպերի ուժի ուղղությունը:



1) → 3) ↑

2) ← 4) ↓

1513. Նկարում պատկերված մագնիսական տարաձուն բևեռների միջև տեղադրված է ուղիղ հոսանքակիր հաղորդիչ, որտեղ հոսանքն ուղղված է նկարից դեպի դիտողը (ցույց է տրված ⊙ նշանով): Ինչպե՞ս է ուղղված հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը:



1) → 3) ↑

2) ← 4) ↓

1514. Ի՞նչ տեղի կունենա, եթե համասեռ մագնիսական դաշտում տեղադրվի հոսանքակիր շրջանակ, ինչպես պատկերված է նկարում: Ծանրության ուժն անտեսել:



1) Շրջանակը կշարժվի դեպի վեր:

2) Շրջանակը կշարժվի դեպի ներքև:

3) Շրջանակը կպտտվի կենտրոնով անցնող առանցքի շուրջը, ընդ որում՝ AC կողմը կշարժվի դեպի դիտողը:

4) Շրջանակը կպտտվի կենտրոնով անցնող առանցքի շուրջը, ընդ որում՝ ED կողմը կշարժվի դեպի դիտողը:

1515. AB հաղորդալարով անցնում է հաստատուն հոսանք: Հաղորդալարը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում, որի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը: Ինչպե՞ս է ուղղված հաղորդալարի վրա ազդող Ամպերի ուժը, եթե A կետի պոտենցիալը մեծ է B կետի պոտենցիալից:



1) Ներքև: 3) Աջ:

2) Վերև: 4) Ձախ:

www.atc.am

1516. **Նկարում պատկերված երեք միատեսակ հոսանքակիր հաղորդիչները զուգահեռ են իրար, իսկ հարևան հաղորդիչների հեռավորությունները նույնն է: Ինչպե՞ս է ուղղված 2-րդ հաղորդչի վրա մյուս երկուսի ազդող Ամպերի ուժը:**



1) Դեպի վեր:
2) Դեպի ներքև:
3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը:
4) Զրո է:

1517. **Մագնիսական դաշտն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ի՞նչ ուղղություն ունի a-b հաղորդալարի վրա ազդող Ամպերի ուժը:**



1) Ուղղված է դեպի ձախ:
2) Ուղղված է դեպի աջ:
3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:
4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի նկարը:

1518. **q_1 և q_2 կետային լիցքերը շարժվում են համասեռ մագնիսական դաշտում: q_1 լիցքի արագության վեկտորն ուղղահայաց է ինդուկցիայի $\vec{B}$ վեկտորին, իսկ q_2 լիցքի արագության վեկտորը զուգահեռ է $\vec{B}$ վեկտորին: Պատասխանների ո՞ր զույգն է ճշում այդ լիցքերի վրա ազդող Լորենցի ուժի մոդուլի ճիշտ արտահայտությունները:**

1) $F_1 = q_1 v_1 B$, $F_2 = q_2 v_2 B$:
2) $F_1 = q_1 v_1 B$, $F_2 = 0$:
3) $F_1 = 0$, $F_2 = q_2 v_2 B$:
4) $F_1 = 0$, $F_2 = 0$:

1519. **Ո՞րն է ճախաղասության ճիշտ շարունակությունը:**
Լորենցի ուժն այն ուժն է, որով մագնիսական դաշտն ազդում է՝

1) շարժվող լիցքի վրա:
2) հաստատուն մագնիսի վրա:
3) անշարժ մագնիսի վրա:
4) անշարժ լիցքի վրա:

1520. **Ի՞նչ ուղղություն ունի $\vec{B}$ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում $\vec{v}$ արագությամբ շարժվող դրական լիցքի վրա ազդող Լորենցի ուժը, եթե $\vec{v}$ և $\vec{B}$ վեկտորների ուղղությունները հանընկնում են:**

1) Համընկնում է $\vec{B}$-ի ուղղության հետ:
2) Հակառակ է $\vec{B}$-ի ուղղությանը:

www.atc.am

3) Ուղղահայաց է $\vec{B}$-ին:

4) $\vec{F}=0$:

1521. **m զանգվածով և q լիցքով մասնիկը B ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում պտտվում է R շառավղով շրջանագծային ուղեծրով: Ո՞ր արտահայտությամբ է որոշվում մասնիկի արագությունը:**

1) $\frac{qBR}{m}$:

2) $\frac{m}{qBR}$:

3) $\frac{qmR}{B}$:

4) $\frac{B}{qmR}$:

1522. **Նկարում պատկերված են համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերը և դաշտում շարժվող բացասական լիցավորված մասնիկի վրա ազդող Լորենցի ուժի ուղղությունը: Ո՞ր կողմ է ուղղված մասնիկի արագությունը**



1) Գծագրի հարթությունից դեպի դիտորդը:

2) Դիտորդից դեպի գծագրի հարթություն:

3) Աջ:

4) Ձախ:

1523. **Նկարում պատկերված են համասեռ մագնիսական դաշտում շարժվող լիցքավորված մասնիկի արագության և նրա վրա ազդող Լորենցի ուժի վեկտորները: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը: Ի՞նչ նշան ունի մասնիկի լիցքը:**

1) Դրական:

2) Բացասական:

3) Հնարավոր է լինել դրական կամ բացասական:

4) Էլեկտրաչեզոք է:



1524. **Էլեկտրոնը մտնում է համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին զուգահեռ: Ինչպիսի՞ շարժում կկատարի այն:**

1) Ուղղագիծ հավասարաչափ շարժում:

2) Ուղղագիծ շարժում՝ աճող արագությամբ:

3) Հավասարաչափ շրջանագծային շարժում:

4) Ուղղագիծ շարժում՝ նվազող արագությամբ:

1525. **Ինչպե՞ս կշարժվի լիցքավորված մասնիկը համասեռ մագնիսական դաշտում, եթե նրա սկզբնական արագությունն ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի վեկտորին:**

www.atc.am

1) Շրջանագծով: 3) Ուղիղ գծով:
2) Պարաբոլով: 4) Պարուրագծով:

1526. **Նկարում պատկերված են իրար ուղղահայաց համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածության $\vec{E}$ և համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի $\vec{B}$ վեկտորները ($\vec{E} \perp \vec{B}$): Ինչպե՞ս պետք է ուղղված լինի էլեկտրոնի արագությունը, որպեսզի այդ դաշտերի համատեղ ազդեցությամբ այն շարժվի ուղղագիծ և հավասարաչափ:**



1) Նկարից դեպի դիտողը: 3) $\vec{E}$ -ի ուղղությամբ:
2) $\vec{B}$ -ի ուղղությամբ: 4) Դիտողից դեպի նկարը:

1527. **Նկարում պատկերված են համասեռ մագնիսական դաշտում շարժվող մոդուլով հավասար լիցքերով մասնիկների հետագծեր: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ո՞ր հետագիծն է համապատասխանում ավելի մեծ իմպուլսի մոդուլ ունեցող բացասական լիցքավորված մասնիկի շարժմանը:**



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1528. **Լիցքավորված մասնիկը համասեռ մագնիսական դաշտում պտտվում է շրջանագծով: Ինչպե՞ս կփոխվի շրջանագծի շառավիղը, եթե մասնիկի իմպուլսի մոդուլը մեծացնենք չորս անգամ:**

1) Կմեծանա 2 անգամ: 3) Կմեծանա 4 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ: 4) Կփոքրանա 4 անգամ:

1529. **Na^+ իոնը $\vec{v}$ արագությամբ մտնում է $\vec{B}$ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Ինչի՞ է հավասար իոնի ուղեծրի շառավիղը:**

1) $\frac{mve}{B}$: 3) $\frac{eB}{mv}$:
2) $\frac{mvB}{e}$: 4) $\frac{mv}{eB}$:

1530. **Պրոտոնը և էլեկտրոնը մտնում են համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Համեմատել մասնիկների պտտման T_p և T_e պարբերությունները:**

1) $T_p > T_e$:

www.atc.am

2) $T_p < T_e$:

3) $T_p = T_e$:

4) Հարցին միարժեք պատասխանելու համար տվյալները բավարար չեն:

1531. Պրոտոնը համասեռ մագնիսական դաշտում կատարում է շրջանագծային շարժում: Ինչպե՞ս կփոխվի նրա պտտման հաճախությունը, եթե մագնիսական դաշտի ինդուկցիան մեծանա 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:

2) Կփոքրանա 2 անգամ:

3) Չի փոխվի:

4) Կմեծանա $\sqrt{2}$ անգամ:

1532. Պրոտոնը շարժվում է համասեռ մագնիսական դաշտում R շառավղով շրջանագծով: Որքա՞ն է նույն մագնիսական դաշտում այն շրջանագծի շառավիղը, որով կպտտվի α մասնիկը, եթե ունենա նույն արագությունը:

1) $\frac{R}{4}$:

2) $\frac{R}{2}$:

3) R:

4) $2R$:

1533. m զանգվածով և q լիցքով մասնիկը v արագությամբ մտնում է B ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ, ինդուկցիայի գծերի նկատմամբ α անկյան տակ: Ինչի՞ է հավասար պարուրագծի քայլը, որով շարժվում է մասնիկը:

1) $\frac{mv\sqrt{\cos\alpha}}{qB}$:

2) $\frac{2\pi mv}{qB}$:

3) $\frac{2\pi mv\cos\alpha}{qB}$:

4) $\frac{\pi mv\cos\alpha}{qB}$:

1534. Համասեռ մագնիսական դաշտ են մտնում երկու էլեկտրոն v_1 և v_2 արագություններով և շարժվում են պարուրագծով: Ինչպե՞ս են հարաբերում պարույրների h_1 և h_2 քայլերը:



1) $h_2 > h_1$:

2) $h_2 < h_1$:

3) $h_2 = h_1$:

4) Խնդրի տվյալները բավարար չեն հարցին միարժեք պատասխանելու համար:

www.atc.am

1535. Կոճի մեջ հաստատուն մագնիս մտցնելիս նրանում առաջանում է էլեկտրական հոսանք: Ինչպե՞ս է կոչվում այդ երևույթը:

1) Էլեկտրաստատիկ մակածում:
2) Մագնիսական մակածում:
3) Էլեկտրամագնիսական մակածում:
4) Ինքնամակածում:

1536. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Faրադեյը հայտնաբերեց՝

1) հոսանքակիր հաղորդչի շրջակայքում տեղադրված մագնիսական սլաքի շեղման երևույթը:
2) երկու զուգահեռ հոսանքակիր հաղորդիչների փոխազդեցության երևույթը:
3) մագնիսը կոճի մեջ մտցնելիս կոճում էլեկտրական հոսանքի առաջացման երևույթը:
4) երկու մագնիսական սլաքների փոխազդեցության երևույթը:

1537. Մի դեպքում հաստատուն մագնիսը մետաղե օղակի մեջ մտցնում են հյուսիսային բևեռով, մյուս դեպքում՝ հարավային բևեռով: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:



1) ա դեպքում:
2) բ դեպքում:
3) Ոչ մի դեպքում:
4) Երկու դեպքում էլ:

1538. Մետաղե քառակուսի շրջանակն իր կողմերից մեկի շուրջ պտտվում է համասեռ մագնիսական դաշտում: Առաջին դեպքում պտտման առանցքը համընկնում է մագնիսական ինդուկցիայի վեկտորի ուղղությանը, իսկ երկրորդ դեպքում՝ ուղղահայաց է դրան: Ո՞ր դեպքում շրջանակում կմակածվի հոսանք:

1) Երկու դեպքում էլ:
2) Ոչ մի դեպքում:
3) Միայն առաջին դեպքում:
4) Միայն երկրորդ դեպքում:

1539. Ունենք երեք կոճ, որոնցից յուրաքանչյուրի փաթույթի ծայրերը փակված են ամպերաչափով: Առաջին կոճի մեջ մտցնում են մագնիս, երկրորդի միջից հանում են մագնիսը, իսկ երրորդի մեջ կա անշարժ մագնիս: Ո՞ր կոճում հոսանք կգրանցվի:

1) Միայն առաջինում:
2) Միայն երկրորդում:
3) Միայն երրորդում:
4) Առաջինում և երկրորդում:

www.atc.am

1540. Միմյանցից մեկուսացված երկու շրջանաձև հաղորդիչ կոնտուրները փոխուղղահայաց հարթությունների մեջ տեղադրված են այնպես, որ նրանց կենտրոնները համընկնում են: Նրանցից մեկի միջով անցնում է փոփոխական հոսանք: Կմականա՞վի արդյոք մյուս կոնտուրում ԷլՇՈւ:

1) Չի մականավի:
2) Կմականավի:
3) Կմականավի, եթե կոնտուրով հոսող հոսանքն ունի ժամսլաքի ուղղությունը:
4) Կմականավի, եթե կոնտուրով հոսող հոսանքն ունի ժամսլաքի հակառակ ուղղությունը:

1541. Ի՞նչ միավորով է չափվում մագնիսական դաշտի հոսքը միավորների ՄՀ-ում:

1) 1 Տլ:
2) 1 Հն:
3) 1 Վբ:
4) 1 Ֆ:

1542. Որքա՞ն է 2 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտի հոսքը 0,04 մ^2 մակերես ունեցող հարթ շրջանակով, եթե մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը շրջանակի մակերևույթի նորմալի հետ կազմում է 60^0 անկյուն:

1) 0,02 Վբ:
2) 0,02 $\sqrt{3}$ Վբ:
3) 0,04 Վբ:
4) 0,04 $\sqrt{3}$ Վբ:

1543. Ինչի՞ց է կախված համասեռ մագնիսական դաշտում տեղադրված հարթ շրջանակ թափանցող մագնիսական հոսքի մեծությունը:

1) Միայն մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի մոդուլից:
2) Միայն մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի և շրջանակի հարթության նորմալի կազմած անկյան մեծությունից:
3) Միայն շրջանակի մակերեսից:
4) Վերոհիշյալ կետերում նշված բոլոր մեծություններից:

1544. Որքա՞ն է նկարում պատկերված շրջանակում մագնիսական հոսքի փոփոխությունը շրջանակը 180^0 -ով պտտելիս:

1) $2BS$:
2) $-2BS$:
3) BS:
4) $-BS$:



1545. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն Լենցի կանոնի՝ փակ շրջանակում մակածված հոսանքի մագնիսական դաշտը՝

www.ato.am

1) զրո է:
2) միշտ ունի սկզբնական մագնիսական դաշտի ուղղությունը:
3) միշտ հակառակ է ուղղված սկզբնական մագնիսական դաշտին:
4) հակազդում է շրջանակում մագնիսական հոսքի փոփոխությանը:

1546. Հաստատուն մագնիսը, ընկնելով որոշ բարձրությունից, անցնում է ալյումինե անշարժ օղակի միջով: Ինչպե՞ս են փոխազդում օղակն ու մագնիսն անկման ընթացքում:



1) Իրար մոտենալիս ձգում են, հեռանալիս՝ վանում:
2) Իրար մոտենալիս վանում են, հեռանալիս՝ ձգում:
3) Միշտ վանում են:
4) Միշտ ձգում են:

1547. A և B միատեսակ մագնիսներ բաց են թողնում միևնույն բարձրությունից: Դրանցից առաջինն անկման ժամանակ անցնում է պղնձե օղակի միջով: Ո՞ր մագնիսն ավելի շուտ կհասնի գետնին:

1) A մագնիսը:
2) B մագնիսը:
3) A և B մագնիսները կհասնեն միաժամանակ:
4) Բոլոր պատասխանները հնարավոր են

1548. Ո՞ր արտահայտությամբ կարելի է որոշել շրջանակում էլեկտրամագնիսական մակածման ԷլՇՈւ-ի մոդուլը:

1) $BS\cos\alpha$:
2) $\left|\frac{\Delta\Phi}{\Delta t}\right|$:
3) $qvB\sin\alpha$:
4) $IBl\sin\alpha$:

1549. Նկարում պատկերված մետաղե շրջանակները հաստատուն արագությամբ շարժվում են անհամասեռ ագնիսական դաշտում, որի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է շրջանակների հարթությանը: Ո՞ր շրջանակում կմակածվի հոսանք:



1) Միայն ա շրջանակում:
2) Միայն բ շրջանակում:
3) Երկուսում էլ:
4) Ոչ մեկում:

www.atc.am

1550. Նկարում պատկերված են փակ շրջանակով մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկներ: Ո՞ր գրաֆիկի դեպքում է շրջանակում մակածվում մոդուլով առավելագույն ԷլՇՈւ:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1551. Մետաղե շրջանակում մագնիսական հոսքը փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքում կոնտուրում ԷլՇՈւ չի մակածվում:



1) ա միջակայքում:
2) բ միջակայքում:
3) գ միջակայքում:
4) Բոլոր միջակայքերում ԷլՇՈւ-ն ունի միևնույն արժեքը:

1552. Նկարում պատկերված է կոնտուր թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր նկարում է պատկերված շրջանակում մակածված ԷլՇՈւ-ի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկի մոտավոր պատկերը:





1) ա նկարում:
2) բ նկարում:
3) գ նկարում:
4) դ նկարում:

1553. Նկարում պատկերված է շրջանակ թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում շրջանակում մակածված ԷլՇՈւ-ի մոդուլը կունենա ամենամեծ արժեքը:



1) 0-4 վ միջակայքում:
2) 4-8 վ միջակայքում:
3) 8-9 վ միջակայքում:
4) 9-12 վ միջակայքում:

www.atc.am

1554. **Ուղիղ հաղորդիչը մագնիսական դաշտում $\vec{v}$ արագությամբ շարժվելիս նրանում մակածվում է ε ԷլՇՈւ: Որքա՞ն կլինի մակածման ԷլՇՈւ-ն, եթե հաղորդիչը շարժվի $2\vec{v}$ արագությամբ:**

1) $0{,}5\varepsilon$:
2) ε:
3) 2ε:
4) 4ε:

1555. **Շրջանաձև հաղորդիչ կոնտուրը տեղադրված է հորիզոնական հարթության մեջ: Համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը ուղղված է ուղղաձիգ դեպի վեր և ժամանակի ընթացքում փոխվում է $B = \alpha t$ օրենքով: Ինչպե՞ս է կոնտուրում փոխվում մակածված հոսանքը՝ կախված ժամանակից:**

1) Չի փոխվում:
2) Աճում է:
3) Նվազում է:
4) Խնդրի տվյալները բավարար չեն հարցին միարժեք պատասխանելու համար:

1556. **Ի՞նչ նշանի լիցքերով կլիցքավորվեն նկարում պատկերված կոնտուրի սկզբնապես չլիցքավորված կոնդենսատորի A և B շրջաղիրները, եթե այն տեղադրենք ժամանակի ընթացքում աճող մագնիսական դաշտում: Մագնիսական դաշտի ուժագծերն ուղղահայաց են նկարի հարթությանը և ուղղված են դեպի դիտողը:**



1) A-ն՝ բացասական, B-ն՝ դրական:
2) A-ն՝ դրական, B-ն՝ բացասական:
3) A-ն և B-ն դրական:
4) Կոնդենսատորը չի լիցքավորվի:

1557. **Ո՞ր արտահայտությամբ է որոշվում L ինդուկտիվությամբ կոնտուրով հոսող I հոսանքի ուժի և նրա ստեղծած մագնիսական հոսքի միջև կապը:**

1) LI:
2) $\frac{LI}{t}$:
3) LI^2:
4) $\frac{LI^2}{2}$:

1558. **Ինչի՞ց է կախված հաղորդչի ինդուկտիվությունը:**

1) Հաղորդչի ձևից, չափերից և նրան շրջապատող միջավայրից:
2) Հաղորդչով անցնող հոսանքի ուժից:
3) Հաղորդչի ծայրերին կիրառված լարումից:
4) Միայն հաղորդչի ձևից և չափերից:

www.arc.am

1559. **Շղթան փակելիս ո՞ր լամպում հոսանքի ուժն ամենաուշը կընդունի իր առավելագույն արժեքը:**



1) ա լամպում:
2) բ լամպում:
3) գ լամպում:
4) Բոլոր լամպերում՝ միաժամանակ:

1560. **Ինչպե՞ս կփոխվի կոճի մագնիսական դաշտի էներգիան, եթե նրա մեջ հոսանքի ուժը մեծացնենք չորս անգամ:**

1) Կմեծանա 4 անգամ:
2) Կփոքրանա 4 անգամ:
3) Կմեծանա 16 անգամ:
4) Կփոքրանա 16 անգամ:

1561. **Համեմատեք երկու կոճերի L_1 և L_2 ինդուկտիվությունները, եթե նույն հոսանքի դեպքում առաջին կոճի մագնիսական դաշտի էներգիան 9 անգամ մեծ է երկրորդ կոճի մագնիսական դաշտի էներգիայից:**

1) $L_1 = 9L_2$:
2) $L_2 = 9L_1$:
3) $L_1 = 3L_2$:
4) $L_2 = 3L_1$:

1562. **Նկարում պատկերված է կոճում հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է ինքնամակածման ԷՇՈւ-ն, եթե կոճի ինդուկտիվությունը 6 Հն է:**



1) 36 Վ:
2) 9 Վ:
3) 4 Վ:
4) 3 Վ:

1563. **Տատանողական կոնտուրի կոնդենսատորը լիցքաթափումից հետո նորից վերալիցքավորում է: Ի՞նչ երևույթով է դա պայմանավորված:**

1) Իներցիայով:
2) Էլեկտրամագնիսական մակածումով:
3) Ինքնամակածումով:
4) Ջերմաէլեկտրոնային էմիսիայով:

1564. **Ո՞ր բանաձևով է որոշվում ազատ էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը C էլեկտրաունակությամբ կոնդենսատորից և L ինդուկտիվությամբ կոճից կազմված տատանողական կոնտուրում:**

1) $\sqrt{LC}$:
2) $\frac{1}{\sqrt{LC}}$:
3) $2\pi\sqrt{LC}$:
4) $\frac{1}{2\pi\sqrt{LC}}$:

www.atc.am

1565. **Տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը ν է, կոճի ինդուկտիվությունը՝ L: Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել կոնտուրի կոնդենսատորի էլեկտրաունակությունը:**

1) $C=\dfrac{1}{4\pi^2 L\nu^2}$:

2) $C=\dfrac{1}{2\pi^2\sqrt{L\nu}}$:

3) $C=4\pi^2 L\nu^2$:

4) $C=2\pi^2\sqrt{L\nu}$:

1566. **Ո՞ր տատանողական կոնտուրների էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունները կհամընկնեն, երբ բանալին a դիրքից տեղափոխենք b դիրքը:**



1) Բոլոր կոնտուրներում:
2) Ոչ մի կոնտուրում:
3) A և B կոնտուրներում:
4) B և D կոնտուրներում:

1567. **Ինչպե՞ս կփոխվի կենտուրում սեփական էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը, եթե բանալին a դիրքից տեղափոխենք b դիրք:**



1) Կմեծանա 4 անգամ:
2) Կմեծանա 2 անգամ:
3) Չի փոխվի:
4) Կփոքրանա 2 անգամ:

1568. **Տատանողական կոնտուրում կոնդենսատորի լարումը ժամանակից կախված ներդաշնակ օրենքով փոխվում է ըստ նկարում պատկերված գրաֆիկի: Էներգիայի ինչպիսի՞ փոխակերպում է տեղի ունենում 0-ից $2\cdot10^{-3}$ վ ժամանակամիջոցում:**



1) Կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան փոխակերպվում է կոճի մագնիսական դաշտի

www.atc.am

էներգիայի:

2) Կոճի մագնիսական դաշտի էներգիան փոխակերպվում է կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիայի:
3) Կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան փոխակերպվում է ջերմային էներգիայի:
4) Էլեկտրոնների շարժման էներգիան փոխակերպվում է կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիայի:

1569. Տատանողական կոնտուրում տեղի են ունենում չմարող էլեկտրամագնիսական տատանումներ: Ժամանակի ընթացքում ո՞ր մեծությունն է մնում անփոփոխ:

1) Կոնդենսատորի լիցքը:
2) Կոնդենսատորի էլեկտրական դաշտի լարվածությունը:
3) Կոճի մագնիսական դաշտի էներգիան:
4) Կոճի մագնիսական դաշտի և կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիաների գումարը:

1570. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի թիթեղներից մեկի լիցքը ժամանակի տվյալ պահին $+q_m$ է: Ի՞նչ ամենափոքր ժամանակամիջոցից հետո այդ թիթեղի լիցքը կդառնա $-q_m$, եթե էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը T է, իսկ տատանումների լայնույթը՝ q_m: Կորուստները անտեսել:

1) $T/4$:
2) $T/2$:
3) T:
4) $2T$:

1571. Ինչպե՞ս կփոխվի տատանողական կոնտուրի սեփական տատանումների հաճախությունը, եթե կոճի մեջ տեղադրենք երկաթե միջուկ:

1) Կմեծանա:
2) Կմնա նույնը:
3) Կփոքրանա:
4) Կախված միջուկի ձևից՝ կմեծանա կամ կփոքրանա:

1572. Ինչպե՞ս կփոխվի տատանողական կոնտուրի սեփական տատանումների պարբերությունը, եթե կոնդենսատորի էլեկտրաունակությունը մեծացնենք 36 անգամ, իսկ կոճի ինդուկտիվությունը փոքրացնենք 9 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Կմեծանա 4 անգամ:
4) Կփոքրանա 4 անգամ:

www.atc.am

1573. Լիցքավորված կոնդենսատորը միացվում է ինդուկտիվության կոճին: Էներգիայի ո՞ր մասը կմնա կոնդենսատորում՝ կոնտուրում առաջացած ազատ տատանումների պարբերության $1/6$-ից հետո:

1) 0:
2) $\frac{1}{2}$:
3) $\frac{1}{4}$:
4) $\frac{1}{8}$:

1574. Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը փոքրացրին 9 անգամ: Ինչպե՞ս փոխվեց կոնտուրում սեփական էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը:

1) Մեծացավ 3 անգամ:
2) Մեծացավ 9 անգամ:
3) Փոքրացավ 3 անգամ:
4) Փոքրացավ 9 անգամ:

1575. Լիցքավորված կոնդենսատորը կոճին միացնելուց որքա՞ն ժամանակ անց կոճի մագնիսական դաշտի էներգիան կհասնի իր առավելագույն արժեքին (T-ն տատանումների պարբերությունն է):

1) $\frac{T}{4}$:
2) T:
3) $\frac{T}{2}$:
4) $2T$:

1576. Հաղորդիչ շրջանակը հաստատուն անկյունային արագությամբ պտտվում է համասեռ մագնիսական դաշտում ուժագծերին ուղղահայաց առանցքի շուրջը: Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում շրջանակում մակածված հոսանքի ուժի՝ ժամանակից կախվածությանը:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



1577. 100 Օմ դիմադրություն ունեցող հաղորդչի ծայրերին կիրառված է $U = 200\sin(100\pi t)$ փոփոխական լարում: Ո՞րն է հոսանքի ուժի ակնթարթային արժեքի՝ ժամանակից կախումն արտահայտող բանաձևը:

1) $i = 2\sin(100\pi t)$:
2) $i = 2$:
3) $i = 2\sin(\pi t)$:
4) $i = 2\cos(100\pi t)$:

www.atc.am

1578. **Փոփոխական լարման ժամանակից կախման $U(t) = 280\cos(100t)$ բանաձևում մեծությունները արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է լարման գործող արժեքը:**

1) 280 Վ:
2) 100 Վ:
3) $280\sqrt{2}$ Վ:
4) $140\sqrt{2}$ Վ:

1579. **Փոփոխական հոսանքի շղթայում լարումը փոխվում է $U(t) = 280\cos(200\pi t)$ բանաձևով, որտեղ մեծությունները արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է տատանումների հաճախությունը:**

1) 280 Հց:
2) 200 Հց:
3) $200\,\pi$ Հց:
4) 100 Հց:

1580. **Փոփոխական հոսանքի ուժի գործող արժեքը 5 Ա է: Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը:**

1) 5 Ա:
2) 10 Ա:
3) $5\sqrt{2}$ Ա:
4) $\frac{5}{\sqrt{2}}$ Ա:

1581. **R դիմադրությունով անցնող փոփոխական հոսանքի գործող արժեքը I է, իսկ նրա ծայրերին կիրառված լարման գործող արժեքը՝ U: Որքա՞ն է նրա վրա անջատված միջին հզորությունը:**

1) IU:
2) $2IU$:
3) $\frac{IU}{2}$:
4) $\frac{I}{\sqrt{2}}U$:

1582. **Կոնդենսատորը փչանում է 300 Վ-ից մեծ լարման դեպքում: Ի՞նչ տեղի կունենա, եթե այն միացնենք լարման 220 Վ գործող արժեք ունեցող փոփոխական լարման աղբյուրին:**

1) Կոնդենսատորը կփչանա:
2) Կոնդենսատորը չի փչանա:
3) Պատասխանը կախված է կոնդենսատորի էլեկտրաունակությունից:
4) Պատասխանը կախված է նրա սկզբնական լիցքի մեծությունից:

1583. **S մակերեսով հարթ շրջանակը ν հաճախությամբ պտտվում է B ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում, ինդուկցիայի գծերին ուղղահայաց առանցքի շուրջ: Ո՞րն է շրջանակ թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող բանաձևը, եթե**

www.atc.am

$t = 0$ պահին շրջանակի հարթությունն ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի վեկտորին:

1) $\Phi = BS\cos(2\pi\nu t)$:
2) $\Phi = BS\sin(2\pi\nu t)$:
3) $\Phi = BS\sin\left(\frac{2\pi}{\nu}t\right)$:
4) $\Phi = BS\cos\left(\frac{2\pi}{\nu}t\right)$:

1584. Ո՞ր սարքն է աշխատում էլեկտրամագնիսական մակածման երևույթի հիման վրա:

1) Էլեկտրական հոսանքի գեներատորը:
2) Էլեկտրաշարժիչը:
3) Էլեկտրամագնիսը:
4) Լազերը:

1585. Ի՞նչ նպատակով են էլեկտրակայաններում օգտագործում լարումը բարձրացնող տրանսֆորմատորներ:

1) Էլեկտրահաղորդման գծերում հոսանքի ուժը մեծացնելու համար:
2) Հոսանքի տատանումների հաճախությունը փոքրացնելու համար:
3) Հոսանքի տատանումների հաճախությունը մեծացնելու համար:
4) Էլեկտրահաղորդման գծերում էլեկտրական էներգիայի կորուստները նվազեցնելու համար:

1586. Կկարգավորի՞ արդյոք տրանսֆորմատորը հաստատուն հոսանքը:

1) Կարող է:
2) Կարող է, եթե հոսանքի ուժը շատ մեծ է:
3) Կարող է, եթե հոսանքի ուժը շատ փոքր է:
4) Չի կարող:

1587. Ի՞նչ տրանսֆորմացիայի գործակից ունեցող տրանսֆորմատորից պետք է օգտվել, որպեսզի սպառիչում հոսանքի ուժը մեծանա այն հոսանքի ուժի համեմատությամբ, որն անցնում է սպառիչով՝ առանց տրանսֆորմատորի:

1) K = 1:
2) K < 1:
3) K > 1:
4) K < 0:

1588. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը 120 Վ, իսկ երկրորդային փաթույթում՝ 360 Վ: Առաջնային և երկրորդային փաթույթներում գալարների թվերի ո՞ր տարբերակն է հնարավոր:

1) 100, 300:
2) 300, 100:
3) 360, 120:
4) 120, 240:

www.atc.am

1589. Ո՞ր տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակիցն է 1-ից մեծ:

1) Բարձրացնող տրանսֆորմատորի:
2) Ցածրացնող տրանսֆորմատորի:
3) Որի առաջնային փաթույթի գալարների թիվը փոքր է երկրորդային փաթույթի գալարների թվից:
4) Կամայական տրանսֆորմատորի:

1590. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթի գալարների թիվը 2 անգամ մեծ է երկրորդային փաթույթի գալարների թվից: Ո՞րքա՞ն է երկրորդային փաթույթի ծայրերին լարման լայնույթը, եթե առաջնային փաթույթի ծայրերին լարման լայնույթը U_0 է: Տրանսֆորմատորն աշխատում է պարապ ընթացքով:

1) $2U_0$:
2) $\sqrt{2}U_0$:
3) U_0:
4) $\frac{U_0}{2}$:

1591. Ո՞ր պնդումն է ճիշտ:

ա. Փոփոխական էլեկտրական դաշտը ծնում է մագնիսական դաշտ:

բ. Փոփոխական մագնիսական դաշտը ծնում է մրրկային էլեկտրական դաշտ:

1) Միայն ա-ն:
2) Միայն բ-ն:
3) Եվ՛ ա-ն, և՛ բ-ն:
4) Ո՛չ ա-ն, ո՛չ բ-ն:

1592. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Էլեկտրամագնիսական ալիքները լայնական են:
2) Տատանվող լիցքը միշտ ճառագայթում է էլեկտրամագնիսական ալիք:
3) Էլեկտրամագնիսական ալիք ճառագայթում է միայն փակ տատանողական կոնտուրը:
4) Վակուումում էլեկտրամագնիսական ալիքը տարածվում է լույսի արագությամբ:

1593. Ըստ միջազգային համաձայնագրի՝ վտանգի «SOS» ռադիոազդանշանի ալիքի երկարությունը պետք է լինի 600 մ: Ո՞րքա՞ն է ազդանշանի հաճախությունը:

1) $2 \cdot 10^6$ Հց:
2) $0{,}5 \cdot 10^6$ Հց:
3) $3 \cdot 10^6$ Հց:
4) $6 \cdot 10^6$ Հց:

1594. Ո՞ր պնդումներն են ճիշտ:

www.atc.am

I. **Մաքսվելը Ֆարադեյի էլեկտրամագնիսական մակածման փորձերի հիման վրա ստեղծեց էլեկտրամագնիսական դաշտի տեսությունը և կանխատեսեց էլեկտրամագնիսական ալիքների գոյությունը:**

II. **Մաքսվելի էլեկտրամագնիսական դաշտի տեսության հիման վրա Հերցը փորձով ապացուցեց էլեկտրամագնիսական ալիքների գոյությունը:**

III. **Հերցի փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա Ֆարադեյը հայտնագործեց էլեկտրամագնիսական մակածման օրենքը:**

1) Միայն I-ը և II-ը:
2) Միայն II-ը և III-ը:
3) Միայն I-ը և III-ը:
4) Բոլոր պնդումներն էլ ճիշտ են:

1595. Հաշվարկման իներցիալ համակարգում վակուումում ինչպիսի՞ շարժման ժամանակ լիցքավորված մասնիկը չի ճառագայթում էլեկտրամագնիսական ալիք:

1) Կամայական շարժման:
2) Ուղղագիծ հավասարաչափ շարժման:
3) Արագացող շարժման:
4) Տատանողական շարժման:

1596. Հարթ էլեկտրամագնիսական ալիքի էլեկտրական դաշտի լարվածության լայնութային արժեքը մեծացավ 2 անգամ: Քանի՞ անգամ մեծացավ ալիքի մագնիսական դաշտի ինդուկցիայի լայնութային արժեքը:

1) Մեծացավ 2 անգամ:
2) Մեծացավ 4 անգամ:
3) Մեծացավ 16 անգամ:
4) Մնաց նույնը:

1597. Ո՞ր էլեկտրամագնիսական ճառագայթման հաճախությունն է ավելի մեծ:

1) Ռադիոալիքների:
2) Տեսանելի լույսի:
3) Ենթակարմիր ճառագայթման:
4) Անդրմանուշակագույն ճառագայթման:

1598. Նկարում պատկերված է էլեկտրամագնիսական ալիքների սանդղակի մի մասը: Պատասխանների ո՞ր զույգն է նշում A և B տիրույթների ճառագայթումների ճիշտ անվանումները:

A	Տեսանելի լույս	B	Ռենտգենյան Ճառագայթում

1) A-ն՝ ենթակարմիր, B-ն՝ անդրմանուշակագույն:
2) A-ն՝ անդրմանուշակագույն, B-ն՝ ջերմային ճառագայթում:
3) A-ն՝ անդրմանուշակագույն, B-ն՝ ենթակարմիր:
4) A-ն՝ ջերմային, B-ն՝ γ-ճառագայթում:

www.atc.am

1599. Համեմատեք էլեկտրամագնիսական ալիքների ուժգնությունները, որոնք ճառագայթում են ներդաշնակորեն տատանվող էլեկտրական լիցքերը միավոր ժամանակում: Տատանման լայնույթները իրար հավասար են, իսկ հաճախությունները՝ համապատասխանաբար $\upsilon_1 = 1$ ՄՀց և $\upsilon_2 = 10$ ՄՀց են:

1) $\frac{W_2}{W_1} = 10$:
2) $\frac{W_2}{W_1} = 0{,}1$:
3) $\frac{W_2}{W_1} = 10^{-4}$:
4) $\frac{W_2}{W_1} = 10^{4}$:

1600. Կոճի ինդուկտիվությունն ուղիղ համեմատական է նրա գալարների թվի քառակուսուն: Ինչպե՞ս պետք է փոխել տատանողական կոնտուրի կոճի գալարների թիվը, որպեսզի նրա առաքած էլեկտրամագնիսական ալիքների երկարությունը մեծանա 2 անգամ:

1) Մեծացնել 4 անգամ:
2) Մեծացնել 2 անգամ:
3) Փոքրացնել 2 անգամ:
4) Փոքրացնել 4 անգամ:

www.atc.am

11.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1601. Ուղղագիծ հաղորդիչը, որի երկարությունը 0,4 մ է, տեղավորված է համասեռ մագնիսական դաշտում՝ ուղղահայաց նրա ինդուկցիայի վեկտորին, որի մոդուլը 10 Տլ է: Որքա՞ն է հոսանքակիր հաղորդչի վրա մագնիսական դաշտի կողմից ազդող ուժը, եթե նրանում հոսանքի ուժը 2 Ա է:

1602. Որքա՞ն է այն համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը, որտեղ 0,2 մ երկարությամբ ուղղագիծ հաղորդչի վրա ազդող առավելագույն ուժը 1,8 Ն է, եթե նրա մեջ հոսանքի ուժը 4,5 Ա է:

1603. 2 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտը ի՞նչ առավելագույն ուժով կազդի 0,1 մ երկարությամբ հաղորդչի վրա, եթե նրա մեջ հոսանքի ուժը 20 Ա է:

1604. Համասեռ մագնիսական դաշտում մագնիսական ինդուկցիայի գծերի նկատմամբ 30^0 անկյան տակ տեղավորված 0,4 մ երկարությամբ հաղորդալարի վրա, որի մեջ հոսանքի ուժը 20 Ա է, մագնիսական դաշտն ազդում է 12 Ն ուժով: Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը:

1605. Ուղիղ հոսանքակիր հաղորդիչը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է հաղորդալարին: Քանի՞ անգամ կփոքրանա հոսանքակիր հաղորդչի վրա ազդող մագնիսական դաշտի ուժը, եթե հաղորդալարը պտտենք այնպես, որ այն մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի հետ կազմի 30^0 անկյուն:

1606. Հորիզոնական ուղղված 0,6 Տլ ինդուկցիա ունեցող համասեռ մագնիսական դաշտում 20 սմ երկարությամբ գլանաձև համասեռ հաղորդիչը հորիզոնական դիրքով կախված է ուժաչափից: Երբ հաղորդչով անցնում է 5 Ա հոսանք, ուժաչափի ցուցմունքը զրո է: Որքա՞ն է հաղորդչի զանգվածը, եթե այն դրված է ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1607. 0,2 կգ զանգված և 0,3 մ երկարությամբ ուղղանկյուն հատույթ ունեցող հաղորդիչ ձողը տեղադրված է հորիզոնական հարթության վրա, իսկ ուղղաձիգ ուղղված համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիան 0,04 Տլ է: Որքա՞ն պետք է լինի հոսանքի ուժը հաղորդչում, որպեսզի այն

www.atc.am

շարժվի հավասարաչափ, եթե ձողի և հարթության միջև շփման գործակիցը 0,24 է:

1608. 0,1 մ երկարությամբ ուղղանկյուն հատույթ ունեցող հաղորդիչ ձողը տեղադրված է հորիզոնի հետ 30^0 անկյուն կազմող թեք հարթության վրա (նկ. 48): Որքա՞ն պետք է լինի թեք հարթությանն ուղղահայաց համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը, որպեսզի ձողը լինի դադարի վիճակում, եթե նրա միջով անցնում է 20 Ա հոսանք: Ձողի զանգվածը 2 կգ է: Շփումն անտեսել:



Նկ. 48

1609. Լիցքավորված մասնիկն ի՞նչ արագությամբ է մտնում 5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ, եթե նրա արագության ուղղությունն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերին, և մագնիսական դաշտի կողմից նրա վրա ազդում է $4 \cdot 10^{-11}$ Ն ուժ: Մասնիկի լիցքը $0{,}8 \cdot 10^{-12}$ Կլ է:

1610. Ի՞նչ ուժով է ազդում 6 Տլ ինդուկցիայով մագնիսական դաշտը $3 \cdot 10^{-5}$ Կլ լիցքով մասնիկի վրա, որի արագությունը 10^5 մ/վ է և ինդուկցիայի վեկտորի ուղղության հետ կազմում է 30^0 անկյուն:

1611. Էլեկտրոնը շարժվում է $7{,}2 \cdot 10^{-4}$ Տլ ինդուկցիա ունեցող համասեռ մագնիսական դաշտում շրջանագծով: Քանի՞ պտույտ կկատարի էլեկտրոնը $2\pi \cdot 10^{-6}$ վ-ում:

1612. Էլեկտրոնը և պրոտոնը միևնույն համասեռ մագնիսական դաշտի ազդեցությամբ հավասարաչափ շարժվում են շրջանագծերով: Էլեկտրոնի պտտման հաճախությունը քանի՞ անգամ է մեծ պրոտոնի պտտման հաճախությունից: Պրոտոնի զանգվածը 1836 անգամ մեծ է էլեկտրոնի զանգվածից:

1613. Պրոտոնը շարժվում է 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց հարթության մեջ: Որքա՞ն է պրոտոնի հետագծի շառավիղը, եթե այն շարժվում է $2 \cdot 10^7$ մ/վ արագությամբ: Պրոտոնի զանգվածը $1{,}68 \cdot 10^{-27}$ կգ է: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1614. Միևնույն լիցքով և կինետիկ էներգիայով, բայց տարբեր զանգվածներով երկու իոններ մտնում են համասեռ մագնիսական դաշտ: Առա-

www.atc.am

ջին իոնը պտտվում է 0,03 մ շառավղով շրջանագծով, իսկ երկրորդը՝ 0,015 մ: Որքա՞ն է առաջին և երկրորդ իոնների զանգվածների հարաբերությունը:

1615. Լիցքավորված մասնիկը հաստատուն արագությամբ շարժվում է $5\cdot10^4$ Վ/մ լարվածությամբ էլեկտրական և 0,25 Տլ ինդուկցիայով մագնիսական համասեռ դաշտերում: $\vec{E}$ և $\vec{B}$ վեկտորները փոխուղղահայաց են: Որքա՞ն է մասնիկի շարժման արագությունը: Մասնիկի ծանրության ուժն անտեսել: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:

1616. Որքա՞ն է $3\cdot10^{-9}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում շարժվող պրոտոնի արագացումը, եթե այն մագնիսական դաշտ է մտնում ինդուկցիայի գծերին ուղղահայաց 200 մ/վ արագությամբ: Պրոտոնի լիցքի հարաբերությունը զանգվածին 10^8 Կլ/կգ է:

1617. Լիցքավորված մասնիկը, ինդուկցիայի գծերի նկատմամբ սուր անկյան տակ մտնելով համասեռ մագնիսական դաշտ, շարժվում է գալարագծով, որի քայլը 0,314 մ է, իսկ շառավիղը՝ 0,05 մ: Ինդուկցիայի գծերի նկատմամբ ի՞նչ անկյան տակ է մասնիկը մտել մագնիսական դաշտ:

1618. Էլեկտրոնը շարժվում է $7{,}85\cdot10^{-3}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Որքա՞ն է էլեկտրոնի պտտման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:



Նկ. 49

1619. 49-րդ նկարում պատկերված է փակ կոնտուր թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է կոնտուրում մակածված ԷՇՈւ-ի մոդուլը 0-4 վ միջակայքում:

1620. Ունենք 10 գալարանոց կոճ: Որքա՞ն է յուրաքանչյուր գալար ներթափանցող մագնիսական հոսքի սկզբնական արժեքը, եթե այն 1 վ-ում մինչև 0 արժեքը հավասարաչափ նվազելիս կոճում մակածվում է 10 Վ ԷՇՈւ:

1621. Հաղորդիչ կոնտուր թափանցող մագնիսական հոսքը հավասարաչափ փոխվեց 45 Վբ-ով՝ ստեղծելով 15 Վ մակածման ԷՇՈւ: Որքա՞ն է մագնիսական հոսքի փոփոխման ժամանակը:

www.atc.am

1622. Հաղորդալարի 500 գալար ունեցող սոլենոիդում մագնիսական հոսքը 0,005 վ-ում հավասարաչափ նվազում է 0,009 Վբ-ից մինչև 0,005 Վբ: Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ի մոդուլը սոլենոիդում:

1623. Հաղորդիչ կոնտուր ներթափանցող մագնիսական հոսքը 0,05 վ-ում հավասարաչափ նվազում է 0,08 Վբ-ով: Որքա՞ն է մակածված հոսանքի մեծությունը կոնտուրում, եթե կոնտուրի դիմադրություն ը 0,2 Օմ է:

1624. $3\cdot10^{-2}$ մ^2 մակերեսով անշարժ կոնտուրը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ կոնտուրի հարթությունն ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի վեկտորին: Որքա՞ն է ինդուկցիայի վեկտորի փոփոխման արագության մոդուլը, եթե նրա հավասարաչափ փոփոխման դեպքում կոնտուրում մակածվում է 0,9 Վ ԷլՇՈւ:

1625. Համասեռ մագնիսական դաշտը, որտեղ տեղավորված է 0,2 մ^2 մակերեսով հարթ կոնտուր, նվազում է 20 Տլ/վ հաստատուն արագությամբ: Կոնտուրի հարթության նորմալը մագնիսական ինդուկցիայի գծերի հետ կազմում է 60^0 անկյուն: Որոշել կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ն:

1626. Որքա՞ն է մակածման ԷլՇՈւ-ն 0,5 մ երկարությամբ ուղիղ հաղորդալարում, որը 4 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում տեղափոխվում է 5 մ/վ արագությամբ՝ մագնիսական ինդուկցիայի վեկտորի նկատմամբ 30^0 անկյան տակ:

1627. 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում նրա ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ շարժվում է 0,2 մ երկարությամբ հաղորդիչը: Որքա՞ն է հաղորդչի շարժման արագությունը, եթե այնտեղ մակածվում է 0,2 Վ ԷլՇՈւ:

1628. Ի՞նչ արագությամբ պետք է տեղափոխել 0,5 մ երկարություն ունեցող հաղորդիչը համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերի նկատմամբ 30^0 անկյան տակ, որպեսզի հաղորդչում մակածվի 1 Վ ԷլՇՈւ: Մագնիսական դաշտի ինդուկցիան 0,2 Տլ է:

1629. 100 սմ^2 մակերեսով հաղորդիչ գալարը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում, որի ինդուկցիայի գծերը ուղղահայաց են գալարի հարթությանը: Գալարը խզված է մի ինչ որ կետում, և խզվածքի մեջ միացված է 10 մկՖ ունակությամբ կոնդենսատոր: Մագնիսական դաշտի ինդուկցիան փոխվում է հավասարաչափ՝ 50 Տլ/վ արագությամբ: Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

www.atc.am

1630. Որքա՞ն է սոլենոիդի մագնիսական դաշտի էներգիան, որտեղ 10 Ա հոսանքի ուժի դեպքում առաջանում է 0,6 Վբ մագնիսական հոսք:

1631. Որքա՞ն է կոճի ինդուկտիվությունը, եթե 0,8Ա հոսանքի ուժի դեպքում մագնիսական դաշտն օժտված է 0,64 Ջ էներգիայով:

1632. Որքա՞ն է կոճի ինդուկտիվությունը, եթե 0,2 Ա հոսանքի ուժի դեպքում կոճում առաջացած մագնիսական հոսքը 0,6 Վբ է:

1633. Ռեոստատի օգնությամբ կոճում հոսանքի ուժը մեծացնում են 2 Ա/վ արագությամբ: Կոճի ինդուկտիվությունը 2 Հն է: Որքա՞ն է ինքնամակածման ԷլՇՈւ-ի մեծությունը:

1634. Որքա՞ն է կոճի ինդուկտիվությունը, որտեղ 0,3 վ-ում հոսանքի ուժի 2 Ա հավասարաչափ փոփոխությունն առաջացնում է 20 մՎ ինքնամակածման ԷլՇՈւ: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1635. Սոլենոիդի միջով, որի ինդուկտիվությունը 0,4 Հն է, իսկ լայնական հատույթի մակերեսը՝ $10\,սմ^2$, անցնում է 0,5 Ա հոսանք: Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիան սոլենոիդում, եթե այն ունի 100 գալար: Դաշտը համարել համասեռ:

1636. $4\cdot10^{-2}$ Հն ինդուկտիվությամբ սոլենոիդում հոսանքի ուժը հավասարաչափ 40 Ա-ով աճելիս ինքնամակածման ԷլՇՈւ-ն 0,8 Վ է: Որքա՞ն ժամանակում է փոխվել հոսանքի ուժը:

1637. Սոլենոիդի գալարներով անցնող հոսանքի ուժը 0,25 վ-ի ընթացքում հավասարաչափ նվազում է 5 Ա-ով, որի հետևանքով սոլենոիդում ինքնամակածման ԷլՇՈւ-ն 200 Վ է: Որքա՞ն է սոլենոիդի ինդուկտիվությունը:

1638. Տատանողական կոնտուրը կազմված է $12{,}5\cdot10^{-3}$ Հն ինդուկտիվությամբ կոճից և $2\cdot10^{-7}$ Ֆ ունակությամբ կոնդենսատորից: Որքա՞ն է կոնտուրում ազատ տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1639. Տատանողական կոնտուրում սեփական տատանումների հաճախությունը 800 Հց է: Որքա՞ն կլինի կոնտուրում սեփական տատանումների հաճախությունը, եթե կոնդենսատորի շրջաղիրների միջև հեռավորությունը մեծացնենք 6,25 անգամ:

1640. Քանի՞ անգամ կփոքրանա տատանողական կոնտուրի տատանումների սեփական հաճախությունը, եթե կոնդենսատորի ունակությունը

www.atc.am

մեծացվի 625 անգամ, իսկ կոճի ինդուկտիվությունը փոքրացվի 16 անգամ: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1641. Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը $2 \cdot 10^{-4}$ Հն է, իսկ ազատ տատանումների շրջանային հաճախությունը՝ 10^6 վ$^{-1}$: Որքա՞ն է այդ կոնտուրի կոնդենսատորի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1642. Տատանողական կոնտուրի էլեկտրաունակությունը 50 պՖ է, իսկ նրանում առաջացած ներդաշնակ տատանումների հաճախությունը՝ 10^8 Հց: Որքա՞ն է կոնտուրի ինդուկտիվությունը: Ընդունել $\pi^2 = 10$: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1643. Տատանողական կոնտուրը բաղկացած է 10^{-6} Ֆ ունակությամբ կոնդենսատորից և 4 ՀՆ ինդուկտիվությամբ կոճից: Լիցքի լայնութային արժեքը 10^{-4} Կլ է: Որքա՞ն է հոսանքի ուժի տատանման լայնույթը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1644. Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը 0,2 Հն է, իսկ հոսանքի ուժի տատանումների լայնույթը՝ 0,04 Ա: Գտնել կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան այն պահին, երբ հոսանքի ուժի ակնթարթային արժեքը 2 անգամ փոքր է լայնույթայինից: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:

1645. Լարման տատանման լայնույթը կոնտուրում 280 Վ է: Որքա՞ն է լարման ակնթարթային արժեքն այն պահին, երբ կոճի մագնիսական դաշտի էներգիան հավասար է կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիային:

1646. 40 մկՖ էլեկտրաունակությամբ կոնդենսատորը լիցքավորում են մինչև 500 Վ լարում և միացնում ինդուկտիվության կոճին, որտեղ ծագում են մարող տատանումներ: Որքա՞ն ջերմաքանակ կանջատվի կոնտուրում տատանումների լրիվ մարման ընթացքում:

1647. Ուղղանկյունաձև մետաղե շրջանակը պտտվում է համասեռ մագնիսական դաշտում 10 վ$^{-1}$ հաճախությամբ: Որքա՞ն է մագնիսական ինդուկցիայի առավելագույն հոսքը շրջանակով, եթե մակածման ԷՇՈւ-ի լայնութային արժեքը 62,8 Վ է:

1648. Քանի՞ գալար ունի 0,05 մ^2 մակերես ունեցող շրջանակը, եթե 0,1 Տլ ինդուկցիայով համասեռ դաշտում 60 վ$^{-1}$ անկյունային հաճախությամբ պտտելիս մակածված ԷՇՈւ-ի լայնութային արժեքը 30 Վ է:

www.aic.am

1649. 220Վ լարման գործող արժեք ունեցող փոփոխական հոսանքի շղթային միացված է 77 Օմ ակտիվ դիմադրությամբ սպառիչ: Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը:

1650. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը՝ 250 Վ է: Որքա՞ն է լարումը երկրորդային փաթույթի ծայրերին, եթե տրանսֆորմացիայի գործակիցը 10 է:

1651. Որքա՞ն է լարումը 900-գալարանոց տրանսֆորմատորի առաջնային փաթույթում, եթե երկրորդային փաթույթն ունի 600 գալար, իսկ լարումը նրա ծայրերին 120 Վ է:

1652. Բեռնավորված տրանսֆորմատորի առաջնային փաթույթում հոսանքի ուժը 0,5 Ա է, իսկ լարումը նրա ծայրերին՝ 220 Վ: Երկրորդային փաթույթում հոսանքի ուժը 11 Ա է, իսկ լարումը՝ 9,5 Վ: Որքա՞ն է տրանսֆորմատորի ՕԳԳ-ն՝ տոկոսներով:

1653. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթը փոփոխական հոսանքի ցանցին միացնելիս երկրորդային փաթույթի ծայրերին առաջանում է 16,2 Վ լարում, իսկ երկրորդայինը նույն ցանցին միացնելիս լարումն առաջնայինի ծայրերին 125 Վ է: Որքա՞ն է ցանցի լարումը:

1654. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթը փոփոխական հոսանքի ցանցին միացնելիս երկրորդային փաթույթում առաջանում է $13\frac{1}{3}$ Վ լարում: Միևնույն ցանցին երկրորդային փաթույթը միացնելիս առաջնային փաթույթի սեղմակներում առաջանում է 120 Վ լարում: Որքա՞ն է տրանսֆորմատորի առաջնային և երկրորդային փաթույթների գալարների թվերի հարաբերությունը:

1655. Որքա՞ն է վակուումում տարածվող 6 մ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքի տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1656. Տատանողական կոնտուրը վակուումում ճառագայթում է 1800 մ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիք: Որքա՞ն է կոնտուրի ինդուկտիվությունը, եթե նրա ունակությունը 10^5 պՖ է: Ընդունել $\pi^2 = 10$: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1657. Ռադիոընդունիչի տատանողական կոնտուրը համալարված է $15 \cdot 10^6$ Հց հաճախության ալիքի վրա: Քանի՞ անգամ պետք է մեծացնել կոն-

տուրի ունակությունը, որպեսզի այն համալարվի 100 մ երկարության ալիքի վրա:

1658. Տատանողական կոնտուրն ունի $8\cdot10^{-12}$ Ֆ էլեկտրաունակությամբ կոնդենսատոր և $8\cdot10^{-4}$ Հն ինդուկտիվությամբ կոճ: Ի՞նչ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիք է ճառագայթում այդ կոնտուրը: Ընդունել $\pi = 3$:

1659. Տատանողական կոնտուրի ճառագայթած ալիքի երկարությունը վակուումում 3 մ է: Որքա՞ն կփոխվի առաքած ալիքի երկարությունը, եթե կոնդենսատորի ունակությունը մեծացնենք 9 անգամ:

1660. Ռադիոտեղորոշիչի անտենայից ուղարկված ռադիոազդանշանը անդրադառնալով օբյեկտից, վերադարձել է ռադիոտեղորոշիչ ճառագայթումից $2\cdot10^{-5}$ վ հետո: Ի՞նչ հեռավորության վրա է գտնվում օբյեկտը ռադիոտեղորոշիչ անտենայից:

www.atc.am

11.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1661. Էլեկտրոնը $1{,}6\cdot10^7$ մ/վ արագությամբ շարժվում է 0,01 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ:

1) Որքա՞ն է էլեկտրոնի վրա ազդող մագնիսական դաշտի ուժը: Պատասխանը բազմապատկել 10^{16}-ով:

2) Որքա՞ն է էլեկտրոնի հետագծի շառավիղը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1662. Էլեկտրոնը, դադարի վիճակից անցնելով 45 Վ արագացնող պոտենցիալների տարբերություն, մտնում է 10^{-3} Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ, ինդուկցիայի գծերին ուղղահայաց:

1) Որքա՞ն է էլեկտրոնի շարժման արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

2) Որքա՞ն է էլեկտրոնի հետագծի շառավիղը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1663. Էլեկտրոնը մտնում է B = 0,1 մՏլ ինդուկցիայով և L = 2 մ լայնությամբ համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին և շերտին ուղղահայաց (նկ.50): Էլեկտրոնի տեսակարար լիցքի մոդուլը՝ $\frac{e}{m}=1{,}7\cdot10^{11}$ Կլ/կգ է:



Նկ. 50

1) Որքա՞ն պետք է լինի էլեկտրոնի հետագծի առավելագույն կորության շառավիղը, որպեսզի այն չանցնի այդ շերտը:

2) Էլեկտրոնի ինչպիսի՞ առավելագույն արագության դեպքում այն չի կարողանա անցնել այդ շերտը: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1664. $2\cdot10^3$ Օմ դիմադրությամբ հարթ շրջանակը տեղադրված է մագնիսական դաշտում: Շրջանակ թափանցող մագնիսական հոսքը 10^{-3} վ-ի ընթացքում հավասարաչափ նվազում է 6 Վբ-ով:

1) Որքա՞ն է շրջանակում մակածված ԷՇՈւ-ն:

2) Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի մեծությունը:

1665. 100 գալար պարունակող սոլենոիդի առանցքը և մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորն իրար զուգահեռ են: $2\cdot10^{-3}$ վ-ում ինդուկցիայի

www.atc.am

վեկտորը 0,5 Տլ-ից հավասարաչափ փոքրացավ մինչև 0,1 Տլ, որի հետևանքով կոճում մակածվեց 8 Վ էլՇՈւժ:

1) Որքա՞ն է ինդուկցիայի վեկտորի փոփոխման արագության մոդուլը:
2) Որքա՞ն է սոլենոիդի գալարի լայնական հատույթի մակերեսը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

1666. 10 Օմ դիմադրությամբ և 0,5 Հն ինդուկտիվությամբ սոլենոիդի ծայրերին կիրառված է 60 Վ լարում:

1) Որքա՞ն է սոլենոիդով անցնող հոսանքի ուժը:
2) Որքա՞ն է սոլենոիդի մագնիսական դաշտի էներգիան:

1667. Տատանողական կոնտուրում հոսանքի ուժը փոխվում է $I = 0,1\sin(10^6 \cdot t)$ բանաձևով, որտեղ մեծությունները արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

1) Որքա՞ն է տատանումների շրջանային հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:
2) Որքա՞ն է այդ կոնտուրի կոնդենսատորի ունակությունը, եթե կոճի ինդուկտիվությունը $2 \cdot 10^{-4}$ Հն է: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1668. Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի լարման լայնութային արժեքը մեծացրին 30 Վ-ով, որի շնորհիվ կոնտուրով անցնող հոսանքի ուժի լայնութային արժեքը մեծացավ 3 անգամ:

1) Որքա՞ն էր լարման լայնութային արժեքը մինչև մեծացնելը:
2) Որքա՞ն է լարման լայնութային արժեքը մեծացնելուց հետո:

1669. $2 \cdot 10^{-6}$ Ֆ ունակությամբ լիցքավորված կոնդենսատորը միացրին $8 \cdot 10^{-2}$ Հն ինդուկտիվությամբ կոճին:

1) Որքա՞ն է տատանողական կոնտուրում առաջացած ազատ տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:
2) Լիցքավորված կոնդենսատորը կոճին միացնելուց ինչքա՞ն ժամանակ անց էլեկտրական դաշտի էներգիան կհավասարվի մագնիսական դաշտի էներգիային: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1670. Տատանողական կոնտուրում կոնդենսատորի ունակությունը $8 \cdot 10^{-4}$ Ֆ է, իսկ լարման լայնութային արժեքը՝ 200 Վ:

1) Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիայի առավելագույն արժեքը:

www.atc.am

2) Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիան, երբ լարումը կոնդենսատորի վրա 50 Վ է:

1671. Բաց տատանողական կոնտուրում հոսանքի ուժը ժամանակից կախված փոխվում է $I = 0,2\cos(6\cdot 10^5 \pi t)$ բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

1) Ո՞ր հաճախության վրա է համալարված կոնտուրը: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:
2) Որքա՞ն է կոնտուրի ճառագայթած ալիքի երկարությունը վակուումում:

1672. 0,04 մ^2 մակերեսով ուղղանկյուն շրջանակը 50 վ$^{-1}$ հաճախությամբ պտտում են 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Պտտման առանցքն ուղղահայաց է ինդուկցիայի վեկտորին:

1) Որքա՞ն է կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ի պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ի լայնութային արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1673. 0,04 մ^2 մակերեսով 100 գալար պարունակող շրջանակը պտտվում է 0,01 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Պտտման առանցքն ուղղահայաց է ինդուկցիայի վեկտորին, պտտման պարբերությունը 0,1 վ է:

1) Որքա՞ն է շրջանակ թափանցող ինդուկցիայի վեկտորի հոսքի առավելագույն արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:
2) Որքա՞ն է շրջանակում մակածված ԷլՇՈւ-ի առավելագույն արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

www.atc.am

11.3. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1674. Միմյանցից 0,6 մ հեռավորությամբ երկու հորիզոնական ռելսերի վրա տեղադրված է 0,36 կգ զանգվածով հաղորդիչ ձող (նկ. 51): Համակարգն ուղղաձիգ ուղղված 0,06 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում է: Ձողի և ռելսերի միջև շփման գործակիցը 0,1 է:

1) Որքա՞ն է շարժվող ձողի վրա ազդող շփման ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Ձողով ի՞նչ հոսանք պետք է անցնի, որպեսզի այն շարժվի հավասարաչափ:
3) Որքա՞ն է ռելսերով ձողը հավասարաչափ շարժող ուժի աշխատանքը 0,25 մ տեղափոխության վրա: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:



Նկ. 51

1675. $2\cdot10^{-2}$ կգ զանգվածով և 0,05 մ երկարությամբ հոսանքակիր հաղորդիչը հորիզոնական դիրքով տեղադրված է ողորկ թեք հարթության վրա: Հորիզոնի նկատմամբ թեք հարթության կազմած անկյան տանգենսը 0,75 է: Ամբողջ համակարգն ուղղաձիգ ուղղված մագնիսական դաշտում է, որի ինդուկցիան 0,15 Տլ է:

1) Որքա՞ն է հաղորդչի վրա ազդող ծանրության ուժի՝ թեք հարթությամբ ներքև ուղղված բաղադրիչը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը, եթե այն գտնվում է հավասարակշռության վիճակում: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
3) Որքա՞ն է հաղորդչով անցնող հոսանքի ուժը, եթե այն հավասարակշռության վիճակում է:

1676. 110 սմ երկարությամբ հոսանքակիր հաղորդալարը ծռված է 60^0 անկյան տակ այնպես, որ անկյան մի կողմի երկարությունը 30 սմ է (նկ. 52): Հաղորդալարը տեղադրված է $2\cdot10^{-2}$ Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում, որն ուղղահայաց է հաղորդալարի հարթությանը: Հաղորդալարով անցնում է 10 Ա հոսանք:

1) Որքա՞ն է անկյան կարճ կողմի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:



Նկ. 52

www.atg.am

2) Որքա՞ն է անկյան երկար կողմի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

3) Որքա՞ն է ամբողջ հաղորդալարի վրա մագնիսական դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1677. Երկու իոններ, դադարի վիճակից անցնելով նույն արագացնող պոտենցիալների տարբերությունը, մտնում են համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ: Իոններից առաջինը շարժվում է 10 սմ շառավղով շրջանագծով, իսկ երկրորդը՝ 2 սմ: Երկրորդ իոնի լիցքը 5 անգամ մեծ է առաջին իոնի լիցքից:

1) Քանի՞ անգամ է երկրորդ իոնի արագությունը մեծ առաջին իոնի արագությունից:

2) Քանի՞ անգամ է առաջին իոնի զանգվածը մեծ երկրորդ իոնի զանգվածից:

3) Քանի՞ անգամ է առաջին իոնի պտտման պարբերությունը մեծ երկրորդ իոնի պտտման պարբերությունից:

1678. Էլեկտրոնը, դադարի վիճակից 900 Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում անցնելով որոշ ճանապարհ, մտնում է 0,03 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Մագնիսական դաշտ թափանցելուց հետո էլեկտրոնը շարժվում է $3\cdot10^{-3}$ մ շառավղով շրջանագծով:

1) Որքա՞ն է էլեկտրական դաշտում շարժվելիս էլեկտրոնի արագացումը: Պատասխանը բազմապատկել 10^{-13}-ով:

2) Որքա՞ն է մագնիսական դաշտ թափանցելիս էլեկտրոնի շարժման արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

3) Որքա՞ն է էլեկտրոնի անցած ճանապարհն էլեկտրական դաշտում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1679. Պղնձե հաղորդալարից պատրաստված $6{,}8\cdot10^{-3}$ մ կողմով քառակուսի շրջանակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ շրջանակի հարթությունն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին: Մագնիսական ինդուկցիան 0,1 վ-ում հավասարաչափ նվազում է 5 Տլ-ով: Հաղորդալարի լայնական հատույթի մակերեսը 10^{-6} մ^2 է, պղնձի տեսակարար դիմադրությունը՝ $1{,}7\cdot10^{-8}$ Օմ·մ:

1) Որքա՞ն է շրջանակում մակածված ԷՇՈւ-ն: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

2) Որքա՞ն է շրջանակի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

3) Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի ուժը:

www.etc.am

1680. Տատանողական կոնտուրը կազմված է $5\cdot10^{-2}$ Հն ինդուկտիվությամբ կոճից, որին միացված է դիէլեկտրիկով հարթ կոնդենսատոր: Կոնդենսատորի շրջադիրներից յուրաքանչյուրի մակերեսը $4\cdot10^{-3}$ մ^2 է, իսկ շրջադիրների հեռավորությունը՝ 0,0885 մ: Տատանողական կոնտուրում հոսանքի լայնութային արժեքը $2\cdot10^{-4}$ Ա է, իսկ լարման լայնութային արժեքը՝ 10 Վ:

1) Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը: Պատասխանը բազմապատկել 10^{11}-ով:
2) Որքա՞ն է կոնդենսատորում դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:
3) Որքա՞ն է կոնտուրի սեփական տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1681. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի շրջադիրների վրա լիցքը ժամանակից կախված փոխվում է $q = 0{,}2\cdot10^{-3}\cos\left(4\pi + \frac{\pi}{3}\right)$ բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

1) Որքա՞ն է շրջադիրների վրա լիցքի լայնութային արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:
2) Որքա՞ն է տատանողական կոնտուրում տատանումների հաճախությունը:
3) Որքա՞ն է տատանողական կոնտուրում հոսանքի ուժի լայնութային արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

1682. $5\cdot10^{-10}$ Ֆ ունակությամբ կոնդենսատորն սկզբում միացրին 3 Վ ԷլՇՈւ ունեցող հաստատուն հոսանքի աղբյուրին, այնուհետև անջատեցին հոսանքի աղբյուրից և միացրին $1{,}25\cdot10^{-4}$ Հն ինդուկտիվությամբ կոճին:

1) Որքա՞ն է կոնդենսատորի վրա լիցքի լայնութային արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^{10}-ով:
2) Որքա՞ն է տատանողական կոնտուրում էլեկտրական դաշտի էներգիայի մեծագույն արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^{11}-ով:
3) Որքա՞ն է հոսանքի ուժի լանութային արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

1683. 0,05 մ^2 մակերես ունեցող շրջանակը 0,1 Տլ ինդուկցիա ունեցող համասեռ դաշտում 20 վ$^{-1}$ հաճախությամբ պտտելիս նրանում մակածված ԷլՇՈւ-ի լայնութային արժեքը 62,8 Վ է: Շրջանակի պտտման առանցքն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիային:

www.atc.am

1) Որքա՞ն է շրջանակի մեկ գալարով մագնիսական հոսքի լայնույթը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է շրջանակի մեկ գալարում մակածման ԷլՇՈւ-ի լայնույթը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
3) Քանի՞ գալար ունի շրջանակը:

www.atc.am

11.3. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1684. Ուղղանկյուն հատույթ ունեցող հորիզոնական համասեռ հաղորդիչը, որով անցնում է I = 40 Ա հոսանք, B = 0,5 Տլ ինդուկցիայով մագնիսական դաշտի ազդող ուժի հետևանքով սեղմված է ուղղածիգ պատին: Մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերն ուղղահայաց են հաղորդչին և ուղղածիգի հետ կազմում են $\alpha = 60^0$ անկյուն (նկ. 53): Հաղորդչի զանգվածը 0,5 կգ է, երկարությունը՝ 0,2 մ:



Նկ. 53

1) Որքա՞ն է հաղորդչի վրա մագնիսական դաշտի ազդող ուժի մոդուլը:
2) Հաղորդչի վրա մագնիսական դաշտի ազդող ուժն ի՞նչ անկյուն է կազմում ուղղածիգի հետ:
3) Որքա՞ն է ուղղածիգ պատի կողմից հաղորդչի վրա ազդող հակազդեցության ուժը:
4) Որքա՞ն է ուղղածիգ պատի և հաղորդչի միջև շփման գործակցի փոքրագույն արժեքը, որի դեպքում հաղորդիչը կգտնվի դադարի վիճակում է: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1685. 0,5 մ երկարություն և ուղղանկյունաձև հատույթ ունեցող հաղորդիչ ձողը հորիզոնական դիրքով տեղադրված է հորիզոնի հետ $\alpha = 30^0$ անկյուն կազմող թեք հարթության վրա (նկ. 54): B = 0,2 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերն ուղղահայաց են թեք հարթությանը: Ձողի և թեք հարթության միջև շփման գործակիցը 0,2 է: Ձողի զանգվածը 1 կգ է, նրա միջով անցնող հոսանքի ուժը՝ 40 Ա:



Նկ. 54

1) Որքա՞ն է ձողի վրա մագնիսական դաշտի ազդող ուժը:
2) Որքա՞ն է ձողի վրա ազդող շփման ուժը:
3) Որքա՞ն է ձողով անցնող հոսանքի ուժի փոքրագույն արժեքը, որի դեպքում ձողը կգտնվի դադարի վիճակում է:
4) Որքա՞ն է ձողով անցնող հոսանքի ուժի մեծագույն արժեքը, որի դեպքում ձողը կգտնվի դադարի վիճակում է:

www.etc.am

1686. Լիցքավորված գնդիկը կախված է 45 սմ երկարությամբ թելից և տեղադրված է հորիզոնական ուղղված 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին ուղղահայաց հարթության մեջ, թելը բեռի հետ միասին շեղում են մինչև հորիզոնական դիրքը և բաց թողնում: Հակադիր ուղղություններով գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելիս թելի լարման ուժերի տարբերությունը $3 \cdot 10^{-4}$ Ն է: Օդի դիմադրությունն անտեսել:

1) Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելիս:
2) Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելիս:
3) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող Լորենցի ուժը հավասարակշռության դիրքով անցնելիս: Պատասխանը բազմապատկել 10^5-ով:
4) Որքա՞ն է գնդիկի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^4-ով:

www.atc.am

12. ՕՊՏԻԿԱ: ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ

12.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1687. Ո՞րն է լույսի ուղղագիծ տարածման օրենքը:

1) Լույսը համասեռ միջավայրում տարածվում է ուղղագիծ:
2) Լույսը թափանցիկ միջավայրում տարածվում է ուղղագիծ:
3) Լույսը թափանցիկ, օպտիկապես համասեռ միջավայրում տարածվում է ուղղագիծ:
4) Լույսը միշտ տարածվում է ուղղագիծ:

1688. Ի՞նչն է ստվերի առաջացման պատճառը:

1) Լույսի բեկումը միջավայրում:
2) Լույսի դիֆրակցիան մարմնից:
3) Լույսի ցրումը մարմնից:
4) Լույսի ուղղագիծ տարածումը:

1689. Նկարում պատկերված են լույսի գնդաձև S աղբյուրը, անթափանց A գունդը և էկրանը: Ո՞ր կետերն են կիսաստվերում:



1) բ: 3) ա, բ, գ:
2) ա, գ: 4) դ:

1690. Որքա՞ն է l երկարությամբ ուղղաձիգ ձողի ստվերի երկարությունը, եթե օրվա այդ պահին Արեգակի ճառագայթները Երկրի վրա ընկնում են 45^0 անկյան տակ:

1) $\frac{l\sqrt{2}}{2}$: 3) $l\sqrt{2}$:
2) l: 4) $2l$:

1691. Ո՞ր կետը կհայտնվի անթափանց A օղակի ստվերում:

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:



1692. Հնարավո՞ր է, որ լույսը տարածվի կորագիծ:

1) Ոչ, լույսը բոլոր միջավայրերում տարածվում է ուղղագիծ:

www.atc.am

2) Այո, օպտիկապես անհամասեռ միջավայրում լույսը տարածվում է կորագիծ:
3) Այո, օպտիկապես համասեռ, խիտ միջավայրում լույսը տարածվում է կորագիծ:
4) Բոլոր պատասխանները սխալ են:

1693. Նկարում պատկերված են երկու միջավայրերի բաժանման սահմանին ընկնող և անդրադարձող լուսային ճառագայթները: Ո՞րն է ճառագայթի անդրադարձման անկյունը:



1) α:
2) β:
3) γ:
4) δ:

1694. Որքա՞ն է ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը, եթե անկման անկյունը 30^0 է:

1) 30^0:
2) 45^0:
3) 60^0:
4) 90^0:

1695. Հարթ հայելու վրա ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը 30^0 է: Որքա՞ն է անդրադարձող ճառագայթի կազմած անկյունը հայելու հետ:

1) 115^0:
2) 75^0:
3) 30^0:
4) 15^0:

1696. Լույսի ճառագայթն ընկնում է անդրադարձնող մակերևույթին ուղղահայաց: Որքա՞ն է անդրադարձման անկյունը:

1) 0^0:
2) 45^0:
3) 90^0:
4) 180^0:

1697. Ընկնող ճառագայթի և հարթ հայելու կազմած անկյունը հավասար է ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյանը: Որքա՞ն է անկման անկյունը:

1) 30^0:
2) 45^0:
3) 50^0:
4) 60^0:

1698. Ինչպիսի՞ն է առարկայի պատկերը հարթ հայելում:

1) Ուղիղ, իրական, նույն չափի:
2) Ուղիղ, կեղծ, նույն չափի:
3) Ուղիղ, կեղծ, փոքրացված:
4) Շրջված, իրական, մեծացված:

www.atc.am

1699. Ո՞րն է եռանկյան ճիշտ պատկերը հարթ հայելում:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1700. Ինչպե՞ս են փոխվում պատկերի չափերը առարկան հարթ հայելուց հեռացնելիս:

1) Մեծանում են:
2) Փոքրանում են:
3) Չեն փոխվում:
4) Նախ մեծանում են, հետո՝ փոքրանում:

1701. Ո՞ր կետում է ստացվում լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1702. Առարկայի հեռավորությունը հարթ հայելուց d է: Որքա՞ն է առարկայի և պատկերի միջև l հեռավորությունը:

1) $l = d$:
2) $l = 2d$:
3) $l < d$:
4) $l > 2d$:

1703. Լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում ստացվում է A կետում: Ո՞ր կետում կստացվի պատկերը, եթե աղբյուրը տեղափոխենք B կետ:



1) ա կետում:
2) բ կետում:
3) գ կետում:
4) Պատկեր չի ստացվի, քանի որ աղբյուրը հայելու դիմաց չէ:

1704. Ա դիտողը լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում տեսնում է ա կետում: Ո՞ր կետում է տեսնում այդ աղբյուրի պատկերը Բ դիտողը:



www.atc.am

1) ա կետում:
2) բ կետում:
3) գ կետում:
4) դ կետում:

1705. Հարթ հայելում իր պատկերը դիտող աղջիկը մեկ քայլ կատարեց դեպի հայելին: Ինչպե՞ս փոխվեց աղջկա և հայելում նրա պատկերի միջև եղած հեռավորությունը:

1) Փոքրացավ մեկ քայլով:
2) Փոքրացավ երկու քայլով:
3) Փոքրացավ չորս քայլով:
4) Չփոխվեց:

1706. Մարդը հարթ հայելուն մոտենում է 2 մ/վ արագությամբ: Ի՞նչ արագությամբ է նա մոտենում հայելում իր պատկերին:

1) 1 մ/վ:
2) 2 մ/վ:
3) 4 մ/վ:
4) Պատկերի նկատմամբ անշարժ է:

1707. Լույսի ճառագայթը α անկյան տակ ընկնում է իրար փոխուղղահայաց երկու հարթ հայելիներից առաջինի վրա: Առաջին հայելուց անդրադառնալուց հետո ի՞նչ անկյան տակ այն կընկնի երկրորդ հայելու վրա:



1) α:
2) 2α:
3) $90^0 - \alpha$:
4) 45^0:

1708. S լուսատու կետի քանի՞ պատկեր կստացվի միմյանց փոխուղղահայաց տեղադրված երկու հարթ հայելիների համակարգում:



1) 1 պատկեր:
2) 2 պատկեր:
3) 3 պատկեր:
4) 4 պատկեր:

1709. Լույսի ճառագայթն ընկնում է միմյանց հետ α անկյուն կազմող հարթ հայելիների համակարգի վրա: Որքա՞ն է ընկնող և համակարգից անդրադարձող ճառագայթների կազմած θ անկյունը:



1) $\theta = 2\alpha$:
2) $\theta = -2\alpha$:
3) $\theta = 2\pi - \alpha$:
4) $\theta = \pi - 2\alpha$:

1710. Նկարում պատկերված սլաքի ո՞ր մասն է երևում աչքին:



1) Ամբողջ սլաքը:
2) Սլաքի վերին 1/2 մասը:
3) Սլաքի 1/4 մաս:
4) Ընդհանրապես չի երևում:

www.atc.am

1711. Աղջիկը փոքրիկ հայելուն նայելով՝ տեսնում է իր դեմքի մի մասը: Հնարավո՞ր է արդյոք, որ այդ հայելում նա տեսնի իր ամբողջ դեմքը:

1) Հնարավոր է, եթե նա հայելին մոտեցնի դեմքին:
2) Հնարավոր է, եթե նա հայելին հեռացնի դեմքից:
3) Հնարավոր չէ, որ նա տեսնի իր ամբողջ դեմքը:
4) Տվյալները բավարար չեն հարցին միանշանակ պատասխանելու համար:

1712. Ինչպիսի՞ ամենափոքր բարձրություն պետք է ունենա հարթ հայելին, որպեսզի մարդը կարողանա տեսնել իր ամբողջ մարմինը:

1) Մարդու բարձրությանը հավասար:
2) Մարդու բարձրության 1/2-ին հավասար:
3) Մարդու բարձրության 1/4-ին հավասար:
4) Կամայական չափի:

1713. Ի՞նչ է լույսի բեկումը:

1) Առարկայի պատկերի աղավաղում:
2) Լույսի էներգիայի կլանում:
3) Լույսի անկում երկու միջավայրերի բաժանման սահմանին:
4) Լույսի տարածման ուղղության փոփոխություն երկու միջավայրերի բաժանման սահմանն անցնելիս:

1714. Ո՞րն է բեկման անկյունը:



1) α-ն: 3) γ-ն:
2) β-ն: 4) δ-ն:

1715. Նկարում պատկերված են ընկնող և բեկված ճառագայթները A միջավայրից B միջավայրն անցնելիս: Ո՞րն է այդ միջավայրերի n_A և n_B բեկման ցուցիչների ճիշտ հարաբերակցությունը:



1) $n_A > n_B$:
2) $n_A < n_B$:
3) $n_A = n_B$:
4) Հարաբերակցությունը կախված է անկման անկյունից:

1716. Որքա՞ն է բեկման անկյունը, երբ լույսի ճառագայթն ընկնում է երկու միջավայրի բաժանման սահմանին ուղղահայաց:

1) 0^0: 3) 180^0:
2) 90^0: 4) $\arcsin\frac{n_1}{n_2}$:

www.atc.am

1717. Ապակի-օդ միջավայրերի բաժանման սահմանին ընկնում է լույսի A ճառագայթը: Ո՞րն է բեկված ճառագայթը:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1718. Նկարում պատկերված է լույսի ճառագայթի բեկումը երկու միջավայրերի բաժանման սահմանին: Համեմատեք այդ միջավայրերի բեկման ցուցիչները:



1) $n_1 < n_2$: 3) $n_1 = n_2$:
2) $n_1 > n_2$: 4) $n_1 >> n_2$:

1719. Լույսի ճառագայթն a միջավայրից անցնում է b միջավայր: Անկման անկյունը 30^0 է, բեկման անկյունը՝ 60^0: Որքա՞ն է b և a միջավայրերի բեկման ցուցիչների հարաբերությունը:

1) 0,5 : 3) 2:
2) $\frac{\sqrt{3}}{3}$: 4) $\sqrt{3}$:

1720. Լույսի ճառագայթն օդից անցնելով ջրի մեջ՝ բեկվում է: Ինչո՞վ է դա պայմանավորված:

1) Ջրում լույսի արագությունն ավելի փոքր է, քան օդում:
2) Ջրում լույսի արագությունն ավելի մեծ է, քան օդում:
3) Ջրի մոլեկուլները ձգում են ֆոտոնները:
4) Ջրի մոլեկուլները վանում են ֆոտոնները:

1721. Օգտվելով նկարից՝ որոշեք B և A միջավայրերի բեկման ցուցիչների հարաբերությունը:



1) 0,67: 3) 1,5:
2) 1,33: 4) 2:

1722. Նկարում պատկերված է բեկված ճառագայթի ընթացքը երեք տարբեր միջավայրերում: Ո՞ր միջավայրում է լույսի տարածման արագությունն ավելի մեծ:



www.atc.am

1) I միջավայրում:
2) II միջավայրում:
3) III միջավայրում:
4) Բոլոր միջավայրերում նույնն է:

1723. Որքա՞ն է վակուումի բեկման ցուցիչը:

1) 0:
2) 0,1:
3) 1:
4) ∞:

1724. Որքա՞ն է միջավայրի բեկման ցուցիչը, եթե նրանում ν հաճախությամբ լույսի ալիքի երկարությունը λ է: Լույսի արագությունը վակուումում c է:

1) $\frac{\nu c}{\lambda}$:
2) $\frac{\lambda}{c\nu}$:
3) $\frac{c}{\lambda\nu}$:
4) $\frac{\lambda\nu}{c}$:

1725. Սուզորդը ջրի հատակից դիտում է իր գլխավերևում, ջրի մակերևույթից 1 մ բարձրությամբ կախված լուսարձակող լամպը: Ինչպիսի՞ն է լամպի թվացյալ բարձրությունը, ջրի մակերևույթից:

1) 1 մ:
2) Մեծ է 1 մ-ից:
3) Փոքր է 1 մ-ից:
4) Հարցի պատասխանը միանշանակ չէ:

1726. Երկու դիտորդ միաժամանակ որոշում են հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրությունը: Դիտորդներից առաջինը լճակի հատակին է, իսկ երկրորդը՝ ափին: Ո՞ր դիտորդին կթվա, որ հորիզոնի նկատմամբ Արեգակն ավելի բարձր է:

1) Լճակի հատակի դիտորդին:
2) Լճակի ափի դիտորդին:
3) Երկուսի համար էլ նույնը կլինի:
4) Հարցի պատասխանը միանշանակ չէ:

1727. Ո՞ր դեպքում է հնարավոր լույսի լրիվ անդրադարձումը:

1) Լույսի՝ օպտիկապես ավելի խիտ միջավայրից նոսր միջավար անցնելիս:
2) Լույսի՝ օպտիկապես ավելի նոսր միջավայրից խիտ միջավար անցնելիս:
3) Լույսի՝ ցանկացած միջավայրից մեկ այլ միջավայր անցնելիս:
4) Լույսի՝ մի միջավայրից մյուսին անցնելիս, երբ դրանց բեկման ցուցիչները հավասար են:

www.ato.am

1728. Ո՞ր դեպքում է տեղի ունենում լույսի լրիվ անդրադարձում: α -ն անկման անկյունն է, α_0 -ն՝ լրիվ անդրադարձման սահմանային անկյունը:

1) $\alpha_0 > \alpha$:

2) $\alpha_0 \le \alpha$:

3) $\cos\alpha_0 < \cos\alpha$:

4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:

1729. Լույսի ճառագայթը n_1 բեկման ցուցիչով միջավայրից անցնում է ավելի փոքր n_2 բեկման ցուցիչ ունեցող միջավայր: Ո՞ր բանաձևով է որոշվում լույսի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը:

1) $sin\alpha_0 = \frac{n_1}{n_2}$:

2) $sin\alpha_0 = \frac{n_2}{n_1}$:

3) $tg\alpha_0 = \frac{n_1}{n_2}$:

4) $tg\alpha_0 = \frac{n_2}{n_1}$:

1730. Ի՞նչ է նշանակում՝ առաջին միջավայրից երկրորդն անցնելիս լույսի ճառագայթի բեկման անկյունը մեծ է անկման անկյունից:

1) Առաջին միջավայրի բեկման ցուցիչը փոքր է երկրորդ միջավայրի բեկման ցուցիչից:
2) Առաջին միջավայրում լույսի արագությունը փոքր է երկրորդ միջավայրում լույսի արագությունից:
3) Երկրորդ միջավայրում լույսի արագությունը փոքր է առաջին միջավայրում լույսի արագությունից:
4) Երկրորդ միջավայրն օպտիկապես ավելի խիտ է:

1731. Ո՞ր դեպքում է հնարավոր լույսի լրիվ անդրադարձում: Օդի բեկման ցուցիչը 1 է, ապակունը՝ 1,6, ջրինը՝ 1,3:

1) Լույսի ճառագայթը օդից անցնում է ապակու մեջ:
2) Լույսի ճառագայթը ջրից անցնում է ապակու մեջ:
3) Լույսի ճառագայթը ապակուց անցնում է ջրի մեջ:
4) Լույսի ճառագայթը օդից անցնում է ջրի մեջ:

1732. Ո՞ր դեպքում օդում ապակե ուղղանկյուն հավասարասրուն հատվածակողմի վրա ընկնող լույսի ճառագայթը կշեղվի 90^0-ով:

1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:



www.atc.am

1733. Օդում գտնվող ապակե հատվածակողմի վրա ընկնում է նույն հաճախությամբ իրար զուգահեռ ճառագայթներ: Ինչպիսի՞ն է այդ ճառագայթների ընթացքը հատվածակողմից դուրս գալուց հետո:

1) Տարամիտում են:
2) Զուգամիտում են:
3) Զուգահեռ են:
4) Հարցին միարժեք պատասխանել հնարավոր չէ:

1734. Լույսի երկու զուգահեռ ճառագայթ ջրից դուրս են գալիս օդ: a ճառագայթը անմիջապես դուրս է գալիս օդ, իսկ b ճառագայթը դուրս է գալիս օդ՝ անցնելով ջրի մակերևույթին տեղավորված ապակե հարթ զուգահեռ թիթեղի միջով: Ինչպիսի՞ն է a և b ճառագայթների ընթացքը օդում:

1) Կմնան իրար զուգահեռ:
2) Կտարամիտեն:
3) Կզուգամիտեն:
4) Կախված է թիթեղի հաստությունից:



1735. Ինչպե՞ս է փոխվում լույսի զուգահեռ ճառագայթների փնջի լայնությունը վակուումից ապակու մեջ անցնելիս: Անկման անկյունը զրո չէ:

1) Չի փոխվում:
2) Մեծանում է:
3) Փոքրանում է:
4) Պատասխանը կախված է ապակու բեկման ցուցիչի արժեքից:

1736. Լույսի ճառագայթը մի միջավայրից մյուսին անցնելիս ե՞րբ չի շեղվում իր սկզբնական ուղղությունից:

1) Միայն այն դեպքում, երբ այդ միջավայրերի բեկման ցուցիչները հավասար են:
2) Միայն այն դեպքում, երբ ընկնող ճառագայթն ուղղահայաց է երկու միջավայրերի բաժանման սահմանին:
3) Այն դեպքում, երբ այդ միջավայրերի բեկման ցուցիչները հավասար են կամ ընկնող ճառագայթն ուղղահայաց է երկու միջավայրերի բաժանման սահմանին:
4) Ոչ մի դեպքում:

1737. Մութ սենյակում ինչպե՞ս կարելի է շոշափելով որոշել երկու ոսպնյակներից ո՞րն է հավաքող, ո՞րը՝ ցրող:

1) Հավաքող ոսպնյակը ուռուցիկ է, ցրողը՝ գոգավոր:
2) Հավաքող ոսպնյակը գոգավոր է, ցրողը՝ ուռուցիկ:
3) Երկու ոսպնյակներն էլ ուռուցիկ են, սակայն հավաքողն ավելի հաստ է:
4) Երկու ոսպնյակներն էլ գոգավոր են, սակայն հավաքողն ավելի հաստ է:

www.ato.am

1738. Ո՞ր դեպքում է ոսպնյակը համարվում բարակ:

1) երբ ոսպնյակի հաստությունը փոքր է:
2) երբ ոսպնյակի հաստությունը փոքր է 1 սմ-ից:
3) երբ ոսպնյակի հաստությունը կարելի է անտեսել համեմատած ոսպնյակը սահմանափակող գնդային մակերևույթների շառավիղների մեծության հետ:
4) երբ ոսպնյակի չափերը կարելի է անտեսել:

1739. Ո՞ր կետում է նկարում պատկերված ոսպնյակի կիզակետը:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1740. Ինչպե՞ս կփոխվի ոսպյակի կիզակետային հեռավորությունը, եթե այն տեղավորենք հեղուկի մեջ, որի բեկման ցուցիչը համընկնում է ոսպնյակի նյութի բեկման ցուցիչի հետ:

1) Կձգտի անվերջության: 3) Կփոքրանա:
2) Չի փոխվի: 4) Կհավասարվի զրոյի:

1741. Ո՞ր ոսպնյակն ունի կեղծ կիզակետ:

1) Ցրող ոսպնյակը: 3) Գնդային ոսպնյակը:
2) Հավաքող ոսպնյակը: 4) Օպտիկական ոսպնյակը:

1742. Որքա՞ն է նկարում պատկերված ոսպնյակի օպտիկական ուժը, եթե յուրաքանչյուր բաժանմանը համապատասխանում է 1 սմ:



1) 50 դպտր: 3) 20 դպտր:
2) 40 դպտր: 4) 10 դպտր:

1743. Ո՞ր ճառագայթն է պատկերում AB ճառագայթի ընթացքը բարակ ոսպնյակով անցնելուց հետո:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1744. Ո՞րն է հավաքող բարակ ոսպնյակի կիզակետից դուրս եկող ճառագայթի ճիշտ ընթացքը ոսպնյակն անցնելուց հետո:



www.atc.am

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1745. Բարակ հավաքող ոսպնյակի վրա ընկնող երկու զուգահեռ ճառագայթներն ու գլխավոր օպտիկական առանցքը գտնվում են միևնույն հարթության մեջ: Կհատվե՞ն արդյոք այդ ճառագայթները ոսպնյակից բեկվելուց հետո:

1) Այո, կհատվեն:
2) Ոչ, չեն հատվի:
3) Կհատվեն միայն այն դեպքում, երբ այդ ճառագայթները զուգահեռ են գլխավոր օպտիկական առանցքին:
4) Պատասխանը կախված է ոսպնյակի օպտիկական ուժից:

1746. Նկարում պատկերված է լույսի S կետային աղբյուրի S_1 պատկերը հավաքող բարակ ոսպնյակում: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը, եթե մեկ բաժանման արժեքը 1 սմ է:



1) 0,8 սմ: 3) 2,5 սմ:
2) 1,25 սմ: 4) 5 սմ:

1747. Լույսի զուգահեռ ճառագայթների փունջն ընկնում է բարակ հավաքող ոսպնյակի վրա: Ո՞ր նկարում է ճիշտ պատկերված ճառագայթների ընթացքը ոսպնյակով անցնելուց հետո:



1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

www.atc.am

1748. Առարկան հեռու է հավաքող բարակ ոսպնյակից կրկնակի կիզակետային հեռավորությամբ: Ինչպիսի՞ն է նրա պատկերը ոսպնյակում:

1) Իրական, փոքրացված, ուղիղ:
2) Կեղծ, փոքրացված, ուղիղ:
3) Կեղծ, մեծացված, շրջված:
4) Իրական, նույն չափերի, շրջված:

1749. Առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 8 սմ է, իսկ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը՝ 10 սմ: Ինչպիսի՞ն է առարկայի պատկերը ոսպնյակում:

1) Կեղծ, շրջված և փոքրացված:
2) Կեղծ, ուղիղ և մեծացված:
3) Իրական, շրջված և մեծացված:
4) Իրական, ուղիղ և մեծացված:

1750. Հավաքող բարակ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա պատկերը լինի կեղծ:

1) Կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ:
2) Կիզակետային հեռավորությունից փոքր հեռավորությամբ:
3) Ցանկացած հեռավորությամբ պատկերը կլինի իրական:
4) Ցանկացած հեռավորությամբ պատկերը կլինի կեղծ:

1751. Նկարում պատկերված են հավաքող բարակ ոսպնյակը, նրա գլխավոր օպտիկական առանցքը և կիզակետերը: Ո՞ր տիրույթում է ստացվում AB առարկայի պատկերը:



1) ա տիրույթում:
2) բ տիրույթում:
3) գ տիրույթում:
4) դ տիրույթում:

1752. Ինչպիսի՞ն է *AB* առարկայի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:



1) Իրական, մեծացված, շրջված:
2) Իրական, փոքրացված, շրջված:
3) Կեղծ, մեծացված, ուղիղ:
4) Կեղծ, փոքրացված, ուղիղ:

1753. Ինչպիսի՞ն է *AB* առարկայի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:

1) Իրական, մեծացված, շրջված:
2) Իրական, փոքրացված, շրջված:

www.atc.am

3) Կեղծ, մեծացված, ուղիղ:

4) Կեղծ, փոքրացված, ուղիղ:

1754. **Առարկան բարակ ոսպնյակի կիզակետից շարժվում է դեպի կրկնակի կիզակետը: Ինչպե՞ս է շարժվում այդ դեպքում առարկայի պատկերը:**



1) Հեռանում է կիզակետից:

2) Հեռանում է ոսպնյակից:

3) Մոտենում է կրկնակի կիզակետին:

4) Հեռանում է կրկնակի կիզակետից:

1755. **Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից, եթե առարկայի հեռավորությունը ոսպնյակից d է, իսկ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը՝ F:**

1) $\left|\frac{d-F}{dF}\right|$:

2) $\frac{d+F}{dF}$:

3) $\left|\frac{dF}{d-F}\right|$:

4) $\frac{dF}{d+F}$:

1756. **Շիկացման լամպի d երկարությամբ ուղիղ թելիկը զուգահեռ է հավաքող բարակ ոսպնյակի հարթությանը, որի հեռավորությունը ոսպնյակից a է: Ոսպնյակից b հեռավորությամբ էկրանի վրա ստացվում է թելիկի հստակ պատկերը: Որքա՞ն է պատկերի երկարությունը:**

1) $d\frac{a}{b}$:

2) $d\frac{b}{a}$:

3) $d\frac{a}{a+b}$:

4) $d\frac{b}{a+b}$:

1757. **Նկարում պատկերված է հավաքող բարակ ոսպնյակում առարկայի A_1B_1 պատկերի դիրքը: Ո՞րն է ոսպնյակից առարկայի d հեռավորության ճիշտ առնչությունը:**



1) $d = F$:

2) $d = 2F$:

3) $d < F$:

4) $F < d < 2F$:

1758. **Ինչպիսի՞ ոսպնյակով է հնարավոր ստանալ առարկայի իրական, փոքրացված և շրջված պատկերը:**

1) Միայն հավաքող ոսպնյակով:

2) Ցրող կամ հավաքող ոսպնյակներով:

www.atc.am

3) Միայն ցրող ոսպնյակով:
4) Ոսպնյակով նման պատկեր հնարավոր չէ ստանալ:

1759. Որքա՞ն է նկարում պատկերված AB առարկայի պատկերի երկարությունը հավաքող բարակ ոսպնյակում:



1) $0{,}5F$:
2) F:
3) $1{,}5F$:
4) $2F$:

1760. Զուգահեռ ճառագայթներն անցնելով երկու հավաքող բարակ ոսպնյակներով, մնում են իրար զուգահեռ: Ինչպե՞ս են դասավորված այդ ոսպնյակները:

1) Կիպ հպված են միմյանց:
2) Առաջին ոսպնյակի հետևի կիզակետային հարթությունը համընկնում է երկրորդ ոսպնյակի առջևի կիզակետային հարթությանը:
3) Ոսպնյակների միջև հեռավորությունը շատ մեծ է կիզակետային հեռավորությունների գումարից:
4) Հնարավոր է միայն այն դեպքում, երբ ոսպնյակների կիզակետային հեռավորությունները հավասար են:

1761. Ինչպիսի՞ ոսպնյակներում հնարավոր է ստանալ առարկայի կեղծ պատկեր:

1) Միայն հավաքող:
2) Հավաքող և ցրող:
3) Միայն ցրող:
4) Ոսպնյակով կեղծ պատկեր հնարավոր չէ ստանալ:

1762. Ցրող բարակ ոսպնյակի Γ գծային խոշորացումը ինչպիսի՞ արժեքներ կարող է ընդունել:

1) $\Gamma > 1$:
2) $\Gamma = 1$:
3) $\Gamma < 1$:
4) $\Gamma >> 1$:

1763. Ո՞ր ճառագայթն է ճիշտ պատկերում AB ճառագայթի ընթացքը բարակ ոսպնյակով անցնելուց հետո:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1764. Ցրող բարակ ոսպնյակի վրա ընկնում են երկու զուգահեռ ճառագայթներ: M ճառագայթի ընթացքը ոսպնյակն անցնելուց հետո



www.atc.am

նշված է նկարում: Ի՞նչ ուղղությամբ կգնա N ճառագայթը ոսպնյակն անցնելուց հետո.

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1765. Բարակ ոսպնյակի $\frac{1}{F}=\frac{1}{f}+\frac{1}{d}$ բանաձևով f-ը հաշվելիս ստացվեց բացասական արժեք: Ի՞նչ է դա նշանակում:

1) Պատկերը կեղծ է:
2) Ոսպնյակը ցրող է:
3) Պատկերը փոքրացված է:
4) Հաշվարկն է սխալ:

1766. Կարելի՞ է արդյոք ցրող բարակ ոսպնյակով ստանալ առարկայի մեծացված պատկերը:

1) Հնարավոր չէ:
2) Կարելի է, եթե այն տեղադրվի ոսպնյալի և կիզակետի միջև:
3) Կարելի է, եթե այն տեղադրվի կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորության վրա:
4) Կարելի է, եթե այն տեղադրվի կիզակետում:

1767. Նկարում պատկերված ցրող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը F_1 է, իսկ հավաքող ոսպնյակինը՝ F_2: Ինչպիսի՞ն կլինի AB առարկայի պատկերը ոսպնյակների համակարգում:

1) Կեղծ, շրջված:
2) Կեղծ, ուղիղ:
3) Իրական, շրջված:
4) Իրական, ուղիղ:



1768. Նկարում պատկերված են AB առարկան և նրա A_1B_1 պատկերը հավաքող բարակ ոսպնյակում: Որտե՞ղ է գտնվում ոսպնյակի օպտիկական կենտրոնը:

1) BA_1 գծի վրա:
2) AA_1 և BB_1 գծերի հատման կետում:
3) AB և A_1B_1 գծերի շարունակությունների հատման կետում:
4) AB_1 գծի վրա:



1769. Ցրող բարակ ոսպնյակից առարկայի հեռավորությունը m անգամ մեծ է ոսպնյակի կիզակետային հեռավորությունից: Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումն այդ դեպքում:

www.atc.am

1) m: 3) $m+1$:

2) $\frac{1}{m+1}$: 4) $\frac{m-1}{m}$:

1770. Ստորև թվարկված էլեկտրամագնիսական ճառագայթումները դասավորեք ըստ ալիքի երկարության նվազման.

1. տեսանելի լույս,

2. ռադիոալիքներ,

3. ենթակարմիր ճառագայթում,

4. անդրմանուշակագույն ճառագայթում,

5. ռենտգենյան ճառագայթում:

1) 2, 3, 1, 4, 5: 3) 2, 1, 3, 4, 5:

2) 5, 4, 3, 1, 2: 4) 5, 1, 4, 3, 2:

1771. Լույսն օդից անցնում է n բեկման ցուցիչ ունեցող միջավայր: Ո՞ր պնդումն է ճիշտ:

1) Լույսի ալիքի երկարությունը և արագությունը փոքրանում են n անգամ:

2) Լույսի ալիքի երկարությունը և արագությունը մեծանում են n անգամ:

3) Լույսի ալիքի երկարությունը չի փոխվում, արագությունը փոքրանում է n անգամ:

4) Լույսի ալիքի երկարությունը չի փոխվում, արագությունը մեծանում է n անգամ:

1772. Ինչպե՞ս է փոխվում լույսի ալիքի երկարությունը, երբ այն վակուումից անցնում է $n=2$ բեկման ցուցիչ ունեցող միջավայր:

1) Մեծանում է 2 անգամ:

2) Փոքրանում է 2 անգամ:

3) Չի փոխվում:

4) Փոփոխությունը կախված է անկման անկյունից:

1773. Լույսի ալիքի երկարությունը n բեկման ցուցիչ ունեցող միջավայրում λ է: Որքա՞ն է այդ ալիքի երկարությունը վակուումում:

1) λ: 3) $\frac{\lambda}{n}$:

2) $n\lambda$: 4) $\frac{n}{\lambda}$:

1774. Ո՞ր պնդումն է ճիշտ արտահայտում դիսպերսիայի երևույթի էությունը:

www.atc.am

ա) Միջավայրի բեկման ցուցիչը կախված է լույսի հաճախությունից:
բ) Միջավայրում լույսի տարածման արագությունը կախված է լույսի հաճախությունից:

1) Միայն ա -ն:
2) Միայն բ -ն:
3) Ե՛վ ա -ն, և՛ բ -ն:
4) Ո՛չ ա -ն, ո՛չ բ -ն:

1775. Բյուրեղապակու կտորներից հավաքված էլեկտրական ջահը լուսարձակում է սպեկտրի տարբեր գույներով: Ֆիզիկական ո՞ր երևույթով է դա պայմանավորված:

1) Լույսի ինտերֆերենցով:
2) Լույսի դիֆրակցիայով:
3) Լույսի դիսպերսիայով:
4) Լույսի բևեռացմամբ:

1776. Ո՞ր գույնի լույսի ճառագայթն է օդում ապակե հատվածակողմով անցնելիս բոլորից քիչ շեղվում:

1) Կանաչ:
2) Կապույտ:
3) Մանուշակագույն:
4) Կարմիր:

1777. Ո՞ր գույնի լույսի համար է ապակու բեկման ցուցիչն ամենամեծը:

1) Կանաչ:
2) Մանուշակագույն:
3) Կապույտ:
4) Կարմիր:

1778. Լույսի փունջն անցնելով ապակե հատվածակողմով՝ էկրանին առաջացնում է սպեկտր: Ո՞րն է սպեկտրում գույների ճիշտ հերթագայությունը:

1) Նարնջագույն, կանաչ, երկնագույն, կապույտ:
2) Կապույտ, երկնագույն, կանաչ, մանուշակագույն:
3) Նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն:
4) Դեղին, նարնջագույն, կանաչ, կապույտ:

1779. Արեգակի ճառագայթները ջրի կաթիլների վրա ընկնելիս առաջացնում են ծիածան: Դա բացատրվում է նրանով, որ սպիտակ լույսը կազմված է տարբեր ալիքի երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքներից, որոնք ջրի կաթիլներից տարբեր կերպ են՝

1) կլանվում:
2) անդրադառնում:
3) բեկվում:
4) բևեռանում:

1780. Ինչո՞ւ է թուղթը սպիտակ:

1) Այն լավ անդրադարձնում է բոլոր գույներին համապատասխանող լուսային ալիքները:
2) Այն կլանում է բոլոր գույներին համապատասխանող լուսային ալիքները:

www.arc.am

3) Այն բեկում է բոլոր գույներին համապատասխանող լուսային ալիքները:
4) Այն կլանում է միայն մեծ հաճախությամբ լուսային ալիքները:

1781. Ի՞նչ գույնի կերևա կարմիր մեխակը, եթե այն դիտենք կապույտ ապակու միջով:

1) Կանաչ:
2) Մանուշակագույն:
3) Մոխրագույն:
4) Սև:

1782. Կարմիր գույնի ալիքի երկարությունը ջրում հավասար է կանաչ գույնի ալիքի երկարությանը՝ օդում: Ի՞նչ գույնի լույս կտեսնի մարդը ջրի մեջ, եթե ջուրը լուսավորենք կարմիր գույնի լույսով:

1) Կանաչ:
2) Կարմիր:
3) Սպիտակ:
4) Կախված է ջրի բեկման ցուցիչից:

1783. Արեգակի ճառագայթները ոսպնյակով հավաքելիս, որ գույնի (կարմիր, կանաչ, սև) թուղթն ավելի շուտ կայրվի:

1) Կարմիր:
2) Կանաչ:
3) Սև:
4) Բոլորն էլ միաժամանակ:

1784. Ո՞ր երևույթն է ապացուցում լույսի ալիքային բնույթը:

1) Լույսի բեկումը:
2) Լույսի ուղղագիծ տարածումը:
3) Լույսի անդրադարձումը:
4) Լույսի ինտերֆերենցը:

1785. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Կոհերենտ ալիքների վերադրումը, որի հետևանքով տարածության մեջ առաջանում է արդյունարար տատանումների լայնույթի ժամանակի ընթացքում անփոփոխ բաշխում, կոչվում է՝

1) ինտերֆերենց:
2) դիսպերսիա:
3) դիֆրակցիա:
4) բևեռացում:

1786. Բենզինի բարակ թաղանթով պատված ջրի մակերևույթին առաջանում են ծիածանի գունավորումներ: Ֆիզիկական ո՞ր երևույթով է դա պայմանավորված:

1) Լույսի դիսպերսիայով:
2) Լույսի դիֆրակցիայով:
3) Լույսի բևեռացմամբ:
4) Լույսի ինտերֆերենցով:

1787. Ո՞ր երևույթն է բացատրվում լույսի ինտերֆերենցով:

1) Սպիտակ լույսի տարալուծումը հատվածակողմով անցնելիս:
2) Բարակ թաղանթների գունավորումը:

www.atc.am

3) Լուսային ճառագայթների շեղումը երկրաչափական ստվերի տիրույթ:
4) Լուսավոր կետի հայտնվելը փոքրիկ, անթափանց սկավառակի ստվերի կենտրոնում:

1788. Երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարբերությունը տվյալ կետում հավասար է կենտ թվով կես ալիքի: Որքա՞ն է արդյունարար տատանումների A լայնույթն այդ կետում, եթե յուրաքանչյուր ալիքի տատանումների լայնույթն a է:

1) $A = 0$:
2) $A = a$:
3) $A = 2a$:
4) $a < A < 2a$:

1789. Լույսի երկու աղբյուրներ առաքում են միևնույն սկզբնական փուլերով $5 \cdot 10^{14}$ Հց հաճախությամբ ալիքներ: Տարածության տվյալ կետում այդ ալիքների ընթացքի ի՞նչ նվազագույն տարբերության դեպքում կդիտվի ինտերֆերենցային մինիմում:

1) 0,9 մկմ:
2) 0,3 մկմ:
3) 0,6 մկմ:
4) 0:

1790. $6 \cdot 10^{-7}$ մ ալիքի երկարությամբ երկու կոհերենտ ալիքների ինտերֆերենցի հետևանքով կուժեղանա՞, թե՞ կթուլանա լույսի ինտենսիվությունը տարածության այն կետում, որտեղ ալիքների ընթացքի տարբերությունը 2,4 մկմ է:

1) Կթուլանա, քանի որ ընթացքի տարբերությունը հավասար է զույգ թվով կիսաալիքի երկարության:
2) Կթուլանա, քանի որ ընթացքի տարբերությունը հավասար է կենտ թվով կիսաալիքի երկարության:
3) Կուժեղանա, քանի որ ընթացքի տարբերությունը հավասար է զույգ թվով կիսաալիքի երկարության:
4) Կուժեղանա, քանի որ ընթացքի տարբերությունը հավասար է կենտ թվով կիսաալիքի երկարության:

1791. Ինչո՞ւ դասասենյակը լուսավորող լամպի լույսից ինտերֆերենց չի դիտվում:

1) Լամպի հզորությունը բավարար չէ:
2) Լամպի հեռավորությունը մեծ է:
3) Լամպի առաքած լուսային ալիքները կոհերենտ չեն:
4) Լամպի ապակին ցրում է լույսը:

1792. Ո՞ր պնդումն է ճիշտ:

www.atc.am

ա. Կայուն ինտերֆերենցային պատկեր կարելի է ստանալ, եթե լույսի վերադրվող ալիքները կոհերենտ են:

բ. Ինտերֆերենցիայի ժամանակ տարածության տվյալ կետում լուսային ալիքների փոխադարձ մարումը նշանակում է, որ այդտեղ լուսային էներգիան փոխակերպվել է էներգիայի այլ տեսակի:

1) Միայն ա-ն:
2) Միայն բ-ն:
3) Ե՛վ ա-ն, և՛ բ-ն:
4) Ո՛չ ա-ն, ո՛չ բ-ն:

1793. Ո՞ր երևույթն է կոչվում դիֆրակցիա:

1) Երկու ալիքների վերադրման երևույթը:
2) Ալիքի՝ արգելքները շրջանցելու երևույթը:
3) Սպիտակ լույսի տարալուծումը տարբեր գույնի լույսերի:
4) Բարակ թաղանթների գունավորման երևույթը:

1794. Ո՞ր երևույթը հնարավոր չէ բացատրել երկրաչափական օպտիկայի օրենքներով:

1) Լույսի անդրադարձումը:
2) Լույսի բեկումը:
3) Լույսի դիֆրակցիան:
4) Ստվերի առաջացումը:

1795. Անթափանց սկավառակը լուսավորելիս նրա ստվերի կենտրոնում առաջացավ լուսավոր կետ: Ո՞ր օրենքներով է բացատրվում այդ փաստը.

ա. երկրաչափական օպտիկայի օրենքներով,

բ. ալիքային օպտիկայի օրենքներով:

1) Միայն ա:
2) Միայն բ:
3) Ե՛վ ա, և՛ բ:
4) Ո՛չ ա, ո՛չ բ:

1796. Ինչո՞ւ ռադիոալիքները շրջանցում են շինությունները, իսկ լույսի ալիքները՝ ոչ:

1) Լույսի ալիքի երկարությունը շատ փոքր է շինությունների չափերից:
2) Լույսի ալիքի երկարությունը շատ մեծ է շինությունների չափերից:
3) Ռադիոալիքների հաճախությունը շատ անգամ մեծ է լույսի ալիքների հաճախությունից:
4) Լույսի ալիքները էլեկտրամագնիսական ալիքներ չեն:

1797. Դիֆրակտային ցանցի թափանցիկ շերտի լայնությունը a է, իսկ անթափանց խազի լայնությունը՝ b: Որքա՞ն է ցանցի d պարբերությունը:

1) $d=\frac{1}{2}(a+b)$:
3) $d=a+b$:

www.atc.am

2) $d = \frac{1}{2}(a-b)$: 4) $d = a-b$:

1798. Էկրանը d պարբերությամբ դիֆրակտային ցանցից տեղադրված է L հեռավորությամբ: Միագույն լույսի դիֆրակցիայի ժամանակ առաջին կարգի մաքսիմումը էկրանի վրա ստացվում է կենտրոնականից a հեռավորությամբ: Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը:

1) $\frac{da}{L}$: 3) $\frac{d\sqrt{L^2+a^2}}{L}$:

2) $\frac{dL}{\sqrt{L^2+a^2}}$: 4) $\frac{da}{\sqrt{L^2+a^2}}$:



1799. Լազերի կանաչ ճառագայթը դիֆրակտային ցանցի վրա ուղղահայաց ընկնելիս ցանցի հետևում տեղադրված էկրանին դիտվում է դիֆրակտային պատկեր: Ինչպե՞ս կփոխվի պատկերը, եթե ցանցի վրա ընկնի լազերի կարմիր ճառագայթ:

1) B կետի մաքսիմումը կմնա իր տեղում, իսկ մնացած մաքսիմումները կհեռանան նրանից:
2) B կետի մաքսիմումը կմնա իր տեղում, մնացած մաքսիմումները կմոտենան նրան:
3) B կետի մաքսիմումը կվերանա, իսկ իսկ մնացած մաքսիմումները կմնան իրենց տեղերում:
4) Պատկերը չի փոխվի:



1800. Երկայնակա՞ն, թե՞ լայնական է լուսային ալիքը:

1) Լայնական է:
2) Երկայնական է:
3) Հնարավոր է լինի երկայնական կամ լայնական:
4) Ո՛չ երկայնական է, ո՛չ լայնական:

1801. Ո՞րն է ենթադրության ճիշտ շարունակությունը:
Լույսի բևեռացումն ապացուցում է, որ՝

1) լույսը լայնական ալիք է:
2) լույսն էլեկտրականապես չեզոք մասնիկների հոսք է:
3) լույսը երկայնական ալիք է:
4) լույսը լիցքավորված մասնիկների հոսք է:

www.atc.am

1802. Ինչո՞ւ Արեգակի կամ էլեկտրական լամպի արձակած լույսը բևեռացած չէ:

1) Այն ֆոտոնների հոսք է:
2) Այն տարբեր հաճախությամբ լուսային ալիքների միավորում է:
3) Այն լայնական ալիք է:
4) Այն բևեռացման բոլոր հնարավոր ուղղություններով ալիքների համախումբ է:

1803. Ո՞ր օպտիկական սարքի օգնությամբ է հնարավոր բնական լույսից ստանալ բևեռացած լույս:

1) Ապակե հատվածակողմի:
2) Ոսպնյակի:
3) Բևեռացուցչի:
4) Դիֆրակտային ցանցի:

1804. Գիտության մեջ ո՞ր պնդումն է համարվում ճիշտ:

1) Այն, որը հայտնի է բոլորին:
2) Այն, որը տպագրված է:
3) Այն, որն ընդունում են հեղինակավոր գիտնականները:
4) Այն, որը տարբեր գիտնականներ բազմիցս ստուգել են փորձով:

1805. Ո՞րն պնդումն է հակասում հարաբերականության հատուկ տեսության կանխադրույթներին:

1) Հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում բնության կամայական երևույթ ընթանում է նույն ձևով:
2) Վակուումում լույսի տարածման արագությունը կամայական իներցիալ համակարգում ունի նույն արժեքը:
3) Վակուումում լույսի տարածման արագությունը կախված չէ լույսի աղբյուրի շարժման արագությունից:
4) Հաշվարկման բոլոր համակարգերում բնության կամայական երևույթ ընթանում է նույն ձևով:

1806. Համաձայն հարաբերականության հատուկ տեսության՝ ստորև նշված ո՞ր պնդում է ճիշտ:

ա. Ֆիզիկական երևույթները նկարագրելու համար հաշվարկման բոլոր համակարգերը համարժեք են:

բ. Ֆիզիկական երևույթները նկարագրելու համար հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերը համարժեք են:

1) ա պնդումը:
2) բ պնդումը:
3) Երկու պնդումներն էլ ճիշտ են:
4) Երկու պնդումներն էլ սխալ են:

1807. Հաշվարկման համակարգի ընտրությունից կախվա՞ծ է արդյոք

ա. մարմնի արագությունը,

www.gfc.am

բ. լույսի արագությունը:

1) Լույսի արագությունը կախված է, մարմնի արագությունը՝ ոչ:
2) Մարմնի արագությունը կախված է, լույսի արագությունը՝ ոչ:
3) Երկուսն էլ կախված են:
4) Երկուսն էլ կախված չեն:

1808. Երկրին v արագությամբ մոտեցող հրթիռից լույս է արձակվում: Որքա՞ն է այդ լույսի արագությունը Երկրի նկատմամբ:

1) c:
2) v:
3) $c+v$:
4) $\sqrt{c^2+v^2}$:

1809. Լույսն անշարժ աղբյուրից ուղղահայաց ընկնում է հայելու մակերևույթին: Հայելին աղբյուրից հեռանում է հաստատուն $\vec{v}$ արագությամբ: Որքա՞ն է անդրադարձած լույսի արագությունը հայելու հետ կապված հաշվարկման համակարգում:



1) $c-v$:
2) $c+v$:
3) c:
4) $c\sqrt{1-v^2/c^2}$:

1810. Ձողի երկարությունը նրա հետ կապված հաշվարկման համակարգում l_0 է: Որքա՞ն կլինի նրա երկարությունը հաշվարկման այն համակարգում, որի նկատմամբ ձողը շարժվում է իր երկայնքով ուղղված v արագությամբ:

1) $l=l_0$:
2) $l=\dfrac{l_0}{\sqrt{1-v^2/c^2}}$:
3) $l=l_0\sqrt{1-v^2/c^2}$:
4) $l=l_0\sqrt{1+v^2/c^2}$:

1811. Ի՞նչ արագությամբ պետք է շարժվի մարմինը, որպեսզի շարժման ուղղությամբ նրա չափերը փոքրանան 2 անգամ:

1) $\dfrac{c}{2}$:
2) $\dfrac{\sqrt{2}}{2}c$:
3) $\dfrac{\sqrt{3}}{2}c$:
4) c:

1812. Քանոնը սկսում է իր երկայնքով ուղղված արագությամբ շարժվել լույսի արագությանը մոտ արագությամբ: Կփոխվե՞ն արդյոք այդ դեպքում քանոնի՝

ա. չափերը,

www.atc.am

բ. ծավալը,

գ. նրա մեջ պարունակվող ատոմների թիվը:

1) ոչ մեկն էլ չի փոխվի
2) բոլորն էլ փոխվեն
3) ա-ն և բ-ն փոխվեն, իսկ գ-ն՝ ոչ
4) ա-ն կփոխվի, իսկ բ-ն և գ-ն՝ ոչ

1813. Ի՞նչ արագությամբ պետք է շարժվի համակարգը, որպեսզի ժամանակի ընթացքն այնտեղ երկու անգամ տարբերվի անշարժ համակարգում ժամանակի ընթացքից:

1) $\frac{c}{2}$:
2) $\frac{\sqrt{2}}{2}c$:
3) $\frac{\sqrt{3}}{2}c$:
4) c:

1814. Ո՞րն է զանգվածի և էներգիայի կապն արտահայտող բանաձևը՝ ըստ հարաբերականության հատուկ տեսության:

1) $E = mc^2 + \frac{mv^2}{2}$:
2) $E = \frac{mc^2}{2}$:
3) $E = \frac{mc^2}{\sqrt{1 - v^2/c^2}}$:
4) $E = h\nu$:

1815. Ի՞նչ արագության դեպքում է մասնիկի կինետիկ էներգիան հավասար նրա հանգստի էներգիայի 2/3-ին:

1) $0{,}8c$:
2) c:
3) $0{,}6c$:
4) $0{,}4c$:

1816. Ի՞նչ արագության դեպքում էլեկտրոնի լրիվ էներգիան վակուումում երկու անգամ մեծ է նրա հանգստի էներգիայից:

1) $\frac{c}{2}$:
2) $\frac{\sqrt{2}}{2}c$:
3) $\frac{\sqrt{3}}{2}c$:
4) 0:

1817. Մասնիկի լրիվ էներգիան քանի՞ անգամ է մեծ նրա կինետիկ էներգիայից, եթե նրա արագությունը համապատասխանում է վակուումում լույսի արագության 60 %-ին:

1) 2:
3) 4:

www.atc.am

2) 3: 4) 5:

1818. **Ո՞ր բանաձևն է արտահայտում Արեգակի առաքած E էներգիայի և նրա զանգվածի Δm փոփոխության կապը:**

1) $E = \dfrac{\Delta m v^2}{2}$: 3) $E = \Delta m c^2$:

2) $E = \Delta m c$: 4) $E = \dfrac{\Delta m}{c^2}$:

1819. **Որքա՞ն է էլեկտրոնի արագության հարաբերությունը վակուումում լույսի արագությանը, եթե էլեկտրոնի զանգվածը m_e է, իսկ էներգիան՝ E:**

1) $\sqrt{\dfrac{E^2 - m_e^2 c^4}{E^2}}$: 3) $\sqrt{\dfrac{2E - m_e c^2}{m_e c}}$:

2) $\sqrt{\dfrac{2E}{m_e c^2}}$: 4) $\sqrt{\dfrac{E^2 + m_e^2 c^4}{E^2}}$:

www.atc.am

12.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1820. 1,2 մ երկարությամբ ուղղածիգ ծողի ստվերը 0,8 մ է: Որքա՞ն է ծառի բարձրությունը, եթե այդ նույն պահին նրա ստվերի երկարությունը 10 մ է:

1821. 1,8 մ բարձրությամբ եղևնու ստվերի երկարությունը 90 սմ է, իսկ կեչունը՝ 10 մ: Որքա՞ն է կեչու բարձրությունը:

1822. Օրվա որոշակի պահի առարկայի ստվերի երկարությունը հավասար է նրա բարձրությանը: Որքա՞ն է այդ պահին Արեգակի անկյունային բարձրությունը հորիզոնից:

1823. Ճառագայթի անկման անկյունը հարթ հայելու վրա 25^0 է: Որքա՞ն է ընկնող և անդրադարձած ճառագայթների կազմած անկյունը:

1824. Լույսի աղբյուրի տրամագիծը 0,2 մ է, դրա հեռավորությունը էկրանից՝ 4 մ: Էկրանից ի՞նչ նվազագույն հեռավորությամբ պետք է տեղադրել 0,05 մ տրամագծով անթափանց գնդակը, որպեսզի այն էկրանին միայն կիսաստվեր առաջացնի: Լույսի աղբյուրի և գնդակի կենտրոններով անցնող ուղիղն ուղղահայաց է էկրանի հարթությանը:

1825. Լույսի ճառագայթը 15^0 անկյան տակ ընկնում է հարթ հայելու վրա: Քանի՞ աստիճանով կփոխվի ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը, եթե ճառագայթի անկման անկյունը հավասարվի 60^0-ի

1826. Հարթ հայելու և նրանից անդրադարձած ճառագայթի կազմած անկյունը 50^0 է: Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը:

1827. Հարթ հայելին հորիզոնական ուղղության հետ կազմում է $\varphi = 40^0$ անկյուն: Որքա՞ն է հայելու վրա հորիզոնական ուղղությամբ ընկնող ճառագայթի անկման անկյունը (նկ. 55):



Նկ. 55

1828. Հորիզոնական տեղադրված հարթ հայելու վրա լույսի ճառագայթի անկման անկյունը 30^0 է: Որքա՞ն կլինի լույսի անդրադարձման անկյունը, եթե հայելին շրջենք 10^0-ով այնպես, ինչպես ցույց է տրված 56-րդ նկարում:



Նկ. 56

www.aca.am

1829. Հորիզոնական տեղադրված հարթ հայելու վրա լույսի ճառագայթի անկման անկյունը 45^0 է: Որքա՞ն կլինի ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը, եթե հայելին շրջենք 15^0-ով այնպես, ինչպես ցույց է տրված 57-րդ նկարում:



Նկ. 57

1830. Աղջիկը կանգնած է հարթ հայելուց 1,5 մ հեռավորությամբ: Իրենից որքա՞ն հեռավորության վրա է նա տեսնում հայելում առաջացած իր պատկերը:

1831. Մարդը կանգնած է հարթ հայելու դիմաց՝ որոշ հեռավորությամբ: Որքանո՞վ կմեծանա մարդու և նրա պատկերի միջև հեռավորությունը, եթե մարդը հայելուց հեռանա ևս 2 մ:

1832. Լույսի ճառագայթը սեղանի հորիզոնական հարթության հետ կազմում է $\alpha = 52^0$ անկյուն: Սեղանի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, որպեսզի ճառագայթն անդրադառնա սեղանի հարթությանը ուղղահայաց ուղղությամբ:

1833. Անհրաժեշտ է հարթ հայելու օգնությամբ լուսավորել հորի հատակը: Հորիզոնի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, եթե Արեգակի ճառագայթներն ընկնում են ուղղածիգի նկատմամբ 40^0 անկյան տակ:

1834. Երկու հարթ հայելիներ միմյանց հետ կազմում են 60^0 անկյուն: Առաջին հայելուց անդրադարձած ճառագայթը երկրորդի վրա ընկնում է ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է այդ ճառագայթի անկման անկյունը առաջին հայելու վրա:

1835. Երկու հարթ, իրար զուգահեռ հայելիների միջև տեղադրված է լույսի կետային աղբյուր: Որքանո՞վ կմեծանա այդ հայելիներում աղբյուրի առաջին պատկերների հեռավորությունը, եթե հայելիները 0,5 մ-ով հեռացվեն իրարից:

1836. Լույսի կետային աղբյուրը տեղադրված է իրար զուգահեռ հարթ հայելիների միջև: Մոդուլով ի՞նչ հավասար արագություններով պետք է իրար ընդառաջ շարժվեն հայելիները, որպեսզի աղբյուրի առաջին պատկերները իրար մոտենան 4 մ/վ արագությամբ:

1837. Առարկան մոտենում է հարթ հայելուն նրա նորմալի նկատմամբ $\alpha = 60^0$ անկ-



Նկ. 58

www.atc.am

յուն կազմող ուղղով ուղղված $\nu = 2$ մ/վ արագությամբ: Ի՞նչ արագությամբ է առարկան մոտենում իր պատկերին (նկ. 58):

1838. Որքա՞ն է թափանցիկ դիէլեկտրիկի բեկման ցուցիչը, եթե հայտնի է, որ վակուումից այդ դիէլեկտրիկի վրա ընկնող ճառագայթի 45^0 անկման անկյան դեպքում բեկման անկյունը 30^0 է: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1839. Ի՞նչ անկյան տակ պետք է լույսի ճառագայթը վակուումից ընկնի $\sqrt{3}$ բեկման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա, որպեսզի բեկման անկյունը երկու անգամ փոքր լինի անկման անկյունից:

1840. Լույսի ճառագայթն ընկնում է երկու միաջավայրերը բաժանող սահմանին՝ $\alpha = 30^0$ անկյան տակ: Առաջին միջավայրի բեկման ցուցիչը՝ $n_1 = 2,4$: Որքա՞ն է երկրորդ միջավայրի բեկման ցուցիչը, եթե հայտնի է, որ անդրադարձած և բեկված ճառագայթներն իրար ուղղահայաց են: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1841. Ջրով լիքը լցված 3 մ խորությամբ ջրավազանի հատակին խրված է սյուն, որի վերին ծայրը համընկնում է ջրի մակերևույթին: Որքա՞ն է ջրավազանի հատակին սյան ստվերի երկարությունն այն պահին, երբ Արեգակի անկյունային բարձրությունը հորիզոնից 30^0 է: Ջրի բեկման ցուցիչը $\sqrt{3}$ է: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1842. Որքա՞ն է լրիվ անդրադարձման սահմանային անկյունը՝ արտահայտած աստիճաններով, եթե լույսի ճառագայթը $n = 2$ բեկման ցուցիչ ունեցող միջավայրից անցնում է վակուում:

1843. Որքա՞ն է վակուումի հետ սահմանակցող թափանցիկ միջավայրի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը՝ արտահայտած աստիճաններով, եթե այդ միջավայրում լույսի տարածման արագությունը $1,5 \cdot 10^8$ մ/վ է:

1844. Լույսի ճառագայթը վակուումում 30 սմ հեռավորություն անցնում է այնքան ժամանակամիջոցում, որքան ժամանակամիջոցում թափանցիկ հեղուկում 0,25մ-ը: Որքա՞ն է լույսի արագությունը հեղուկում: Պատասխանը բազմապատկել 10^{-7}-ով:

1845. Անկման նույն անկյունների դեպքում առաջին միջավայրից երկրորդն անցնելիս ճառագայթի բեկման անկյունը 45^0 է, իսկ առաջինից երրորդն անցնելիս՝ 30^0: Որքա՞ն է երրորդ միջավայրից երկրորդն անցնելիս ճառագայթի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը:

www.aic.am

1846. Ջրասուզակին ջրի տակ թվում է, թե ջրի մակերևույթի հետ Արեգակի ճառագայթների կազմած անկյունը 60^0 է: Իրականում ջրի մակերևույթի հետ ի՞նչ անկյուն են կազմում Արեգակի ճառագայթները: Ջրի բեկման ցուցիչն ընդունել $\sqrt{2}$:

1847. Ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 0,25 մ է: Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:

1848. Որքա՞ն է հավաքող բարակ ոսպնյակի օպտիկական ուժը, եթե ոսպնյակից 0,15 մ հեռավորությամբ դրված առարկայի իրական պատկերն ստացվում է ոսպնյակից 0,3 մ հեռավորության վրա:

1849. 0,2 մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա իրական պատկերն ստացվի ոսպնյակից 0,25 մ հեռավորության վրա:

1850. Բարակ ոսպնյակից, որի կիզակետային հեռավորությունը 40 սմ է, ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղավորել առարկան, որպեսզի նրա պատկերը ստացվի բնական մեծությամբ: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1851. 1,5 դպտր օպտիկական ուժ ունեցող բարակ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղավորել առարկան, որպեսզի նրա իրական պատկերն ստացվի ոսպնյակից 1 մ հեռավորության վրա:

1852. Որքա՞ն է հավաքող բարակ ոսպյակի խոշորացումը, եթե նրա կիզակետային հեռավորությունը 0,2 մ է, իսկ հեռավորությունը էկրանից՝ 6 մ:

1853. Առարկան տեղավորված է հավաքող բարակ ոսպնյակից նրա կիզակետային հեռավորության 3 2-ին հավասար հեռավորությամբ՝ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքին ուղղահայաց դիրքով: Որքա՞ն է գծային խոշորացումը:

1854. Առարկան տեղադրված է հավաքող բարակ ոսպնյակից 1 մ հեռու: Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը, եթե նրա և առարկայի չափերը նույնն են:

1855. Առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 4 անգամ մեծ է նրա կիզակետային հեռավորությունից: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը, եթե առարկայի պատկերը ստացվում է ոսպնյակից 8 մ հեռավորության վրա:

1856. Հավաքող բարակ ոսպնյակը էկրանի վրա տալիս է լույսի աղբյուրի իրական պատկերը, որի խոշորացումը 0,2 է: Որքա՞ն կլինի խոշորա-

www.atc.am

ցումը, եթե էկրանի և լույսի աղբյուրի տեղերը փոխենք՝ ոսպնյակը թողնելով նույն տեղում:

1857. Մոմի հեռավորությունը բարակ ոսպնյակից 3 մ է, իսկ նրա իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ 2 մ: Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի պատկերը, եթե մոմը մոտեցնենք ոսպնյակին 1,5 մ-ով:

1858. Որքա՞ն է բարակ ոսպնյակի օպտիկական ուժը, եթե դրանով ստացված առարկայի իրական պատկերը խոշորացված է քսանապատիկ: Առարկայի հեռավորությունը ոսպնյակից 10,5 սմ է:

1859. Հավաքող բարակ ոսպնյակն ունի 10 սմ կիզակետային հեռավորություն: Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է դրվի առարկան, որպեսզի պատկերն ստացվի բնական մեծության 1/9-ի չափ:

1860. Լույսի ճառագայթների զուգահեռ փունջն ընկնում է $d_1 = 6$ սմ տրամագծով և 5 դպտր օպտիկական ուժով բարակ ոսպնյակի վրա՝ գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ (նկ. 59): Էկրանի հեռավորությունը ոսպնյակից $L = 10$ սմ է: Որքա՞ն է էկրանի վրա ոսպնյակով ստացված լուսավոր շրջանի տրամագիծը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:



Նկ. 59

1861. Ցրող բարակ ոսպնյակից 0,5 մ հեռավորությամբ տեղադրված առարկայի կեղծ պատկերը ստացվում է ոսպնյակի և նրա կիզակետի մեջտեղում: Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժի բացարձակ արժեքը:

1862. Սինուսյն գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով իրարից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել $F_1 = 40$ սմ և $F_2 = 60$ սմ կիզակետային հեռավորություններ ունեցող հավաքող բարակ ոսպնյակները, որպեսզի զուգահեռ ճառագայթները, անցնելով երկու ոսպնյակներով, մնան իրար զուգահեռ:

1863. Առարկան տեղադրված է 0,35 մ կիզակետային հեռավորություն ունեցող ցրող բարակ ոսպնյակից 0,7 մ հեռավորությամբ: Քանի՞ անգամ է առարկայի բարձրությունը մեծ նրա պատկերի բարձրությունից:

1864. Լույսի ալիքի երկարությունը վակուումում $6 \cdot 10^{-7}$ մ է: Որքա՞ն է այդ ալիքի երկարությունը ջրում: Ջրի բեկման ցուցիչը 4/3 է: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

www.ato.am

1865. Աչքի կողմից դեռևս ընկալվող «մուգ» կարմիր գույնի լույսի ալիքի երկարությունը օդում $7{,}5\cdot10^{-7}$ մ է: Որքա՞ն է այդ ալիքի տատանումների հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:

1866. Որքա՞ն է միջավայրի բեկման ցուցիչը, եթե $5\cdot10^{14}$ Հց հաճախությամբ լույսի ալիքի երկարությունն այնտեղ $5\cdot10^{-7}$ մ է: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1867. $4{,}5\cdot10^{14}$ Հց հաճախությամբ մեներանգ ճառագայթման քանի՞ ալիքի երկարություն է տեղավորվում վակուումում՝ 1 մ հատվածի վրա: Պատասխանը բազմապատկել 10^{-5}-ով:

1868. Որքա՞ն է ջրում ճանապարհի այն երկարությունը, որի վրա տեղավորվում է մեներանգ լույսի ճիշտ այնքան ալիքի երկարություն, որքան վակուումում տեղավորվում է ճանապարհի 5,32 մ երկարության վրա: Ջրի բեկման ցուցիչը 1,33 է:

1869. Երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարբերությունն ինչ-որ կետում $2{,}75\cdot10^{-6}$ մ է, որտեղ վերադրվելով՝ ալիքները առաջացնում են հինգերորդ կարգի մինիմում: Որքա՞ն է այդ ալիքների երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^{7}-ով:

1870. Ինտերֆերենցային պատկերի ինչ-որ կետում համընկնում են $6{,}6\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ կոհերենտ ալիքների չորրորդ կարգի մաքսիմումը և անհայտ ալիքի երկարությամբ կոհերենտ ալիքների հինգերորդ կարգի մինիմումը: Որքա՞ն է անհայտ ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^{8}-ով:

1871. Երկու նեղ ճեղքերի շատ մոտ լինելու դեպքում դժվար է անմիջական չափումներով որոշել նրանց միջև հեռավորությունը: Ճեղքերը $5\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ լույսով լուսավորելիս նրանից 4 մ հեռավորությամբ էկրանին ստացվում է ինտերֆերենցային պատկեր, որի լուսավոր շերտերի միջև հեռավորությունը 2 սմ է: Որքա՞ն է ճեղքերի հեռավորությունը իրարից: Պատասխանը բազմապատկել 10^{4}-ով:

1872. Որքա՞ն է դիֆրակտային ցանցի պարբերությունը, եթե առաջին կարգի դիֆրակտային մաքսիմումը ստացվել է կենտրոնականից 3,2 սմ հեռավորությամբ, իսկ ցանցի կենտրոնից մինչև էկրան հեռավորությունը 1մ է: Ցանցը լուսավորված է եղել 640 Նմ ալիքի երկարությամբ լույսով: Ընդունել $\sin\varphi \approx tg\varphi$: Պատասխանը բազմապատկել 10^{5}-ով:

www.atc.am

1873. Դիֆրակտային ցանցը սպիտակ լույսով լուսավորելիս երկրորդ և երրորդ կարգի սպեկտրները մասամբ իրար ծածկում են: Որքա՞ն է երկրորդ կարգի սպեկտրի այն ալիքի երկարությունը, որը ծածկվում է երրորդ կարգի սպեկտրի $4\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ գծով: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

1874. Դիֆրակտային ցանցը լուսավորվում է նրա նորմալի ուղղությամբ ընկնող մեներանգ լույսով: Ի՞նչ անկյան տակ է դիտվում երկրորդ կարգի մաքսիմումը, եթե երրորդ կարգի մաքսիմումը դիտվում է β անկյան տակ, որի $\sin\beta = 0{,}75$:

1875. $4\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ մեներանգ լույսը նորմալի ուղղությամբ ընկնում է յուրաքանչյուր միլիմետրում 500 նրբագիծ պարունակող ցանցի վրա: Գտնել այդ ալիքի համար ցանցի տված դիֆրակտային մաքսիմումների ընդհանուր թիվը:

1876. Պարպման խողովակից լույսի փունջն ուղղահայաց ընկնում է դիֆրակտային ցանցի վրա: Սպեկտրի ինչպիսի՞ ալիքի երկարությամբ երրորդ կարգի գծի հետ է վերադրվում $6{,}72\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ սպեկտրի երկրորդ կարգի կարմիր գիծը: Պատասխանը բազմապատկել 10^9-ով:

1877. Ջանգվածի ի՞նչ փոփոխությունն է համապատասխանում մասնիկի էներգիայի $1{,}35\cdot10^{-13}$ Ջ փոփոխությանը: Պատասխանը բազմապատկել 10^{31}-ով:

1878. Անշարժ ձողի երկարությունը 0,9 մ է: Որքա՞ն է ձողի երկարությունը այն դիտողի համար, որի նկատմամբ ձողն իր երկայնքի ուղղությամբ շարժվում է $0{,}8\,c$ արագությամբ (c-ն լույսի արագությունն է վակուումում): Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1879. Հաշվարկման լաբորատոր համակարգում մասնիկն անցնում է 300 մ՝ շարժվելով $v = c\ \ 2$ արագությամբ: Որքա՞ն է շարժման ժամանակը մասնիկի հետ կապված հաշվարկման համակարգում: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:

1880. Որքա՞ն է 1կգ զանգվածով մարմնի հանգստի էներգիան դաղարի վիճակում: Պատասխանը բազմապատկել 10^{-16}-ով:

1881. Մարմնի էներգիայի փոփոխությունը 9 Ջ է: Որքա՞ն է նրա զանգվածի փոփոխությունը: Պատասխանը բազմապատկել 10^{16}-ով:

www.atc.am

1882. Արեգակի ճառագայթման հզորությունը $3{,}8 \cdot 10^{26}$ Վտ է: Ճառագայթման հետևանքով որքանո՞վ կփոքրանա Արեգակի զանգվածը մեկ օրում: Պատասխանը բազմապատկել 10^{-11}-ով:

1883. Ի՞նչ արագության դեպքում է էլեկտրոնի կինետիկ էներգիան հավասար նրա հանգստի էներգիային: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

1884. Էլեկտրաստատիկ դաշտի ազդեցությամբ դադարի վիճակում գտնվող էլեկտրոնը ձեռք է բերում $0{,}8\ c$ արագություն: Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքն այդ դեպքում: Պատասխանը բազմապատկել 10^{15}-ով:

1885. Ի՞նչ արագության դեպքում շարժվող մարմնի երկարության ռելյատիվիստական կարճացումը կկազմի 25%: Ընդունել, որ $\sqrt{7} = 2{,}6$: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:

www.atc.am

12.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1886. Արեգակի ճառագայթներով լուսավորված 5 մ բարձրությամբ ծառի ստվերի երկարությունը 5 մ է:

1) Հորիզոնի նկատմամբ ի՞նչ անկյան տակ են ընկնում Արեգակի ճառագայթները:
2) Որքա՞ն է այդ դեպքում 20 մ բարձրությամբ շենքի ստվերի երկարությունը:

1887. Լույսի ճառագայթն ընկնում է հարթ հայելու վրա:

1) Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը, եթե ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը 90^0 է:
2) Որքա՞ն կլինի անդրադարձման անկյունը, եթե ճառագայթը հայելու վրա ընկնի նրա մակերևույթին ուղղահայաց:

1888. Հարթ հայելուն հպված լույսի կետային աղբյուրն սկսում է հայելուց հեռանալ հաստատուն 2 մ/վ արագությամբ:

1) Ի՞նչ արագությամբ է հեռանում լույսի աղբյուրն իր պատկերից:
2) Որքա՞ն կլինի աղբյուրի և նրա պատկերի միջև հեռավորությունը ժամանակի սկզբնական պահից 5 վ անց:

1889. Լույսի կետային աղբյուրը և երկու հարթ հայելիներում նրա առաջին պատկերները $\sqrt{3}$ մ կողմով հավասարակողմ եռանկյան գագաթներում են:

1) Որքա՞ն է հայելիների կազմած անկյունը:
2) Որքա՞ն է աղբյուրի հեռավորությունը հայելիների հատման գծից:

1890. Լույսի ճառագայթը 60^0 անկյան տակ ընկնում է երկու թափանցիկ միջավայրերի բաժանման սահմանին: Երկրորդ միջավայրի բեկման ցուցիչը $\sqrt{3}$ է: Հայտնի է, որ անդրադարձած և բեկված ճառագայթները փոխուղղահայաց են:

1) Որքա՞ն է բեկման անկյունը:
2) Որքա՞ն է առաջին միջավայրի բեկման ցուցիչը:



Նկ. 60

1891. $\beta = 30^0$ բեկող անկյուն ունեցող հատվածակողմի AC նիստն արծաթապատած է (նկ. 60): Լույսի ճառագայթը $\alpha = 45^0$ անկյան տակ ընկնում է AB նիստի վրա և, արծաթապատ նիս-

www.atc.am

տից անդրադառնալուց հետո, վերադառնում է նույն ուղղությամբ:

1) Որքա՞ն է բեկման անկյունը ճառագայթը հատվածակողմի մեջ մտնելիս:
2) Որքա՞ն է հատվածակողմի նյութի բեկման ցուցիչը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1892. **Լույսի ճառագայթն օդից ընկնում է թափանցիկ համասեռ գնդի վրա, անցնում նրա միջով և նորից դուրս գալիս օդ: Ճառագայթի անկման անկյունը 32^0 է, իսկ բեկման անկյունը՝ 19^0:**

1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը գնդից դուրս գալիս:
2) Որքա՞ն է գնդի վրա ընկնող և նրանից դուրս եկող ճառագայթների կազմած անկյունը:

1893. **Լույսի կետային աղբյուրի խորությունը ջրում 1,5 մ է: Ջրի բեկման ցուցիչը՝ 1,25:**

1) Որքա՞ն է ջուր-օդ սահմանի լրիվ անդրադարձման սահմանային անկյան սինուսը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է ջրի մակերևույթին այն շրջանի շառավիղը, որի սահմաններում հնարավոր է ճառագայթների դուրս գալը դեպի օդ:

1894. **Լույսի ճառագայթը թափանցիկ դիէլեկտրիկից անցնում է օդ: Այդ միջավայրերի սահմանի համար լրիվ անդրադարձման սահմանային անկյունը 30^0 է:**

1) Որքա՞ն է դիէլեկտրիկի բեկման ցուցիչը:
2) Որքա՞ն է լույսի տարածման արագությունն այդ դիէլեկտրիկում, եթե օդում $3\cdot10^8$ մ/վ է: Պատասխանը բազմապատկել 10^{-7}-ով:

1895. **Առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 0,2 մ է, իսկ նրա իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ 0,8 մ:**

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է պատկերի խոշորացումը:

1896. **Լույսի կետային աղբյուրի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 4 սմ է: Ոսպնյակի տրամագիծը 10 սմ է: Ոսպնյակից դուրս եկող ճառագայթները տարամիտում են, ընդ որում, եզրային ճառագայթների կազմած անկյունը 90^0 է:**

1) Որքա՞ն է աղբյուրի կեղծ պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

www.ato.am

1897. Բարակ ոսպնյակով ստանում են առարկայի 1,5 անգամ խոշորացված պատկերը: Այնուհետև առարկան 12 սմ-ով մոտեցնում են ոսպնյակին և ստանում առարկայի նույն չափով խոշորացված կեղծ պատկերը:

1) Որքա՞ն էր առարկայի հեռավորությունը ոսպնյակից մինչ տեղաշարժը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1898. Առարկայի հեռավորությունը բարակ ոսպնյակից 12 մ է, իսկ նրա իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ 2,4 մ:

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը:
2) Ոսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի պատկերը, եթե առարկան մոտեցնենք ոսպնյակին 8 մ-ով:

1899. 8 դպտր օպտիկական ուժ ունեցող հավաքող բարակ ոսպնյակը տալիս է առարկայի բնական չափով պատկերը:

1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքանո՞վ պետք է հեռացնել առարկան ոսպնյակից, որպեսզի ստացվի նրա 3 անգամ փոքրացված պատկերը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1900. Ցրող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը՝ $|F| = 0{,}12$ մ, իսկ առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից՝ $|f| = 0{,}09$ մ:

1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի $|\Gamma|$ խոշորացումը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1901. Ցրող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի վրա A կետից դուրս եկող լույսի ճառագայթն այդ առանցքի հետ կազմում է 30^0 անկյուն: Ոսպնյակում բեկվելուց հետո ճառագայթը գլխավոր օպտիկական առանցքի հետ կազմում է 60^0 անկյուն: A կետի հեռավորությունը ոսպնյակից 12 սմ է:

1) Որքա՞ն է այն կետի հեռավորությունը ոսպնյակից, որտեղ բեկված ճառագայթի շարունակությունը կհատվի գլխավոր օպտիկական առանցքի հետ: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

www.atc.am

2) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1902. 4 դպտր օպտիկական ուժ ունեցող երկու միատեսակ հավաքող բարակ ոսպնյակների համակարգի վրա ընկնում է լույսի ճառագայթների գլանաձև փունջ: Համակարգից դուրս եկած փունջը դարձյալ գլանաձև է: Ոսպնյակների գլխավոր օպտիկական առանցքները համընկնում են:

1) Որքա՞ն է ոսպնյակների միջև հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է համակարգի վրա ընկնող և դուրս եկող փնջերի շառավիղների հարաբերությունը:

1903. $4\cdot10^{14}$ Հց հաճախությամբ կարմիր լույսի ալիքը վակուումից անցնում է ապակու մեջ, որի բեկման ցուցիչը 1,5 է:

1) Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը ապակում: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Որքանո՞վ է փոքրանում ալիքի երկարությունը վակուումից ապակու մեջ անցնելիս: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1904. Երկու կոհերենտ ալիքների ընթացքների տարբերությունը 0,6 մկմ է:

1) Տեսանելի տիրույթում (400 նմ $< \lambda <$ 800 նմ) ընկած ի՞նչ ալիքի երկարության դեպքում ինտերֆերենցի հետևանքով կստացվի ինտենսիվության մաքսիմում: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Քանի՞ ալիքի երկարություն կտեղավորվի ընթացքների տարբերության վրա այդ դեպքում:

1905. Դիֆրակտային ցանցը 1 մմ-ում պարունակվում է 1000 նրբագիծ: Ցանցի վրա ուղղահայաց ընկնում է $5\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ մեներանգ լույսի փունջ:

1) Ի՞նչ անկյան տակ է դիտվում առաջին կարգի մաքսիմումը՝ արտահայտած աստիճաններով:
2) Քանի՞ մաքսիմում է պարունակում դիֆրակտային սպեկտրը:

1906. $5\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ մեներանգ լույսն ուղղահայաց ընկնում է յուրաքանչյուր միլիմետրում 400 նրբագիծ պարունակող ցանցի վրա:

1) Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
2) Քանի՞ մաքսիմում է պարունակում դիֆրակտային սպեկտրը:

www.atc.am

1907. **Դիֆրակտային ցանցում $6\cdot10^{-7}$ մ երկարությամբ լուսային ալիքի համար հինգերորդ կարգի մաքսիմումը դիտվում է ցանցին ուղղահայաց ընկնող ճառագայթների ուղղության հետ 18^0 կազմող անկյան տակ: Ընդունել՝ $\sin 18^0 = 0{,}309$:**

1) Քանի՞ նրբագիծ է պարունակում դիֆրակտային ցանցի 0,1 մ-ը: Պատասխանը բազմապատկել 10^{-2}-ով:
2) Որքա՞ն պետք է լինի ալիքի երկարությունը, որպեսզի նույն անկյան տակ դիտվի չորրորդ կարգի մաքսիմում: Պատասխանը բազմապատկել 10^8-ով:

1908. **Շարժվող անկայուն մասնիկի կյանքի տևողությունը հաշվարկման լաբորատոր համակարգում 20 նվ է, իսկ մասնիկի հետ կապված հաշվարկման համակարգում՝ 10 նվ:**

1) Որքա՞ն է մասնիկի արագությունը հաշվարկման լաբորատոր համակարգում: Պատասխանը բազմապատկել 10^{-6}-ով:
2) Ի՞նչ ճանապարհ է անցնում մասնիկը հաշվարկման լաբորատոր համակարգում մինչև տրոհումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1909. **Պրոտոնը շարժվում է $v = 0{,}96\ c$ արագությամբ, որտեղ c-ն լույսի արագությունն է վակուումում:**

1) Որքա՞ն է պրոտոնի լրիվ էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{11}-ով:
2) Որքանո՞վ է պրոտոնի լրիվ էներգիան մեծ նրա կինետիկ էներգիայից: Պատասխանը բազմապատկել 10^{13}-ով:

www.atc.am

12.4. ԵՐԵՔ ՊԱՏԱԽՍԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1910. 1 մ հասակ ունեցող տղան 1 մ/վ արագությամբ մոտենում է փողոցի լապտերին: Ժամանակի սկզբնական պահին մարդու ստվերի երկարությունը 2 մ է, իսկ 2 վ անց՝ 1,5 մ:

1) Որքա՞ն էր տղայի հեռավորությունը լուսավորության սյունից ժամանակի սկզբնական պահին:
2) Որքա՞ն է լապտերի բարձրությունը:
3) Ժամանակի սկզբնական պահից հաշված որքա՞ն ժամանակից ստվերի երկարությունը կհավասարվի տղայի հասակին:

1911. 3 մ խորությամբ գետի հատակին ուղղաձիգ խրված սյունը ջրից դուրս է եկել 1 մ-ով: Արեգակի բարձրությունը հորիզոնից 45^0 է: Ջրի բեկման ցուցիչն ընդունել $\sqrt{2}$:

1) Որքա՞ն է ստվերի երկարությունը ջրի մակերևույթին:
2) Որքա՞ն է ստվերի երկարությունը գետի հատակին: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Հորիզոնի նկատմամբ ի՞նչ անկյան տակ կերևա Արեգակը գետի հատակից նրան դիտելիս:

1912. Լույսի ճառագայթը 60^0 անկյան տակ ընկնում է 15 մմ հաստությամբ թափանցիկ ապակե հարթ զուգահեռ թիթեղի վրա և դուրս գալիս նրանից: Ապակու բեկման ցուցիչը՝ $\sqrt{3}$:

1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը թիթեղ մտնելիս:
2) Թիթեղի մակերևույթին տարված նորմալի նկատմամբ ի՞նչ անկյան տակ ճառագայթը դուրս կգա թիթեղից:
3) Թիթեղից դուրս գալիս որքանո՞վ է տեղաշարժվում ճառագայթն իր սկզբնական ուղղությունից: Պատասխանը բազմապատկել 10^4- ով:

1913. Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի և նրա իրական պատկերի միջև հեռավորությունը 10 սմ է: Պատկերը չորս անգամ փոքր է առարկայի չափից:

1) Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
3) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:

www.atc.am

1914. **Երբ առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 0,36 մ է, նրա մեջ առարկայի պատկերի բարձրությունը 0,1 մ է: Ոսպնյակից առարկայի հեռավորությունը 0,12 մ-ով փոքրացնելիս պատկերի բարձրությունը մեծանում է երկու անգամ: Պատկերները երկու դեպքում էլ իրական են:**

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումն առարկան մոտեցնելուց հետո:
3) Սկզբնականի համեմատությամբ քանի՞ անգամ կմեծանա պատկերը, եթե առարկան ոսպնյակին մոտեցնենք 20 սմ-ով:

1915. **Էկրանին ստացվում է հավաքող բարակ ոսպնյակից որոշ հեռավորությամբ տեղադրված առարկայի 2 անգամ խոշորացված պատկերը: Այնուհետև առարկան մոտեցնում են ոսպնյակին 0,1 մ-ով և, շարժելով էկրանը, նորից ստանում են առարկայի հստակ պատկերը՝ այս դեպքում 4 անգամ խոշորացված:**

1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից առաջին դեպքում: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից երկրորդ դեպքում:

1916. **Լույսի կետային աղբյուրը տեղադրված է 6 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակի կիզակետում: Ոսպնյակի հետևում՝ նրանից 12 սմ հեռավորությամբ տեղադրված է հարթ էկրանը, որի վրա դիտվում է լուսավոր շրջան: Երբ աղբյուրը որոշ չափով մոտեցնում են ոսպնյակին, էկրանի վրա լուսավոր շրջանի շառավիղը մեծանում է երկու անգամ:**

1) Որքա՞ն է աղբյուրի պատկերի հեռավորությունը ոսպնյակից այն մոտեցնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:
2) Որքա՞ն է աղբյուրի հեռավորությունը ոսպնյակից այն մոտեցնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10^2- ով:
3) Որքա՞ն է էկրանի վրա օղակաձև ստվերի արտաքին և ներքին տրամագծերի հարաբերությունը մինչև աղբյուրը մոտեցնելը:

1917. **Առարկայի և ցրող բարակ ոսպնյակում նրա պատկերի հեռավորությունը 15 սմ է: Ոսպնյակի խոշորացման մոդուլը՝ 0,5:**

1) Որքա՞ն է պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

www.atc.am

2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկեք 10- ով:

1918. Առարկան տեղադրված է ցրող բարակ ոսպնյակի և նրա կիզակետի միջև՝ կիզակետից 0,3 մ հեռավորությամբ: Առարկայի կեղծ պատկերի հեռավորությունը նույն կիզակետից 0,54 մ է:

1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
3) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացման մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1919. $F = 0{,}2$ մ կիզակետային հեռավորություն ունեցող երկու հավաքող բարակ ոսպնյակներ իրարից 0,7 մ հեռավորությամբ, տեղադրված են այնպես, որ նրանց գլխավոր օպտիկական առանցքները համընկնում են (նկ. 61): Լույսի կետային աղբյուրի հեռավորությունը առաջին ոսպնյակից 0,4 մ է:



Նկ. 61

1) L_1 ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի աղբյուրի պատկերը L_2 ոսպնյակի բացակայության դեպքում: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է այդ պատկերի հեռավորությունը L_2 ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) L_2 ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի աղբյուրի պատկերը երկու ոսպնյակների առկայության դեպքում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1920. Դիֆրակտային ցանցի հեռավորությունն էկրանից 5 մ է: Այն լույսի ուղղահայաց փնջով լուսավորելիս ստացվող դիֆրակտային պատկերի առաջին կարգի մաքսիմումը կենտրոնական մաքսիմումից հեռացված է 0,5 մ-ով: Ցանցի 1 մմ-ի վրա առկա է 200 ընբագիծ: Փոքր անկյունների համար՝ $\sin\alpha = tg\alpha$:

1) Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկել 10^6-ով:

www.afc.am

2) Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^7-ով:
3) Քանի՞° աստիճան անկյան տակ կդիտվի հինգերորդ կարգի մաքսիմումը:

1921. Սպիտակ լույսն ուղղահայաց ընկնում է դիֆրակտային ցանցի վրա:

1) Որքա՞ն պետք է լինի դիֆրակտային ցանցի հաստատունի ամենափոքր արժեքը, որպեսզի նախնական ուղղության նկատմամբ 30^0 անկյան տակ համընկնեն $6{,}56\cdot10^{-7}$ մ և $4{,}1\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ երկու տարբեր կարգի մաքսիմումների գծերը: Պատասխանը բազմապատկել 10^8- ով:
2) Որքա՞ն է այդ դեպքում առաջին ալիքի դիֆրակտային մաքսիմումի կարգը:
3) Որքա՞ն է այդ դեպքում երկրորդ ալիքի դիֆրակտային մաքսիմումի կարգը:

www.atc.am

12.5. ՉՈՐՍ ՊԱՏԱԽՍԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1922. 20 սմ շառավղով լուսավորության լամպը հատակից բարձր է 5 մ: Հատակից 1 մ բարձրությամբ, լամպի տակ, պահում են 10 սմ շառավղով գնդակը: Լամպի և գնդակի կենտրոնները նույն ուղղածիգի վրա են:

1) Որքա՞ն է գնդակի ստվերի շառավիղը հատակին: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:
2) Որքա՞ն է կիսաստվերի արտաքին շառավիղը հատակին: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:
3) Հատակից ի՞նչ բարձրությամբ պետք է տեղադրել գնդակը, որպեսզի ստվերը հատակին անհետանա: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն պետք է լինի գնդակի շառավիղը, որպեսզի հատակից գնդակի կամայական բարձրության վրա նրա ստվերի չափը լինի անփոփոխ: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1923. 12 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակը շարժելով իրարից 50 սմ հեռավորությամբ անշարժ առարկայի և էկրանի միջև՝ էկրանին առաջին անգամ ստանում են առարկայի փոքրացված, իսկ երկրորդ անգամ՝ մեծացված պատկերները:

1) Որքա՞ն է ոսպնյակի հեռավորությունը առարկայից փոքրացված պատկերն ստանալիս: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի հեռավորությունը առարկայից մեծացված պատկերն ստանալիս: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումը երկրորդ դեպքում: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն է մեծացված և փոքրացված պատկերների չափերի հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

1924. Լույսի կետային աղբյուրի և էկրանի միջև հեռավորությունը 50 սմ է: Նրանց միջև տեղադրված հավաքող բարակ ոսպնյակը տալիս է աղբյուրի հստակ պատկերը ոսպնյակի երկու դիրքերում, որոնք իրարից հեռացված են 10 սմ-ով:

1) Որքա՞ն է ոսպնյակի և աղբյուրի նվազագույն հեռավորությունը, որի դեպքում ստացվում է աղբյուրի հստակ պատկերը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
2) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումն այդ դեպքում: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն է ոսպնյակի և էկրանի առավելագույն հեռավորությունը, որի դեպքում ստացվում է աղբյուրի հստակ պատկերը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
4) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2-ով:

www.ato.am

1925. Հորիզոնական դիրքում տեղադրված 3,2 մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակի մակերևույթից գնդիկին հաղորդում են ուղղածիգ դեպի վեր ուղղված 10 մ/վ սկզբնական արագություն: Օդի դիմադրությունն անտեսել:

1) Որքա՞ն է գնդիկի առավելագույն հեռավորությունը ոսպնյակից
2) Որքա՞ն ժամանակ գոյություն կունենա գնդիկի իրական պատկերը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
3) Որքա՞ն ժամանակ գոյություն կունենա գնդիկի կեղծ պատկերը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
4) Գնդիկի սկզբնական արագության ի՞նչ առավելագույն արժեքի դեպքում գնդիկի պատկերը միշտ կլինի կեղծ:

1926. 5 դպտր և 2,5 դպտր օպտիկական ուժեր ունեցող բարակ ոսպնյակները տեղադրված են իրարից 0,9 մ հեռավորությամբ: AB առարկայի հեռավորությունը առաջին ոսպնյակից 30 սմ է:

1) Առաջին ոսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի AB առարկայի A_1B_1 պատկերն այդ ոսպնյակում: Պատասխանը բազմապատկել 10-ով:
2) Որքա՞ն կլինի առաջին ոսպնյակի խոշորացումը:
3) Երկրորդ ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի A_1B_1-ի պատկերը երկրորդ ոսպնյակում: Պատասխանը բազմապատկել 10-ով:
4) Որքա՞ն կլինի ոսպնյակների համակարգի խոշորացումը:

1927. 1 մմ-ում 100 նրբագիծ պարունակող դիֆրակտային ցանցի վրա նորմալի ուղղությամբ ընկնում է 600 նմ ալիքի երկարությամբ լույսի փունջ: Ցանցի ետևում՝ նրան զուգահեռ, տեղադրված է 5 սմ կիզակետային հեռավորությամբ բարակ ոսպնյակ: Ոսպնյակի կիզակետային հարթության մեջ տեղադրված է էկրանը, որի վրա ստացվում է դիֆրակտային պատկերը: Փոքր անկյունների համար ընդունել՝ $\sin\alpha = tg\alpha$:

1) Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկել 10^5- ով:
2) Որքա՞ն է կենտրոնական մաքսիմումից առաջին կարգի մաքսիմումի հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:
3) Որքա՞ն է կենտրոնական մաքսիմումից երկրորդ կարգի մաքսիմումի հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^3- ով:
4) Որքա՞ն է առաջին և երկրորդ կարգի մաքսիմումների հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^3-ով:

www.aic.am

13. ՔՎԱՆՏԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ

13.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1928. **Ո՞ր երևույթն է հաստատում լույսի մասնիկային բնույթը:**

1) Ինտերֆերենցը:
2) Դիֆրակցիան:
3) Բևեռացումը:
4) Ֆոտոէֆեկտը:

1929. **Որքա՞ն է լույսի հաճախությունը, եթե ֆոտոնի էներգիան E է:**

1) Eh:
2) $\frac{E}{c}$:
3) $\frac{E}{c^2}$:
4) $\frac{E}{h}$:

1930. **Ո՞րն է ալիքի λ երկարությամբ ֆոտոնի էներգիայի ճիշտ բանաձևը:**

1) $h\lambda$:
2) $\frac{h}{\lambda}$:
3) $\frac{hc}{\lambda^2}$:
4) $\frac{hc}{\lambda}$:

1931. **Որքա՞ն է E էներգիայով ֆոտոնի ալիքի երկարությունը:**

1) $\frac{hc}{E}$:
2) $\frac{E}{c}$:
3) $\frac{E}{c^2}$:
4) $\frac{E}{h}$:

1932. **Ո՞րն է ֆոտոնի էներգիայի՝ ալիքի երկարությունից կախումն արտահայտող գրաֆիկը:**



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1933. **Ո՞րն է ν հաճախությամբ ֆոտոնի իմպուլսի ճիշտ բանաձևը:**

1) $h\nu$:
2) $\frac{h\nu}{c^2}$:
3) $\frac{h\nu}{c}$:
4) $\frac{hc}{\nu}$:

www.atc.am

1934. **Ֆոտոնի իմպուլսը p է: Որքա՞ն է նրա էներգիան:**

1) $E = pc$:
2) $E = \frac{p}{c}$:
3) $E = \frac{p}{c^2}$:
4) $E = pc^2$:

1935. **Որքանո՞վ է փոխվում ատոմի իմպուլսը λ ալիքի երկարությամբ մեկ ֆոտոն կլանելիս:**

1) $\frac{hc}{\lambda}$:
2) $\frac{h}{\lambda}$:
3) $\frac{c}{\lambda}$:
4) $\frac{\lambda}{c}$:

1936. **Որքա՞ն է ատոմի իմպուլսի փոփոխությունը ֆոտոն կլանելիս և առաքելիս:**

1) Երկու դեպքում էլ՝ $\frac{h}{\lambda}$:
2) Երկու դեպքում էլ՝ $\frac{2h}{\lambda}$:
3) Կլանման դեպքում՝ $\frac{h}{\lambda}$, առաքման դեպքում՝ $\frac{2h}{\lambda}$:
4) Կլանման դեպքում՝ $\frac{2h}{\lambda}$, առաքման դեպքում՝ $\frac{h}{\lambda}$:

1937. **Լազերի λ ալիքի երկարությամբ ճառագայթման հզորությունը P է: Քանի՞ ֆոտոն է առաքում լազերը միավոր ժամանակամիջոցում:**

1) $\frac{P}{\lambda}$:
2) $\frac{P\lambda}{c}$:
3) $\frac{Pc}{h\lambda}$:
4) $\frac{P\lambda}{hc}$:

1938. **Սեներանգ լույսի աղբյուրը 1 վայրկյանում առաքում է N ֆոտոն: Որքա՞ն է աղբյուրի ճառագայթման ալիքի երկարությունը, եթե օգտակար հզորությունը P է:**

1) $\frac{hc}{NP}$:
2) $\frac{hcN}{P}$:
3) $\frac{hcP}{N}$:
4) $\frac{PN}{hc}$:

www.atc.am

1939. **Որոշակի ժամանակամիջոցում m զանգվածով սև մարմինը կլանում է ν հաճախությամբ մեներանգ լույսի N ֆոտոն: Քանի՞ աստիճանով կմեծանա մարմնի ջերմաստիճանն այդ ընթացքում, եթե նրա տեսակարար ջերմունակությունը c է:**

1) $\frac{h\nu}{mc^2}$:
2) $\frac{Nh\nu}{mc}$:
3) $\frac{Nmc}{h\nu}$:
4) $\frac{h\nu}{mc}$:

1940. **Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

Ուսումնասիրելով ֆոտոէֆեկտի երևույթը՝ Ստոլետովը հայտնաբերեց, որ՝

1) ատոմը կազմված է միջուկից, որի շուրջը պտտվում են էլեկտրոնները:
2) ատոմը կլանում է միայն որոշակի հաճախության լույս:
3) ֆոտոհոսանք առաջանում է լույսի որոշակի հաճախությունից փոքր հաճախությունների դեպում:
4) հագեցման ֆոտոհոսանքի ուժն ուղիղ համեմատական է լույսի ուժգնությանը:

1941. **Երկու միատեսակ թիթեղներից առաջինը լիցքավորված է դրական լիցքով, իսկ երկրորդը՝ բացասական: Անդրմանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ թիթեղներից ո՞րն ավելի շուտ կլիցքաթափվի:**

1) Առաջինը:
2) Երկրորդը:
3) Երկուսն էլ՝ միաժամանակ:
4) Երկուսն էլ չեն լիցքաթափվի:

1942. **Ո՞րն է Այնշտայնի բանաձևը ֆոտոէֆեկտի համար:**

1) $A=h\nu+\frac{mv^2}{2}$:
2) $\frac{mv^2}{2}=A+h\nu$:
3) $A=h\nu-\frac{mv^2}{2}$:
4) $h\nu=\frac{mv^2}{2}-A$:

1943. **Ո՞ր արտահայտությամբ կարելի է որոշել ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունը (U-ն կասեցնող լարումն է):**

1) $\sqrt{\frac{2eU}{m}}$:
2) $\sqrt{2eUm}$:
3) $\sqrt{\frac{m}{2eU}}$:
4) $\sqrt{\frac{eUm}{2}}$:

www.atc.am

1944. Ինչի՞ց է կախված լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնի կինետիկ էներգիան:

1) Միայն լույսի ուժգնությունից:
2) Միայն լույսի հաճախությունից:
3) Միայն մետաղի ելքի աշխատանքից:
4) Մետաղի ելքի աշխատանքից և լույսի հաճախությունից:

1945. Ո՞ր մեծությունից *կախված չէ* ֆոտոէլեկտրոնի արագությունը:

1) Լույսի հաճախությունից:
2) Լույսի ուժգնությունից:
3) Լույսի ալիքի երկարությունից:
4) Մետաղի ելքի աշխատանքից:

1946. Ո՞ր գրաֆիկն է ճիշտ արտահայտում լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիայի կախումը ընկնող լույսի ուժգնությունից:



ա բ գ դ

1) ա: 3) գ:
2) բ: 4) դ:

1947. Մետաղե թիթեղը հերթով լուսավորում են կարմիր, կանաչ և մանուշակագույն լույսով: Բոլոր դեպքերում դիտվում է ֆոտոէֆեկտ: Ո՞ր դեպքում մետաղից պոկված էլեկտրոնների միջին կինետիկ էներգիան կլինի ավելի մեծ:

1) Կարմիր լույսով լուսավորելիս:
2) Կանաչ լույսով լուսավորելիս:
3) Մանուշակագույն լույսով լուսավորելիս:
4) Բոլոր դեպքերում նույնը կլինի:

1948. Ինչի՞ց է կախված լույսի ազդեցությամբ մետաղից պոկվող էլեկտրոնների ելքի աշխատանքը:

1) Ընկնող լույսի հաճախությունից:
2) Ընկնող լույսի ուժգնությունից:
3) Պոկված էլեկտրոնների կինետիկ էներգիայից:

www.atc.am

4) Մետաղի տեսակից:

1949. A ելքի աշխատանքով մետաղի մակերևույթը լուսավորում են ν հաճախությամբ մեներանգ լույսով: Ի՞նչ է որոշում $h\nu - A$ արտահայտությունը:

1) Ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը:
2) Ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան:
3) Ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունը:
4) Ֆոտոէֆեկտի կասեցնող լարումը:

1950. Ո՞րն է ճախադասության ճիշտ շարունակությունը:

Ֆոտոէֆեկտի ժամանակ միավոր ժամանակում մետաղից պոկված էլեկտրոնների թիվը կախված չէ՝

ա. ընկնող լույսի հաճախությունից:

բ. ընկնող լույսի ուժգնությունից:

գ. ելքի աշխատանքից:

1) ա-ն և գ-ն:
2) ա-ն, բ-ն և գ-ն:
3) բ-ն և գ-ն:
4) ա-ն և բ-ն:

1951. Ո՞րն է ճախադասության ճիշտ շարունակությունը:

Ֆոտոէֆեկտը կարող է ընդհատվել, եթե՝

1) լույսի աղբյուրի և մետաղի հեռավորությունը մեծացնենք:
2) լույսի աղբյուրի և մետաղի հեռավորությունը փոքրացնենք:
3) ընկնող լույսի հաճախությունը մեծացնենք:
4) ընկնող լույսի հաճախությունը փոքրացնենք:

1952. Ո՞րն է ճախադասության ճիշտ շարունակությունը:

Ընկնող լույսի ուժգնությունը փոքրացնելիս հագեցման հոսանքի ուժը...

1) մեծանում է:
2) փոքրանում է:
3) չի փոխվում:
4) կախված ելքի աշխատանքից՝ կարող է մեծանալ կամ փոքրանալ:

1953. Նկարում պատկերված են I ֆոտոհոսանքի ուժի U լարումից կախումն արտահայտող գրաֆիկներ՝ լույսի ալիքի տարբեր երկարությունների համար: Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում ալիքի ամենամեծ երկարությանը:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

www.atc.am

1954. Ինչի՞ց է կախված ֆոտոէֆեկտի կասեցնող լարման արժեքը:

1) Միայն ելքի աշխատանքից:
2) Միայն ընկնող լույսի հաճախությունից:
3) Ելքի աշխատանքից և ընկնող լույսի հաճախությունից:
4) Ելքի աշխատանքից և էլեկտրոնների միջև հեռավորությունից:

1955. Ֆոտոկատոդի և անոդի միջև կիրառվում է այնպիսի կասեցնող լարում, որ ամենամեծ արագություն ունեցող ֆոտոէլեկտրոնները հասնում են կատոդի և անոդի միջնակետը: Այդ էլեկտրոնները կհասնե՞ն անոդին, եթե նրանց միջև եղած հեռավորությունը փոքրացնենք երկու անգամ՝ կասեցնող լարումը պահելով նույնը:

1) Կհասնեն:
2) Կհասնեն այդ նոր հեռավորության միջնակետը:
3) Կհասնեն այդ նոր հեռավորության քառորդ մասը:
4) Չի կարելի միարժեք պատասխանել:

1956. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում ֆոտոէֆեկտի ժամանակ մետաղից դուրս թռած էլեկտրոնի առավելագույն E կինետիկ էներգիայի կախումն ընկնող լույսի ν հաճախությունից:



1) ա:
2) բ:
3) գ:
4) դ:

1957. Ինչպե՞ս կփոխվի մետաղի ելքի աշխատանքը, եթե ընկնող լույսի հաճախությունը մեծացնենք 2 անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Չի փոխվի:
4) Կմեծանա 4 անգամ:

1958. Ինչպե՞ս է փոխվում ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան ընկնող լույսի հաճախությունը 2 անգամ մեծացնելիս:

1) Չի փոխվում:
2) Մեծանում է 2 անգամ:
3) Մեծանում է ավելի քան 2 անգամ:
4) Փոքրանում է 2 անգամ:

1959. Ինչպե՞ս է փոխվում ֆոտոէլեկտրոնների արագությունը լույսի ուժգնությունը մեծացնելիս:

1) Չի փոխվում
2) Մեծանում է:
3) Կմեծանա կամ կփոքրանա:
4) Փոքրանում է:

www.atc.am

1960. Ինչպե՞ս կփոխվի ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը, եթե ընկնող լույսի հաճախությունը մեծացվի երկու անգամ:

1) Կմեծանա 2 անգամ:
2) Կփոքրանա 2 անգամ:
3) Չի փոխվի:
4) Կփոքրանա 4 անգամ:

1961. Լույսի ν հաճախության դեպքում ֆոտոէլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան 2 անգամ մեծ է ելքի աշխատանքից: Քանի՞ անգամ կմեծանա ֆոտոէլեկտրոնի կինետիկ էներգիան, եթե լույսի հաճախությունը մեծացնենք 3 անգամ:

1) 1,5 անգամ:
2) 2 անգամ:
3) 3 անգամ:
4) 4 անգամ:

1962. Ո՞ւմ փորձերի արդյունքների հիման վրա առաջարկվեց ատոմի մոլորակային մոդելը:

1) Բորի:
2) Ռեզերֆորդի:
3) Թոմսոնի:
4) Մայքելսոնի:

1963. Ռեզերֆորդի փորձերում ի՞նչ ուժի ազդեցությամբ են շեղվում α-մասնիկները:

1) Գրավիտացիոն:
2) Միջուկային:
3) Էլեկտրամագնիսական:
4) Թույլ փոխազդեցության:

1964. Ինչո՞ւ Ռեզերֆորդի փորձերում α-մասնիկների մեծ մասն ազատ անցնում է թիթեղի միջով՝ գործնականում չշեղվելով սկզբնական ուղղությունից:

1) Որովհետև ատոմի միջուկն ունի դրական լիցք:
2) Որովհետև էլեկտրոններն ունեն բացասական լիցք:
3) Որովհետև միջուկի չափերը շատ անգամ փոքր են ատոմի չափերից:
4) Որովհետև α-մասնիկն ունի մեծ զանգված:

1965. Նկարում պատկերված են չորս տարբեր չեզոք ատոմների սխեմաներ: Դրանցից ո՞րն է առավել համապատասխանում $^{12}_{6}C$ ատոմին:



ա բ գ դ

1) ա-ն:
2) բ-ն:
3) գ-ն:
4) դ-ն:

www.ato.am

1966. Ի՞նչ կարգի մեծություն է ատոմի շառավիղը:

1) 10^{-8} մ:
2) 10^{-10} մ:
3) 10^{-13} մ:
4) 10^{-15} մ:

1967. Ո՞ր նախադասությունն է ճիշտ արտահայտում Բորի առաջին կանխադրույթը:

1) Ատոմը կազմված է միջուկից և նրա շուրջը պտտվող էլեկտրոններից:
2) Էլեկտրոնը միջուկի շուրջ կարող է պտտվել միայն որոշակի ստացիոնար ուղեծրերով, որոնցով շարժվելիս այն չի ճառագայթում:
3) Էլեկտրոնն ատոմում մի ստացիոնար վիճակից մյուսին անցնելիս ճառագայթում կամ կլանում է ֆոտոն:
4) Ատոմում դրական լիցքը կենտրոնացված է նրա միջուկում:

1968. Ո՞ր պնդումն է ճիշտ արտահայտում ատոմի՝ լույսի կլանման և ճառագայթման ունակությունը:

1) Ատոմը կլանում և ճառագայթում է կամայական հաճախության ֆոտոններ:
2) Ատոմը կլանում է կամայական հաճախության ֆոտոններ և ճառագայթում միայն որոշակի հաճախության ֆոտոններ:
3) Ատոմը կլանում է միայն որոշակի հաճախության ֆոտոններ և ճառագայթում կամայական հաճախության ֆոտոններ:
4) Ատոմը կլանում և ճառագայթում է միայն որոշակի հաճախության ֆոտոններ:

1969. Ինչպե՞ս է փոխվում ատոմի էներգիան, երբ էլեկտրոնը միջուկին մոտ ուղեծրից տեղափոխվում է ավելի հեռու ուղեծիր:

1) Մեծանում է:
2) Փոքրանում է:
3) Չի փոխվում:
4) Կմեծանա կամ կփոքրանա:

1970. Ի՞նչ ν հաճախության ֆոտոն է ճառագայթում ատոմը, երբ այն E_2 էներգիայով գրգռված վիճակից անցնում է E_1 էներգիայով հիմնական վիճակի:

1) $\frac{E_2}{h}$:
2) $\frac{E_1}{h}$:
3) $\frac{E_2+E_1}{h}$:
4) $\frac{E_2-E_1}{h}$:

www.atc.am

1971. Տարբեր հաճախությամբ քանի՞ ֆոտոն կառաքի 3-րդ ստացիոնար էներգիական մակարդակում գտնվող ատոմը, եթե բոլոր անցումները հնարավոր են:



1) 1: 3) 3:
2) 2: 4) 4:

1972. Նկարում պատկերված է ատոմի էներգիական մակարդակների դիագրամը: Ո՞ր անցումն է համապատասխանում ամենամեծ ալիքի երկարությամբ ֆոտոնի կլանմանը:



1) $E_3 \to E_4$: 3) $E_3 \to E_1$:
2) $E_2 \to E_3$: 4) $E_1 \to E_4$:

1973. Նկարում պատկերված է ատոմի էներգիական մակարդակների դիագրամը: Ո՞ր անցման դեպքում է ատոմի ճառագայթած ալիքի հաճախությունն առավելագույնը:



1) $E_2 \to E_3$: 3) $E_1 \to E_3$:
2) $E_4 \to E_3$: 4) $E_4 \to E_1$:

1974. Ատոմը E_3 էներգիական մակարդակից E_1 մակարդակ անցնելիս ճառագայթում է λ_1 ալիքի երկարությամբ ֆոտոն, իսկ E_2-ից E_1 մակարդակ անցնելիս՝ λ_2 ալիքի երկարությամբ ֆոտոն: Ի՞նչ ալիքի երկարությամբ ֆոտոն կճառագայթի ատոմը E_3 մակարդակից E_2 մակարդակ անցնելիս:

1) $\lambda_1 + \lambda_2$: 3) $\dfrac{\lambda_1\lambda_2}{\lambda_2 - \lambda_1}$:
2) $\lambda_1 - \lambda_2$: 4) $\dfrac{\lambda_1\lambda_2}{\lambda_2 + \lambda_1}$:

1975. Նկարում պատկերված են ատոմի էներգիական մակարդակները և նրանց միջև անցումները: Անցումներին համապատասխանող հաճախությունների կամ ալիքի երկարությունների միջև ո՞ր առնչությունն է ճիշտ:



www.atc.am

1) $\nu_4 = \nu_2 + \nu_1 + \nu_5$:
2) $\nu_3 = \nu_1 + \nu_2$:
3) $\lambda_4 = \lambda_2 + \lambda_1 + \lambda_5$:
4) $\lambda_5 = \lambda_6 - \lambda_1$:

1976. Ի՞նչ մասնիկներից է կազմված ատոմի միջուկը:

1) Էլեկտրոններից և նեյտրոններից:
2) Էլեկտրոններից և պրոտոններից:
3) Պրոտոններից և նեյտրոններից:
4) Էլեկտրոններից, պրոտոններից և նեյտրոններից:

1977. Ի՞նչ կարգի մեծություններ են ատոմների միջուկների չափերը:

1) 10^{-8}-10^{-9} մ:
2) 10^{-10}-10^{-11} մ:
3) 10^{-14}-10^{-15} մ:
4) 10^{-20} մ:

1978. Որքա՞ն է չեզոք ատոմում էլեկտրոնների թիվը, եթե ատոմի միջուկը պարունակում է Z պրոտոն և N նեյտրոն:

1) $Z + N$:
2) $Z - N$:
3) 0:
4) Z:

1979. Որքա՞ն է էլեկտրոնների թիվը ուրանի $^{238}_{92}U$ միջուկում:

1) 92:
2) 238:
3) 0:
4) 146:

1980. Քանի՞ նեյտրոն է պարունակում նեոնի $^{17}_{10}Ne$ միջուկը:

1) 27:
2) 17:
3) 10:
4) 7:

1981. Ո՞ր մեծությունն են անվանում զանգվածային թիվ:

1) Միջուկում պրոտոնների թիվը:
2) Միջուկի զանգվածը:
3) Ատոմի զանգվածը:
4) Միջուկում պրոտոնների և նեյտրոնների թիվը:

1982. Ինչո՞վ են տարբերվում իրարից նույն տարրի իզոտոպները:

1) Էլեկտրոնների թվով:
2) Նեյտրոնների թվով:
3) Պրոտոնների թվով:
4) Լիցքով:

1983. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Նույն քիմիական տարրի իզոտոպների՝

1) քիմիական հատկություններն ու միջուկների լիցքերը նույնն են, զանգվածները՝ տարբեր:
2) քիմիական հատկություններն ու միջուկների զանգվածները նույնն

www.gtc.am

են, միջուկների լիցքերը՝ տարբեր:

3) միջուկների լիցքերը նույնն են, քիմիական հատկություններն ու զանգվածները՝ տարբեր:

4) միջուկների զանգվածները նույնն են, քիմիական հատկություններն ու միջուկների լիցքերը՝ տարբեր:

1984. Ո՞ր պնդումն է *սխալ*:

1) Միջուկային ուժերը զգալիորեն դրսևորվում են միայն միջուկի չափերի կարգի հեռավորություններում:

2) Միջուկային ուժերը էականորեն գերազանցում են կուլոնյան փոխազդեցության ուժերին:

3) Միջուկային ուժերը գործում են նուկլոնների միջև:

4) Միջուկային ուժերը լինում են միայն վանողական բնույթի:

1985. Ո՞ր մասնիկների փոխանակմամբ միջոցով է իրականանում ուժեղ փոխազդեցությունը երկու նուկլոնների միջև:

1) Էլեկտրոնների: 3) Պոզիտրոնների:

2) γ –քվանտների: 4) π -մեզոնների:

1986. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Միջուկի կապի էներգիան այն էներգիան է, որը՝

1) անջատվում է միջուկի տրոհման ժամանակ:

2) անհրաժեշտ է միջուկը երկու կեսի տրոհելու համար:

3) անջատվում է երկու միջուկների սինթեզի ժամանակ:

4) անհրաժեշտ է միջուկն առանձին պրոտոնների և նեյտրոնների տրոհելու համար:

1987. Որքա՞ն է Z պրոտոնից և N նեյտրոնից կազմված միջուկի ΔE կապի էներգիան, եթե միջուկի զանգվածը $M_մ$ է, պրոտոնինը՝ m_p, նեյտրոնինը՝ m_n:

1) $\Delta E = M_{մ}c^2$: 3) $\Delta E = 0$:

2) $\Delta E = (Zm_p + Nm_n)c^2$: 4) $\Delta E = (Zm_p + Nm_n - M_{մ})c^2$:

1988. Ստորև նշված միջուկային ռեակցիայում անջատվո՞ւմ, թե՞ կլանվում է էներգիա (մասնիկների նշանների ներքևում բերված են դրանց զանգվածները՝ արտահայտված ՄԷՎ-երով):

$$\underset{(239{,}05)}{{}^{239}_{94}Pu} \rightarrow \underset{(105{,}91)}{{}^{106}_{43}Tc} + \underset{(132{,}92)}{{}^{133}_{51}Sb}$$

1) Անջատվում է:

www.atc.am

2) Կլանվում է:
3) Ո՛չ անջատվում է, ո՛չ կլանվում:
4) Սկզբում կլանվում է, հետո՝ անջատվում:

1989. Ի՞նչ մասնիկ առաքեց ատոմի միջուկը, եթե դրա հետևանքով զանգվածային թիվը պակասեց մեկով, իսկ կարգաթիվը չփոխվեց:

1) Պրոտոն: 3) Էլեկտրոն:
2) Նեյտրոն: 4) Ֆոտոն:

1990. $^{9}_{4}Be$ **- ի միջուկը** α **-մասնիկներով ճառագայթահարելիս առաջանում է** $^{12}_{6}C$ **միջուկ: Ի՞նչ մասնիկ է առաջանում այդ դեպքում:**

1) Նեյտրոն: 3) Էլեկտրոն:
2) Պրոտոն: 4) Նեյտրինո:

1991. Ո՞րն է $^{27}_{13}\mathrm{Al}+^{4}_{2}He \rightarrow ^{30}_{15}P+X$ **միջուկային ռեակցիայի երկրորդ X անդամը:**

1) α -մասնիկ: 3) Էլեկտրոն:
2) Նեյտրոն: 4) γ -քվանտ:

1992. Ի՞նչ միջուկ է առաջանում $^{1}_{1}p+^{11}_{5}B \rightarrow 2\alpha + ?$ **միջուկային ռեակցիայի հետևանքով:**

1) $^{1}_{1}p$: 3) $^{3}_{1}H$:
2) $^{6}_{3}Li$: 4) $^{4}_{2}He$:

1993. Ի՞նչ մասնիկ է առաջանում $^{9}_{4}Be+^{2}_{1}H \rightarrow ^{10}_{5}B+?$ **միջուկային ռեակցիայի հետևանքով:**

1) Պրոտոն: 3) α -մասնիկ:
2) Նեյտրոն: 4) γ քվանտ:

1994. Բերիլիումի $^{9}_{4}Be$ **միջուկը, կլանելով** $^{2}_{1}H$ **դեյտերիում, փոխակերպվեց բորի** $^{10}_{5}B$ **միջուկի: Ի՞նչ մասնիկ անջատվեց այդ դեպքում:**

1) Պրոտոն: 3) α -մասնիկ:
2) Էլեկտրոն: 4) Նեյտրոն:

1995. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Միջուկային ռեակցիան սկզբունքորեն հնարավոր չէ, եթե չի պահպանվում՝

1) ռեակցիայի մեջ մտնող մասնիկների ընդհանուր լիցքը:

www.atc.am

2) պրոտոնների ընդհանուր թիվը:
3) ռեակցիայի մեջ մտնող բոլոր մասնիկների արագությունների գումարը:
4) նեյտրոնների ընդհանուր թիվը:

1996. Ճառագայթաակտիվ տրոհման ռեակցիայի արդյունքում $^{40}_{19}K$ միջուկը $^{40}_{20}Ca$ միջուկի փոխակերպվելիս զրոյից տարբեր զանգվածով ի՞նչ մասնիկ է առաջանում:

1) Նեյտրոն:
2) Պրոտոն:
3) Պոզիտրոն:
4) Էլեկտրոն:

1997. Ո՞ր միջուկային ռեակցիան հնարավոր չէ, քանի որ խախտվում է լիցքի պահպանման օրենքը:

1) $^{235}_{92}U + ^{1}_{0}n \rightarrow ^{232}_{90}Th + ^{4}_{2}He$:
2) $^{197}_{79}Au + ^{1}_{0}n \rightarrow ^{197}_{80}Hg + ^{1}_{1}p$:
3) $^{48}_{22}Ti + ^{1}_{0}n \rightarrow ^{47}_{22}Ti + 2\,^{1}_{0}n$:
4) $^{236}_{92}U \rightarrow ^{97}_{40}Zr + ^{137}_{52}Te + 2\,^{1}_{0}n$:

1998. Ո՞ր երևույթն է կոչվում ճառագայթաակտիվություն:

1) Ատոմի՝ ռադիոալիքների առաքումը:
2) Ատոմի արժեքական էլեկտրոնի ինքնակամ կորուստը:
3) Ատոմի՝ տեսանելի տիրույթում էլեկտրամագնիսական ալիքների առաքումը:
4) Ատոմի միջուկի ինքնակամ փոխակերպումը:

1999. α, β և γ ճառագայթներից որո՞նք են ավելի շատ շեղվում մագնիսական դաշտում:

1) α-ճառագայթները:
2) β-ճառագայթները:
3) γ-ճառագայթները:
4) Բոլորն էլ շեղվում են նույն չափով:

2000. Ճառագայթաակտիվ նյութից առաքված α, β և γ ճառագայթների փունջը մտնում է մագնիսական դաշտ, որի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ի՞նչ ուղղությամբ կշեղվեն այդ ճառագայթումները:



www.atc.am

1) α-ն՝ աջ, β-ն՝ չի շեղվի, γ-ն՝ ձախ:

2) α-ն՝ ձախ, β-ն՝ չի շեղվի, γ-ն՝ աջ:

3) α-ն՝ ձախ, β-ն՝ աջ, γ-ն՝ չի շեղվի:

4) α-ն՝ աջ, β-ն՝ ձախ, γ-ն՝ չի շեղվի:

2001. Որքա՞ն է այն միջուկի կարգաթիվը, որը ստացվում է Z կարգաթիվ ունեցող միջուկի α-տրոհման հետևանքով:

1) Z – 1: 3) Z – 4:

2) Z – 2: 4) Z + 1:

2002. Ի՞նչ միջուկ է առաջանում ${}^{A}_{Z}X$ միջուկի α-տրոհման արդյունքում:

1) ${}^{A}_{Z+1}Y$: 3) ${}^{A-4}_{Z-2}Y$:

2) ${}^{A}_{Z-1}Y$: 4) ${}^{A}_{Z}Y$:

2003. Արեգակի ընդերքում տեղի են ունենում մասնավորապես ներքոնշյալ միջուկային ռեակցիաները: Ո՞րն է α-տրոհում:

1) ${}^{14}_{5}B \to {}^{14}_{6}C + {}^{0}_{-1}e$: 3) ${}^{7}_{4}Be + {}^{0}_{-1}e \to {}^{7}_{3}Li$:

2) ${}^{7}_{4}Be + {}^{1}_{1}p \to {}^{8}_{5}B$: 4) ${}^{15}_{7}N + {}^{1}_{1}p \to {}^{12}_{6}C + {}^{4}_{2}He$:

2004. Ո՞ր միջուկի α-տրոհման հետևանքով է առաջանում ${}^{216}_{84}Po$ միջուկը:

1) ${}^{214}_{80}Hg$: 3) ${}^{220}_{86}Rn$:

2) ${}^{212}_{84}Pb$: 4) ${}^{218}_{86}Rn$:

2005. Ի՞նչ փոխակերպում է տեղի ունենում միջուկում β-տրոհման հետևանքով:

1) Նեյտրոնը տրոհվում է պրոտոնի, էլեկտրոնի և հականեյտրինոյի:

2) Նեյտրոնը տրոհվում է էլեկտրոնի, պոզիտրոնի և հականեյտրինոյի:

3) Պրոտոնը տրոհվում է նեյտրոնի, էլեկտրոնի և նեյտրինոյի:

4) Պրոտոնը տրոհվում է պոզիտրոնի և նեյտրինոյի:

2006. Ինչպե՞ս է փոխվում նեյտրոնների թիվն ատոմի միջուկում, երբ այն արձակում է երեք β մասնիկ:

1) Մեծանում է երեքով: 3) Մեծանում է վեցով:

2) Փոքրանում է երեքով: 4) Փոքրանում է վեցով:

www.atc.am

2007. Լիթիումի $^{8}_{3}Li$ իզոտոպի միջուկի տրոհման հետևանքով առաջացան էլեկտրոն և երկու միատեսակ նոր միջուկներ: Ի՞նչ նյութի միջուկներ են դրանք:

1) Ջրածնի:
2) Բորի:
3) Հելիումի:
4) Դեյտերիումի:

2008. Ի՞նչ միջուկի է փոխակերպվում $^{238}_{92}U$ իզոտոպի միջուկը մեկ α և մեկ β -տրոհման հետևանքով:

1) $^{234}_{91}Pa$:
2) $^{232}_{90}Th$:
3) $^{234}_{92}U$:
4) $^{229}_{88}Ra$:

2009. Ճառագայթաակտիվ իզոտոպի կարգաթիվը Z է: Որքա՞ն կլինի 8 β և 4 α -տրոհման հետևանքով առաջացած միջուկի կարգաթիվը:

1) $Z-4$:
2) Z:
3) $Z-5$:
4) $Z+1$:

2010. Ի՞նչ է γ -ճառագայթումը:

1) Էլեկտրոնների հոսք:
2) Հելիումի միջուկների հոսք:
3) Պրոտոնների հոսք:
4) Միջուկի առաքած էլեկտրամագնիսական ճառագայթման քվանտների հոսք:

2011. Ատոմի միջուկի ինչպիսի՞ ճառագայթման դեպքում չեն փոխվում նրա կարգաթիվը և զանգվածի թիվը:

1) α:
2) β:
3) γ:
4) Այդպիսի ճառագայթում գոյություն չունի:

2012. Պոլոնիումի ($^{218}_{84}Po$) ատոմի միջուկը ի՞նչ ճառագայթաակտիվ տրոհումների հետևանքով է փոխակերպվում բիսմուտի ($^{214}_{83}Bi$) միջուկի:

1) β -տրոհման:
2) α -տրոհման:
3) β - և γ -տրոհումների:
4) α - և β -տրոհումների:

2013. Տվյալ ճառագայթաակտիվ տարրի կիսատրոհման պարբերությունը 29 տարի է: Ի՞նչ է դա նշանակում:

1) 29 տարում բոլոր միջուկները կտրոհվեն:

www.atc.am

2) 29 տարի անց չտրոհված միջուկների թիվը կկազմի սկզբնական միջուկների թվի կեսը:
3) 29 տարում կտրոհվի սկզբնական միջուկների թվի 1/29 մասը:
4) 29 տարում կտրոհվի մեկ միջուկ:

2014. Ճառագայթաակտիվ իզոտոպի կիսատրոհման պարբերությունը 2 րոպե է: Այդ իզոտոպի 1000 միջուկից քանի՞սը կտրոհվի 2 րոպեի ընթացքում:

1) Ոչ մեկը: 3) 250-ը:
2) Բոլորը: 4) 500-ը:

2015. Առաջին րոպեում 4000 միատեսակ ռադիոակտիվ միջուկներից տրոհվում է 2000 միջուկ: Քանի՞ միջուկ կտրոհվի երկրորդ րոպեում:

1) 2000: 3) 1200:
2) 1500: 4) 1000:

2016. Ճառագայթաակտիվ իզոտոպի միջուկների ո՞ր տոկոսը չի տրոհվի կիսատրոհման պարբերության կրկնապատիկին հավասար ժամանակահատվածում:

1) 25 %: 3) 75 %:
2) 50 %: 4) 0 %:

2017. Նկարում պատկերված է ճառագայթաակտիվ նյութի չտրոհված միջուկների թվի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տրոհման կիսապարբերությունն այդ նյութի համար:



1) 25 ժամ: 3) 100 ժամ:
2) 50 ժամ: 4) 200 ժամ:

2018. Ո՞րն է ճախադասության ճիշտ շարունակությունը:
Միջուկային սինթեզի հետևանքով տեղի է ունենում՝

1) ատոմի՝ էլեկտրամագնիսական ճառագայթման կլանում:
2) քիմիական ռեակցիա:
3) մեկ կամ մի քանի միջուկների միավորում:
4) միջուկի՝ էլեկտրոնի կլանում:

2019. Ո՞րն է ջերմամիջուկային սինթեզի ռեակցիա:

1) $^{235}_{92}U \rightarrow ^{231}_{90}Th + ^{4}_{2}He$: 3) $e^{+} + e^{-} \rightarrow \gamma + \gamma + \gamma$:

www.atc.am

2) $p \to n + e^+ + \nu$: 4) ${}^3_1H + {}^2_1H \to {}^4_2He + n$:

2020. Ո՞ր ռեակցիան է արտահայտում ծանր միջուկի տրոհումը:

1) ${}^{235}_{92}U \to {}^{231}_{90}Th + {}^4_2He$: 3) $e^+ + e^- \to \gamma + \gamma + \gamma$:

2) $p \to n + e^+ + \nu$: 4) ${}^3_1H + {}^2_1H \to {}^4_2He + n$:

2021. Ի՞նչ իզոտոպ է առաջանում ${}^8_3Li$ իզոտոպի մեկ β և մեկ α-տրոհումների հետևանքով:

1) ${}^1_1H$: 3) ${}^3_2He$:

2) ${}^2_1H$: 4) ${}^4_2He$:

2022. Արեգակի ընդերքում ջերմաստիճանը հասնում է տասնյակ միլիոնավոր կելվինների: Ինչո՞վ է դա բացատրվում:

1) Իր առանցքի շուրջ Արեգակի արագ պտույտով:
2) Ծանր միջուկների տրոհմամբ:
3) Թեթև միջուկների ջերմամիջուկային սինթեզով:
4) Ջրածնի այրմամբ:

2023. Ո՞ր նյութն է միջուկային ռեակտորում օգտագործվում որպես միջուկային վառելիք:

1) Ուրան: 3) Կադմիում:

2) Գրաֆիտ: 4) Ծանր ջուր:

2024. Ի՞նչ մասնիկների շնորհիվ է ապահովվում ուրանի միջուկների ճեղքման շղթայական ռեակցիան:

1) Պրոտոնների: 3) Էլեկտրոնների:

2) Նեյտրոնների: 4) α-մասնիկների:

2025. Ի՞նչ ռեակցիա է տեղի ունենում միջուկային ռեակտորում:

1) Միջուկների տրոհման կառավարվող շղթայական ռեակցիա:
2) Միջուկների սինթեզման կառավարվող ռեակցիա:
3) Միջուկների տրոհման չկառավարվող շղթայական ռեակցիա:
4) Միջուկների սինթեզման չկառավարվող ռեակցիա:

2026. Կփոխակերպվի՞ արդյոք տարրական մասնիկը այլ տարրական մասնիկների:

1) Այո, եթե չեն խախտվում պահպանման օրենքները:
2) Այո, կփոխակերպվի կամայական մասնիկի:
3) Ոչ, քանի որ այն տարրական է:
4) Ոչ, քանի որ կխախտվեն պահպանման օրենքները:

www.atc.am

2027. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Լեպտոններ են կոչվում այն մասնիկները՝

1) որոնց զանգվածը զրո է:
2) որոնք չեն մասնակցում ուժեղ փոխազդեցություններին:
3) որոնք ունեն ամբողջաթիվ սպին:
4) որոնց տրոհման հետևանքով առաջանում են նուկլոններ:

2028. Որքա՞ն է $m_{e^-} = m_{e^+} = m$ զանգվածներով էլեկտրոնի և պոզիտրոնի $e^- + e^+ \to 2\gamma$ անիհիլացիայի շնորհիվ առաջացած երկու ֆոտոնների ընդհանուր էներգիայի նվազագույն արժեքը:

1) mc^2:
2) $2mc^2$:
3) $\frac{mc^2}{2}$:
4) Այդպիսի պրոցես հնարավոր չէ:

2029. Ի՞նչ մասնիկներ են առաջանում էլեկտրոնի և պոզիտրոնի անիհիլացիայի ժամանակ:

1) Էլեկտրոն և γ-քվանտ:
2) 2 էլեկտրոն:
3) 2 պոզիտրոն:
4) 2 γ-քվանտ:

2030. Ի՞նչ մասնիկներ են առաջանում ազատ նեյտրոնի տրոհման հետևանքով:

1) Էլեկտրոն, պրոտոն, հականեյտրինո:
2) Էլեկտրոն, պրոտոն, նեյտրինո:
3) Պոզիտրոն, պրոտոն, նեյտրոն:
4) Էլեկտրոն, պոզիտրոն, նեյտրինո:

2031. Որքա՞ն է նեյտրինոյի լիցքը:

1) $-1{,}6 \cdot 10^{-19}$ Կլ:
2) $1{,}6 \cdot 10^{-19}$ Կլ:
3) 1 Կլ:
4) 0:

2032. Փոխազդեցության ժամանակ նուկլոններն ի՞նչ մասնիկներ են փոխանակում միջուկում:

1) Էլեկտրոններ:
2) π-մեզոններ:
3) Մյուոններ:
4) Նեյտրինոներ:

2033. Ազատ պրոտոնի և նեյտրոնի ո՞ր փոխակերպումն է հնարավոր:

ա. $n \to p + e^- + \tilde{\nu}$,

www.arc.am

բ. $p \to n + e^{+} + \nu$:

1) Միայն ա-ն:
2) Միայն բ-ն:
3) Երկուսն էլ:
4) Ոչ մեկը:

2034. Մասնիկների ո՞ր խումբն է կազմված քվարկներից:

1) Էլեկտրոն, պրոտոն, նեյտրոն, π -մեզոն, նեյտրինո:
2) Էլեկտրոն, պրոտոն, նեյտրոն, π -մեզոն:
3) Էլեկտրոն, պրոտոն, նեյտրոն:
4) Պրոտոն, նեյտրոն, π -մեզոն:

2035. Ի՞նչ քվարկներից է կազմված պրոտոնը:

1) Երկու «u» քվարկից և մեկ «d» քվարկից:
2) Մեկ «u» քվարկից և երկու «d» քվարկից:
3) Մեկ «u» քվարկից և մեկ «d» քվարկից:
4) Երկու «u» քվարկից և երկու «d» քվարկից:

www.atc.am

13.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2036. Որքա՞ն է $3{,}3\cdot10^{-19}$ Ջ էներգիայով ֆոտոնի հաճախությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-19}-ով:

2037. Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը, եթե նրա քվանտի էներգիան $7{,}92\cdot10^{-19}$ Ջ է: Պատասխանը բազմապատկել 10^{8} -ով:

2038. Մեներանգ ճառագայթման ֆոտոնի էներգիան $4{,}4\cdot10^{-19}$ Ջ է: Որքա՞ն է այդ ճառագայթման ալիքի երկարությունը 1,5 բեկման ցուցիչ ունեցող թափանցիկ միջավայրում: Պատասխանը բազմապատկել 10^{7}-ով:

2039. Առաջին ֆոտոնի էներգիան $3{,}3\cdot10^{-20}$ Ջ-ով մեծ է երկրորդ ֆոտոնի էներգիայից: Որքա՞ն է առաջին ֆոտոնի հաճախությունը, եթե երկրորդ ֆոտոնի հաճախությունը $3{,}2\cdot10^{14}$ Հց է: Պատասխանը բազմապատկել 10^{-13} -ով:

2040. Որքա՞ն է $6\cdot10^{-19}$ Ջ էներգիայով ֆոտոնի իմպուլսը: Պատասխանը բազմապատկել 10^{27} -ով:

2041. $1{,}6\cdot10^{-19}$ Կլ լիցք ունեցող մասնիկն արագացնող էլեկտրական դաշտում անցնում է 11,25 Վ պոտենցիալների տարբերություն: Որքա՞ն է այն ֆոտոնի ալիքի երկարությունը, որի էներգիան հավասար է մասնիկի ձեռք բերած կինետիկ էներգիային: Պատասխանը բազմապատկել 10^{-19} -ով:

2042. Որքա՞ն է $6{,}6\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ ֆոտոնի՝ հայելուն հաղորդած իմպուլսը, եթե այն ընկնում և անդրադառնում է հայելու նորմալի ուղղությամբ: Պատասխանը բազմապատկել 10^{27} -ով:

2043. 33 Վտ հզորությամբ լամպն առաքում է $2{,}5\cdot10^{14}$ Հց հաճախությամբ մեներանգ լույս: Քանի՞ ֆոտոն է արձակվում 1 վ-ում: Պատասխանը բազմապատկել 10^{-20} -ով:

2044. 100 Վտ հզորությամբ մեներանգ լույսի աղբյուրը որքա՞ն ժամանակում կառաքի $6{,}6\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ $2\cdot10^{23}$ ֆոտոն:

2045. Մթության մեջ երկար ժամանակ մնացած, մթությանը վարժված աչքը $6\cdot10^{-7}$ մ ալիքի երկարություն ունեցող լույսն ընկալում է $3{,}3\cdot10^{-17}$ Վտ հզորության դեպքում: Այդ դեպքում քանի՞ ֆոտոն է ընկնում ցանցաթաղանթի վրա 1 վ-ում:

www.atc.am

2046. Որքա՞ն է տեսանելի ճառագայթման ամենաերկար՝ $\lambda=7,5\cdot10^{-7}$ մ ալիքին (կարմիր լույս) համապատասխանող ֆոտոնի իմպուլսը: Պատասխանը բազմապատկել 10^{29} -ով:

2047. Որքա՞ն է այն ֆոտոնի հաճախությունը, որը $3,2\cdot10^{-19}$ Ջ ելքի աշխատանք ունեցող մետաղից պոկում է $3,4\cdot10^{-19}$ Ջ առավելագույն կինետիկ էներգիայով էլեկտրոն: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:

2048. Որքա՞ն է ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը (ν_{min}), եթե մետաղի ելքի աշխատանքը $3,3\cdot10^{-19}$ Ջ է: Պատասխանը բազմապատկել 10^{-14}-ով:

2049. Որքա՞ն է ցինկի ֆոտոէֆեկտի կարմիր սահմանին համապատասխանող ալիքի երկարությունը, որի ելքի աշխատանքը 4,125 էՎ է: Պատասխանը բազմապատկել 10^{7}-ով:

2050. Մետաղե թիթեղի վրա ընկնում է $4\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ մեներանգ լույս: Էլեկտրոնների հոսքը մետաղի մակերևույթից լրիվ արգելակվում է, երբ կասեցնող լարումը հավասարվում է 1 Վ-ի: Որքա՞ն է մետաղից էլեկտրոնի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել 10^{21}-ով:

2051. Ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը արծաթի համար 0,3 մկմ է: Որքա՞ն է արծաթից էլեկտրոնի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել 10^{20}-ով:

2052. Մետաղի մակերևույթից էլեկտրոնը պոկելու համար պետք է կատարել $3\cdot10^{-19}$ Ջ աշխատանք: Ի՞նչ կինետիկ էներգիայով է դուրս թռչում էլեկտրոնը մետաղից, եթե մետաղը լուսավորվում է $6\cdot10^{-7}$ մ ալիքի երկարությամբ լույսով: Պատասխանը բազմապատկել 10^{20}-ով:

